



MEMORANDUM



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ИСКУССТВ

МИНАС САРГСЯН

СТЕПАНОС  
НЕРСИСЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1985

ԸՆԹԵՐԱՆԱՐՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՄԻԱՍ ՍԱՐԳԱՅԱՆ

# ԱՏԵՓԱՆՈՍ ՆԵՐՍԻՒՅՑԱՆ

A 2/780



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1985

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ Հ. Վ. ԳԱՅԵՑՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխալորել գրախոսներ՝ բանասիրական  
գիտությունների դոկտոր Պ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆԸ և արվեստագիտության  
թեկնածու Վ. Հ. ՂԱԶԱՐՅԱՆԸ

## Ն 633ս


## Սարգսյան Մ. Ա.

Ստեփանոս Ներսիսյան/ Պատ. խմբ.՝ Հ. Վ. Գայ-  
ֆեճյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 148 էջ, 16 թ. նկ.:  
Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Արվեստի ին-տ.

Մենագրությունը՝ ներկայացնում է XIX դարի հայ նշանավոր  
նկարիչ Ստեփանոս Հակոբի Ներսիսյանի (1815—1884) կյանքի,  
հասարակական-մանկավարժական գործունեության և ստեղծագոր-  
ծությունների համառոտ, հանրամատչելի պատմությունը։ Աշխատու-  
թյան մեջ օգտագործված են արխիվային բազմաթիվ նոր նյութեր և  
մինչև այժմ անհայտ պատկերներ, որոնք հարստացնում և ընդլայ-  
նում են մեր պատկերացումը։ Հայ գեղարվեստական մշակույթի մեջ  
նկարիչ Ներսիսյանի կատարած առաջադիմական դերի մասին։  
Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին։

Ա  $\frac{4905000000}{703 \text{ (02)} - 85}$  87—84

ԳՄԴ 85.143 (2Հ) 1





Ստեփանոս Ներսիսյան

## ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԿԱՆ

XIX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի (1815—1884) գեղարվեստական ժառանգությունը կարեռ տեղ և խոշոր նշանակություն ունի: Հանդես գալով 1830—40-ական թթ., նա ստեղծել է իր ժամանակակիցների, անցյալի պատմական ու մշակութային գործիչների բազմաթիվ դիմանկարներ, ժողովրդի կյանքի ու կենցաղի թեմաներով սյուժետային պատկերներ, բնանկարներ և վիմագրություններ, որոնք նշանակալից ներդրում են հայ կերպարվեստի և, ընդհանրապես, ազգային գեղարվեստական մշակույթի մեջ: Աշխատելով միաժամանակ մանկավարժության բնագավառում, Ստ. Ներսիսյանը կատարել է խոշոր առաջադիմական դեր դպրոցական ծրագրերի մշակման, դասավանդման նոր մեթոդների կիրառման և երիտասարդ սերնդի գեղարվեստական դաստիարակության գործում:

Ստեփանոս Ներսիսյանի կյանքի և ստեղծագործությունների մասին մենագրական որեւէ աշխատություն առ այսօր գոյություն չունի: Նկարչի վերաբերյալ ընդհանրապես շատ քիչ է գրվել: Նրա կենդանության ժամանակ ոչ մի հոդված չի հրապարակվել: Արվեստագետի մահից հետո պարբերական մամուլում երեմն լույս տեսած հաղորդագրությունները և հիշատակումները շատ աղոտ պատկերացում են տալիս նրա մասին: Սովետական շրջանում հրապարակվել են քերպարյին-ամսագրային մի քանի հոդվածներ ու արխիվային փաստաթղթեր: Առանձնապես նշանակալից են Պ. Հակոբյանի հրապարակած «Երեք նորահայտ փաստարութղթ նկարիչ Ստ. Ներսիսյանի մասին» (1953) և «Ստ. Ներսիսյանի նա-

մակները» (1963) հոդվածները: Սակայն այդ ամենը, ամբողջուրյամբ վերցրած, դեռևս հնարավորություն չեն տալիս լիակատար պատկերացում կազմել բազմավաստակ նկարչի կյանքի, ստեղծագործության և հասարակական գործունեության մասին: Ե՛լ ավելի տխուր է այն փաստը, որ նրա ստեղծագործությունները ժամանակին հավաքված, մի տեղ կենտրոնացված շինելու պատճառով շատերը մեզ չեն հասել, մի քանիսն էլ ստորագրություն շահենալու պատճառով մնացել են «անհայտ նկարչի» անվան տակ:

Այդ պայմաններում ձեռնամուխ լինելով նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի մասին մենագրության ստեղծմանը, մեր առջև խնդիր ենք դրել ներկայացնել նրա կյանքը և գեղարվեստական գործունեությունը փաստական նյութերի հիման վրա: Այդ նպատակով մանրակրկիտ պրատումներ ենք կատարել Հայաստանի պետական պատկերասրանի, Մաշտոցի անվան մատենադարանի, Զարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանի համապատասխան արխիվներում, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Արխիվային վարչության պետական պատմական արխիվում, Լենինգրադի ՍՍՀՄ պետական պատմական արխիվում, ինչպես նաև Վրացական ՍՍՀ պետական պատմական արխիվում, վեր հանելով ու օգտագործելով այն հիմնական նյութերը, որոնք վերաբերում են նկարչին ու նրա գեղարվեստական-հասարակական-մասնակավարժական գործունեությանը: Մեզ համար որոշակի հետաքրքրություն են ներկայացրել նաև սովետական արվեստագիտական գրականությունը նույն շրջանի հայ, ոուս և արևմտաեվրոպական նկարչության մասին:

Ինչ վերաբերում է նկարչի գեղարվեստական ժառանգությանը, ապա դրա համար առաջնահերթ նշանակություն են ունեցել մեզ հասած այն բոլոր ստեղծագործությունները, որոնք սփռված են տարբեր թանգարաններում և որոնք մենք լուսանկարել ենք ավել ու գետեղել սույն աշխատության մեջ:

## Կ Յ Ա Ն Ք Ը

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Ի Ն

### ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍՄԱՆ ՏԱՐԻՆԵՐ (1815—1845)

Ստեփանոս Հակոբի Ներսիսյանը, իր իսկ վկայությամբ, ծնվել է 1815 թ. Երևանում, Հոգևորականի ընտանիքում: Նրա հայրը սարկավագ էր: XIX դարի սկզբներին ծնողները էրգրումից տեղափոխվում են ուստական կայսրության սահմանները և բնակություն հաստատում Երևանում: Թերեւ այս փաստն է նկատի ունեցել Կովկասի կառավարիչ Գ. Վ. Ռոզենը, որը 1835 թ. մարտի 17-ին Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտին գրած պաշտոնական նամակում Ստ. Ներսիսյանին ներկայացնում է որպես «Թուրքիայից մեր սահմանն անցած արզումցի հայ գաղթականներից» մեկը:

Սակայն երկար չի տևում մանուկ Ստեփանոսի խաղաղ կյանքը: Նա հազիվ 5 տարեկան էր, երբ մեռնում են նրա ծնողները: «Ի հնգամեայ հասակին որբացեալ ի ծնողաց», — գրում է նա 1837 թ.:

Բարեպաշտ մարդկանց օգնությամբ մանուկ Ստեփանոսը տեղափոխվում է Էջմիածնի Ժառանգավորաց դպրոցը, ուր ապրում և սովորում է որոշ ժամանակ: Խելոք և ուշիմ մանուկը այստեղ իր բնածին ընդունակություններով աշքի է ընկնում հասակակիցների մեջ: Նկատելով այդ, 1820-ական թթ. վերջերին, Հավանաբար 1828 թվականին, նրան տեղա-

փոխում են Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ուր սովորում է մի քանի տարի: 1831 թ. Ստ. Ներսիսյանն արդեն երրորդ դասարանում էր: Այդ ժամանակ նույն դասարանի ուսուցիչներից էր Ստեփանոս Նազարյանը՝ հետագայում հայ մշակույթի խոշոր գործիչ և «Հյուսիսափայլ» ամսագրի խմբագիրը:

Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվի Ներսիսյան դպրոցի ֆոնդում պահպանվել են այստեղ սովորած աշակերտների ցուցակները, որոնց մեջ մի քանի տեղ հիշվում է Ստ. Ներսիսյանի անունը: Մատյաններից մեկում կարդում ենք «...աշակերտք երրորդ դասարան, որ ուսանեին զաշխարհագրություն, զպատմություն և զքերականություն ուսւաց... Վարժապետ երրորդ դասարանի Ստեփանոս Նազարյանց»<sup>1</sup>:

Երիտասարդ ուսուցիչը, միաժամանակ, ուներ նկարչական ընդունակություններ, նկարում էր և գեղեցիկ արվեստների շերմ սիրահար էր: Հայտնի է, որ հայ անվանի հասարակական գործիչ Գեորգ Արծրունին՝ «Մշակ» թերթի խմբագիր Գր. Արծրունու հայրը, Հոլանդիայից բերած ներկերը նվիրում է Ստ. Նազարյանին՝ պատճեններ նկարելու համար:

Դպրոցի երրորդ դասարանի 16-ամյա աշակերտ Ստ. Ներսիսյանը, հավանաբար, գիտեր այդ մասին և, թերևս, այդ պատճառով էլ նա ավելի է կապվում ուսուցչի հետ: Զի կարելի բացառել և այն հանգամանքը, որ ուսուցիչ Ստեփանոս Նազարյանը դասերից գուրս՝ ազատ ժամերին, կարող էր զրուցել և գեղեցիկ արվեստների մասին, բորբոքելով պատճնի սաների մեջ հետաքրքրություն ու սեր կերպարվեստի նկատմամբ: Ստ. Նազարյանը, իսկապես, աշակերտների սիրելին էր: 18—19 տարեկան ուսուցչի մասին դպրոցի տեսուչ Հ. Ալամդարյանը 1831 թ. այսպես է գրում. «Ստեփանոսը հաջողությամբ պաշտոնավարում է Ներսիսյան դպրոցում, շատ առաջադիմում է լեզուներում և, մանավանդ, ընտիր բանաստեղծության մեջ»: Ստ. Նազարյանի բանաստեղծություններից մի քանիսը տպագրվել են ժամանակին: Դրանք հայրենասիրական բովանդակություն ունեն: Դրանցից մեկը, օրինակ, գրված Արեելյան Հայաստանը 1828 թ. Ուսուսաստանին

միանալու առիթով, հայտնում է այն միտքը, որ ազատագրված Հայաստան աշխարհը բերում է հույսի և լույսի նոր երազներ: Այդ խորը հայրենասիրական ոգին Ստ. Նազարյանը, բնականաբար, սերմանում էր իր սաների մեջ:

Ներսիսյան դպրոցում Ստեփանոսը հանդես է բերում բուռն սեր և ակնառու ընդունակություններ նկարչության մեջ: Դա չէր կարող իր վրա չհրավիրել նկարչության ուսուցիչ Վասիլեկի ուղաղրությունը: Նկարիչ Վասիլեկի ու նրա դասավանդման մասին ժամանակակիցները լավ կարծիք ունեին: Մշակութային անվանի գործիչ, պատմաբան Ալ. Երիցյանը վկայում է, որ Գևորգ Արքունին Ներսես Աշտարակեցուն գրած նամակում Վասիլեկին բնութագրում է որպես «ոռու լավ նկարիչ»<sup>2</sup>: Ահա այդ «ոռու լավ նկարչի» ղեկավարությամբ և, անկասկած, Ստեփանոս Նազարյանի խրախուսանքով պատանի Ստ. Ներսիսյանը ոչ միայն ձեռք է բերում նախնական գիտելիքներ նկարչության ու գեղեցիկ արվեստների մասին, այլև նրա մեջ՝ հոգու խորքում, նկարիչ դառնալու բուռն ցանկություն է առաջանում:

Սակայն այդ ժամանակ՝ 1830-ական թթ. սկզբներին, նկարչական դպրոց կամ գեղարվեստական կրթության որևէ օջախ Թիֆլիսում գոյություն չուներ:

1832 թ. հունիսի 26-ին ուսուցիչ Ստ. Նազարյանը թողնում է Ներսիսյան դպրոցը և մեկնում Դորպատ (Տարտու, Էստոնիա), բարձրագույն կրթություն ստանալու նպատակով: Նույն ժամանակ էլ Ստ. Ներսիսյանը ևս թողնում է դպրոցը և պատրաստվում է մեկնել Մոսկվա կամ Պետերբուրգ՝ կրթությունը շարունակելու համար: Բայց նա միջոցներ չուներ: Այդ պատճառով, 1833 թ. մարտին գրավոր դիմում է հայոց հոգևոր կառավարության անդամ արքեպիսկոպոս Ստեփանոս Արղությանին, խնդրելով միջնորդել կաթողիկոս Հովհաննես Կարբեցու առաջ, իրեն Մոսկվա ուղարկել և որպես որբի, որդեգրել տալ Լազարյաններին, Լազարյան ճեմարանում սովորելու համար: Մաշտոցյան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանված այդ խնդրագրում Ստ. Ներսիսյանը գրել է այսպես.

«Բազմերախտ և մեծախնամ տեսող իմոյ Ստեփան-նոսի սրբազն արքեպիսկոպոսի Արդութեանց անդամոց Հոգեոր կառավարութեան Հայոց Վրաստանի Խնդիր

՚ի ստորագրեալ ծառայէս.

Ամենայն անցք կենաց իմոց յօրէ մանկութեան իմոյ և այսր յայտնի գոլով տէրութեան Զերում՝ որպէս և այժմեան վիճակ իմ, վասն որոյ և ավելորդ համարիմ յերկարել բանս զնոցանէ. զի ձեռնասուն Զեր գոլով զհանգամանս իմ Դուք առավել գիտէք, քան զայլս, և զի երախտիք և անհուն խնամարկութիւնք Զեր մեծ են եղեալ՝ ի վերայ իմ մինչև ցայսօր, վասն որոյ և Զեղ համարձակիմ յայտնել զկարիս և ցանկութիւնս իմ և յուսամ ընդունել, զոր խնդրեմ իբրև ՚ի բարերար հօրէ:

Ժամանակ աւուրց իմոց անցանէ ՚ի զուր, և ես չգիտեմ, թէ զապագայ կեանս իմ զիա՛րդ ունիմ վարել. սմին իրի ցանկանալով ցանկանալ լինել՝ ի Մոսկով ընդ Հովանեաւ Ճեմարանի ազգախնամ Տեարց Եղիազարեանց. խնդրեմ պաղատանօք մեծաւ ի սրբազանութենէ Զերմէ միջնորդ լինել առ վեհափառ սրբազն կաթողիկոսն Յովհաննէս, թերևս ողորմեալ բազմամեայ որբութեան իմոյ՝ առաքեսցէ զիս ՚ի Մոսկով, գրելով առ Եղիազարեանսն թուղթ յորդորանաց առ ՚ի յորդեգրել և զիս ՚ի թիւս բազմաթիւ որդուց իւրեանց: Ես զայս բարերարութիւն Ճեր ոչ մոռացաց և թէ տէր մի՛ արասցէ, ես ապերախտեցայց, այսու ամենայնիւ Աստուած և Տէր երկնից ո՛չ մոռասցի, զոր առնէքդ, զի բարերարութիւնք երախտիք ո՛չ զնշեսցին երբեք՝ ի մատենէ ժամանակաց: Աղէ՛, արարէ՛ք, սփռեցէ՛ք զանձրիւ ողորմութեան Զերոյ ՚ի վերայ իմ և Հոգւով և մարմնով կացուցէ՛ք Զեղ երախտապարտ. և ես կամ մնամ բազում յուսով և սպասելով բաւականութեան իրիք

Մեծախնամ Տէրութեան Զերոյ ամենախոնարհ ծառայ Զեր Ստեփաննոս Ներսիսեանց:  
՚ի 13 մարտի 1833 ամի ՚ի Տփիսս»<sup>3</sup>:

Այս խնդրագիրը, ինչպես երկում է, ընթացք Նի ստացել։ Ստ. Ներսիսյանը մնում է Թիֆլիսում և շարունակում է միջոցներ որոնել իր գեղարվեստական ձգտումներն իրականացնելու համար։ Ծնողներից ու հարազատ աղքականներից զուրկ պատանին ստիպված սկսում է հաճախել այն ժամանակ քաղաքում գործող նկարիչների արվեստանոցները։

Վերջապես նա կապվում է այդ արվեստագետներից մեկի՝ իտալացի նկարիչ Ջոբռիի հետ և դառնում նրա աշակերտը, արվեստանոցում ժառայություններ կատարելու պայմանով։ Ջոբռին, սակայն, նշանավոր նկարիչ չէր։ Նա Թիֆլիս էր եկել պատվերներ կատարելու և փող վաստակելու համար։ Սակայն լինելով վարպետ նկարչության մեջ, նա ճանաշում ուներ այդ փոքրիկ քաղաքում։ Դատելով ժամանակակիցների վկայությամբ՝ նկարիչ Ջոբռին եղել է խստապահանջ բնակվորությամբ մարդ։ Նա իր հայ աշակերտին օգտագործում է որպես ծառա և հանձնարարում է նրան կատարել ամեն տեսակի սև աշխատանք, ընդհուպ մինչև տընտեսական ու տնային-կենցաղային առօրյա գործեր։ Նկարչություն սովորելու ձգտումով համակված 18—19-ամյա պատանին համբերությամբ կատարում է վարպետի բոլոր հանձնարարությունները և միայն ազատ ժամերին՝ դանդաղ ու համառորեն, մոտիկից ծանոթանում է հաստոցային նկարչության միջոցներին, սովորում է նախաներկել (գրուտել) կտավը, նկարել յուղաներկով և վարժվում է գծանկարչության մեջ։ 1834 թ. նկարիչ Ջոբռին որոշում է մեկնել Պետերբուրգ։ Տեղեկանալով այդ մասին, Ստ. Ներսիսյանը և ցանկություն է հայտնում նրա հետ Պետերբուրգ մեկնել, այնտեղ մասնագիտական հիմնավոր կրթություն ստանալու համար։ Իտալացի վարպետը, տեսնելով հայ պատանու բուռն ցանկությունը և ընդունակությունները նկարչության մեջ, համաձայնվում է, և 1834 թ. ուշ աշնանը միասին մեկնում են Պետերբուրգ։

1835 թ. հունվարին նրանք արդեն Պետերբուրգում էին։ Այստեղ Ստ. Ներսիսյանը բաժանվում է իր տիրոջից և մտա-

դրվում է գիմել գեղարվեստի ակադեմիայի վարչությանը՝  
ակադեմիա ընդունվելու համար:

Այդ ցանկությունը պատառու մոտ պատահական չէր:  
Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի մասին նա լսել էր  
դեռևս Թիֆլիսում։ Այն ժամանակ այստեղ աշխատում էին  
մի քանի ուսու գունանկարիչներ, փորագրող նկարիչներ  
(գրավլյորներ) և ճարտարապետներ, որոնք մասնագիտական  
կրթություն էին ստացել ակադեմիայում։ Նրան, անկասկած,  
հայտնի էր, որ գիմանկարիչ Հակոբ Հովհաննյանը դեռևս  
1829 թ. դիմել էր գեղարվեստի ակադեմիայում սովորելու  
համար, բայց չէր ընդունվել տարիքի մեծության և այն ժա-  
մանակ ընդունելություն վիճելու պատճառով։ Նրան անժա-  
նոթ չէր կարող լինել և այն, որ նկարիչ Հակոբի կրտսեր եղ-  
բայրը՝ իր հասակակից Աղաթոն Հովհաննյանը, նույնպես  
պատրաստվում էր Պետերբուրգ մեկնել գեղարվեստի ակա-  
դեմիայում սովորելու համար։ Պետերբուրգում արդեն նա  
տեղեկանում է, որ այստեղ սովորում են հայազգի մի քանի  
պատանիներ, այդ թվում Հովհաննյանը։ Այլազովսկին և ուրիշներ։

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի նկատմամբ  
հայ արվեստասեր երիտասարդության սերը և այնտեղ սովո-  
րելու նրանց բուն ձգտումը կապված էր, ամենից առաջ,  
ուսուական գեղարվեստական կրթության բարձր մակարդակի  
ձանաշման հետ։ Խսկապես, Պետերբուրգի գեղարվեստի ակա-  
դեմիան այդ ժամանակ միակ բարձրագույն ուսումնական  
հաստատությունն էր Ռուսաստանում, որտեղ պատրաստվում  
էին կերպարվեստի երեք հիմնական տեսակների՝ գունա-  
նկարչության, գրաֆիկական նկարչության, քանդակագոր-  
ծության, ինչպես նաև ճարտարապետության բարձրորակ  
կադրեր։ Գեղարվեստի ակադեմիան միաժամանակ դարձել  
էր կերպարվեստի խոշոր կենտրոն Ռուսաստանում։ Արվես-  
տի, ինչպես և ճարտարապետության ոլ մի հարց առանց գե-  
ղարվեստի ակադեմիայի գիտության և թուլլության չէր  
լուծվում։ Ինչ վերաբերում է գեղարվեստական կրթության  
մեթոդներին, ապա դրանց հիմքում դրված էր անտիկ շրջանի

և, ընդհանրապես, անցյալի դասական արվեստի լավագույն ձևերի ու ավանդների յուրացման սկզբունքը։ Առաջնակարգ նշանակություն տալով պլաստիկական անատոմիային, բնականից նկարելուն և հեռանկարչության խնդիրների տիրապետմանը, ուստական գեղարվեստի ակադեմիան բարձր էր պահում նրա պարծանքը կաղմող գծանկարի և կոմպոզիցիայի կուլտուրան։

Այդ ամենը գիտեր և լավ էր հասկանում 20-ամյա Ստ. Ներսիսյանը։ Թերեւս այդ պատճառով էլ նա ամեն կերպ ձըգտում էր ընդունվել և սովորել հենց այդ գեղարվեստի ակադեմիայում։ Թե ինչպիսի տառապանք է կրել իր նպատակը իրագործելու համար, այդ մասին ավելի մանրամասն հաղորդում է նրա վաղեմի ընկեր Խաչատուր Աբովյանը, որը պատահաբար հանդիպում է նրան Պետերբուրգում։ Այդ հանդիպումը տեղի է ունենում 1835 թ. Հունվարի 22-ին մի հայ վարդապետի տանը։ «Չեմ ժխտում,—գրում է և. Աբովյանը 1830 թ. Հունվարի 22-ին բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկուն ուղղած գերմաներեն միջնորդական նամակում,—որ ես իսկապես ցանկանում եմ նրան տեսնել, բայց ինչպիսի՝ հանդիպում։ Ես գտնում եմ նրան մի վարդապետի մոտ, նախասենյակում՝ խորասուզված մտքերի մեջ։ Ես ողջունում եմ նրան, որպես արվեստագետի այնպիսի հարգանքով և ուշադրությամբ, ինչպես վայել է այդ դասակարգին, և առաջարկում եմ նստել ինձ մոտ։ Խեղճ տղան շի կարողանում սկզբում հասկանալ, թե ո՞վ է նրա հետ այդպես սիրալիր վարվողը և, ինչպես ես նկատում եմ, սպասում է անխիղճ վարդապետի թույլտվությանը, թե իրավունք ունի՝ արդյոք սենյակ մտնելու և ինձ մոտ նստելու, ինչպես որ ես ցանկանում էի։ Նա թույլ է տալիս միայն իմ խնդրելուց հետո։ Քաղաքավարությանը հակառակ շնորհու համար, ես միասմանակ մոռանում եմ նրան, որպեսզի տանտերը դրա մեջ ոչ մի կասկածելի բան շտեսնի։ Երբեմն՝ երբեմն խոր հառաջանքներ էին գալիս դեպի իմ կողմը, սիրտս զգում էր նրանց նշանակությունը։ Այդ, անշուշտ վիրավորված, բայց հուսալի զգացումի լեզուն էր, որով նա խոսում էր ինձ հետ, առանց

բառերի, չիմանալով թե ո՞վ եմ ես, որ այնպես սրտիս մոտ եմ ընդունում նրա ճակատագիրը։ Վարդապետի դուրս գալուց հետո բռնում եմ նրա ձեռքը, նկատում եմ նաև նրա սև, ուշագրավ աշքերի արտասուրը և նրա բերանից իմանում եմ իմ սրտի համար ամենացավալի բաներ... Ես մի բոպե միայն մխիթարեցի նրան, միայն հույսերով թեթևացրի նրա ցավերը»<sup>4</sup>...

Այդ զրուցից տեղեկանալով նրա վիճակի ու Պետերբուրգ գալու պատճառի մասին, Խ. Աբովյանը դրում է. «Նկարչության բուռն սիրուց տարված նա թողնում է իր հայրենիքը, ազգականներին, մի իտալացի նկարչի ծառա է դառնում և այդ անվան տակ տանելով ամենադաժան շարշարանքները իր տիրոջ երեսից, հասնում է Պետերբուրգ։... Հազիվ այստեղ հասած, նա իր տիրոջն ասում է, թե այլևս չի կամենում իր հայրենիքը վերադառնալ։ Նա շնորհակալ է երկնքից և իր տիրոջից, որ այստեղ է եկել և թե նա ցանկանում է կամ այստեղ մեռնել, կամ վերադառնալ իբրև արվեստագետ իր ազգի համար»։

Տեղյակ պահելով այդ մասին, Խ. Աբովյանը խնդրում է բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկուն և ակադեմիկոս Ֆ. Պարրուտին՝ ամեն կերպ օժանդակել երիտասարդին գեղարվեստի ակադեմիա ընդունվելու և այնտեղ իր սիրած արվեստը սովորելու համար։ Խ. Աբովյանը նույնիսկ առաջարկում է իր գործերով լզբաղվել, այլ ռմբողջապես աշխատել իր հայրենակից ընկերոջ գործը հաջողացնելու համար։ «Ես ինձ մոռացել եմ,—գրում է նա նույն նամակում,—ինչ որ արվելու է, այժմ պետք է անել նրա համար։ Նա իմ հայրենի քաղաքիցն է, հետեւապես և իմ եղբայրը։ Այժմ այլևս հաշվի չեմ առնի, եթե ինձ արհամարհեն այն կշտամբանքների համար, որ ստացել են իմ հայրենակիցները, իբրև շահամոլ մարդիկ։ Այո՞՛, ես էլ եմ շահամոլ, սակայն սուրբ գործի համար։ Ես նրանից ավելի դժբախտ կլինեմ, եթե տեսնեմ, թե ինչպես է ոշնչանում նրա տաղանդը... Ով գիտե թե ինչ տաղանդ է թաքնված նրա մեջ։ Ո՞չ, Պետերբուրգում կարող է և պետք է կատարվի նրա ցանկությունը... Ես ինձ կծախեի, եթե դրանով կարողա-

նայի օգնել նրան որևէ կերպ։ Իմ ազգը նվազ շափով է տես-  
նում ապագան, այդ բանն ասում եմ փորձի հիման վրա։  
Հանգիստս կորել է։ Բարի եղեք որոշել իմ ճակատագիրը, որ-  
պես այդ երիտասարդ մարդու ճակատագիր։

Խ. Աբովյանի այսօրինակ զերմեռանդ միջնորդությունը  
և նրան գեղարվեստի ակադեմիա ընդունել տալու ցանկու-  
թյունը բխում էր ոչ միայն այն բանից, թե Ներսիսյանը իր  
հայրենակիցն էր ու «հայրենի քաղաքից», այլև այն խորը  
համոզմունքից, որ իր հայրենիքը զարգացման ու առաջադի-  
մության համար կարիք ուներ արվեստագետների և այդ  
արվեստագետներից մեկը պետք է դառնար Ներսիսյանը։  
«Որովհետև որոշ շափով ինձ հայտնի է իմ արևելյան հայրե-  
նակիցների—հայերի և ուրիշների մտածելակերպը և կյան-  
քը,—գրում է Խ. Աբովյանը,—ուստի բազմակողմանի փորձե-  
րով ապացուցված եմ համարում, որ նրանք ուրիշ ոչ մի այլ  
միջոցով չեն կարող ամենից լավ և արագ իսկական կրթության  
և լուսավորության հասնել, քան գեղեցիկ արվեստների՝ բանաս-  
տեղծության, երաժշտության ու նկարչության միջոցով։ Եվ  
երբ ես եվրոպայում առաջին անգամ տեսա այդ արվեստներն  
իրենց իսկական լույսով և զգացի նրանց ներգործությունը  
նախ և առաջ եվրոպացիների, և հետո էլ իմ վրա, իմ առա-  
ջին և ամենագեղեցիկ ցանկությունն այն եղավ, որ ես աշ-  
խատեմ տարածել այդ արվեստներն իմ հայրենի երկրում։»  
Խ. Աբովյանը մտադրություն է ունեցել նույնիսկ «Դրանք փո-  
խադրել ասիական երկրները։ Եթե Ասիան, — գրում է նա 1835 թ.  
հունվարի 22-ին, — պիտի ստանա լուսավորության իսկա-  
կան լույսը, ասում էի ես իմ մտքում, ապա այդ բանը մի այլ  
միջոցով չեր կարող ամենից լավ և արագ կատարվել, քան  
դրանց միջոցով, և իմ այս կարծիքը, ավելի հաճախ, քան մեկ  
անգամ, հաստատվել է դրանք իմացողների կողմից։ Ո՞վ չի  
ճանաչում այն երկնային, սիրտ ազնվացնող, հմացիչ ուժը,  
որ գտնվում է արվեստների մեջ և ո՞ր հոգին կարող է ամենից  
ավելի զգայուն լինել նրանց հանդեպ, եթե ոչ արևելցու կրա-  
կոտ, երևակայությամբ հարուստ հոգին...»<sup>5:</sup>

Խ. Աբովյանի, ինչպես և բարձրաստիճան անձանց միջնորդությունները, սակայն, դրական արդյունք չեն տալիս: Խ. Աբովյանն էլ շուտով մեկնում է Պետերբուրգից: Այդ պատճառով, միայնակ և անօգնական, իր տիրոջից՝ նկարիչ Զոբոլիից հեռացած, Ստ. Ներսիսյանը ստիպված դիմում է այդ ժամանակ Պետերբուրգում գտնվող Կովկասի կառավարիչ բարոն Գ. Վ. Ռոզենին, խնդրելով նրա միջնորդությունը:

ՍՍՀՄ կենտրոնական պետական պատմական արխիվի գեղարվեստի ակադեմիայի ֆոնդում պահպանվում է Գ. Վ. Ռոզենի՝ մարտի 17-ի միջնորդական նամակը, ուր նա ակադեմիայի պրեզիդենտ Ա. Ն. Օլենինին գրում է. «Թուրքիայից մեր սահմանն անցած Արգրումցի գաղթականներից հայ Ստեփան Ներսեսովը, որն ունենալով արվեստի մեջ կատարելագործվելու բուռն ցանկություն, դեռ Թիֆլիսում իտալացի Զոբոլիի մոտ զբաղվել է նկարչությամբ և այդ նպատակի համար Զոբոլիի հետ մեկնել Պետերբուրգ: Բայց հեռացել է նրանից: Կատարյալ չքավորության պատճառով նա զրկված է մնացել ոչ միայն իր ցանկությունը բավարարելուց, այլև ապրուստի միջոցներից: Եվ այդ պատճառով խնդրում է իմ միջնորդությունը՝ նրան պետության հաշվին գեղարվեստի ակադեմիա ընդունելու համար: Տեղյակ լինելով այդ հայ Ներսեսովի ծայրահեղ ծանր վիճակին, և այն, որ նա իրեն նվիրել է օգտակար արվեստին ու վճռել՝ այդ բնագավառում կատարելագործվել ու դրա համար այնքան հեռավոր ճանապարհ է կտրել, և հաշվի առնելով, որ Թուրքիայից բոլոր գաղթականները անցել են ողորմած թագավորի հովանավորության ներքո, իմ պարտքն եմ համարում խոնարհաբար խնդրել Զերդ բարձր գերազանցությանը, երջանկացնել Ներսեսովին՝ ընդունելով նրան գեղարվեստի ակադեմիա պետության հաշվին սովորողների թվում»<sup>6</sup>:

Ա. Ն. Օլենինը հանձնաբարում է ակադեմիայի տեսուչ Ա. Կրատովին «Քննության ենթարկել Ներսեսովին օժանդակ գիտություններից և նկարչությունից՝ հաստատված կարգի համաձայն»: Ծանոթանալով Ստ. Ներսիսյանի գիտելիքներին,

Իր զեկուցագրում տեսուշը հայտնում է. «Անձամբ քննելով  
հայ Ներսեսովին ակադեմիա ընդունվելու համար պահանջ-  
վող առարկաներից, պարզեցի, որ նրան ուսաց լեզուն թույլ  
կարդալուց և գրելուց բացի ուրիշ ոչինչ չեն սովորեցրել» և  
որ «պետության հաշվին ակադեմիստներ ընդունելու ազատ  
տեղեր չկան», ուստի ակադեմիա ընդունելու համար նա  
պետք է վճարի տարեկան 750 ռ.: Նույն ձեռվլ էլ պատասխան  
է տրվում Գ. Վ. Ռոզենին՝ նրա միջնորդությանը<sup>7</sup>:

Ներսիսյանը, իհարկե, չէր կարող տալ տարեկան 750 ռ.  
ուսման վարձ, իսկ Գ. Վ. Ռոզենը դրանից հետո այլևս չի  
գրադփում Կովկասից եկած հայ պատանու հարցով:

Ուսումնատենչ պատանին, սակայն, չի հուսահատվում:  
Նա մնում է Պետերբուրգում և որոշում է պատրաստվել հա-  
ջորդ տարի ընդունվելու համար: Այստեղ ծանոթացած հայ-  
ուրենակիցների խորհրդով նա դիմումներ է գրում Հոռոմում ու  
ելքոպական այլ քաղաքներում ապրող հայ մեծատումներին,  
խնդրելով նրանցից նյութական օգնություն: Սակայն նրանք  
էլ չեն արձագանքում: «Ահա դրանից հետո,—գրում է Ստ.  
Ներսիսյանը,—շվարելով ու չունենալով այստեղ որևէ մի ծա-  
նոթ, խնդրամատույց եղա «Կոմիտեո օրենստվա պոռշրենիէ  
խուղոժնիկով»: Նրանք էլ ստանալով իմ խնդիրը, ինձ հնա-  
րավորություն տվեցին գնալ և օրական երկու ժամ պարապել  
ակադեմիայում, տվեցին նաև ինձ ոռնիկ ամիսը 15 ռ. թղթա-  
դրամով՝ բնակարանի վարձի և մարդկային գոյության հա-  
մար պահանջվող ամեն տեսակի ծաղքերի համար»<sup>8</sup>:

Ստ. Ներսիսյանը 1835 թ. դիմում է Պետերբուրգի «Նկա-  
րիչներին խրախուսող ընկերությանը», խնդրելով ցույց տալ  
իրեն նյութական օգնություն, այդ նպատակի համար ներ-  
կայացնելով մինչև այդ կատարած նկարչական մի քանի աշ-  
խատանքներ: «Նկարիչներին խրախուսող ընկերության» ար-  
խիվում պահվող 1834—1835 թթ. հաշվետվության մեջ կա  
հետևյալ արձանագրությունը. «Իրեն օգնություն ցույց տալու  
խնդրանքով ներկայանում է մեզ Հայաստանում ծնված հայ  
Ներսեսովը, որը նկարչության արվեստը ուսումնասիրելու

Համար թողել է հայրենիքը, մեկնել այստեղ և ապրում է ծայր աստիճան անմխիթար վիճակում: ...Նկատի ունենալով նրա ներկայացրած նախնական փորձերը, կոմիտեն որոշում է ներսեսովին տալ միանվագ օգնություն 50 ռուբլի և կայսերական ակադեմիա ուղարկել 30 ռուբլի այն հաշվով, որ ներսեսովին տրվի տոմսակ նկարչական դասերի պարապմունքներին հաճախելու համար»<sup>9</sup>:

1835 թ. գարնանից Ստ. Ներսիսյանը սկսում է հաճախել գեղարվեստի ակադեմիայի միայն գծանկարչության դասերին: Այդ տոմսակը, միաժամանակ, իրավունք է տալիս նրան անվճար հաճախելու գեղարվեստի ակադեմիայի շենքի ներքնաշրկում տեղավորված թանգարանը, որը այդ ժամանակ գրադարանի հետ բաց էր միայն ուսանողության համար:

Այստեղ պահպատմ և ցուցադրվում էին անցյալի նշանավոր նկարիչների ու քանդակագործների շատ բնօրինակներ, ճարտարապետական նախագծեր, ինչպես նաև անտիկ շրջանի և արևմտաեվրոպական երկրների քանդակագործների լավագույն ստեղծագործությունների պատճեններ, գրաֆիկական և կիբառական արվեստի գործեր: Այստեղ էին պահպանության հանձնվում գեղարվեստի ակադեմիայի ուսանողների ակադեմիական աշխատանքները, դիպլոմային-ավարտական ստեղծագործությունները, գնված կամ պարզեատրված կերպարվեստի աշքի ընկնող գործերը:

1830-ական թթ. ակադեմիայի ուսանողները կարող էին տեսնել իրենց նախորդների լավագույն աշխատանքները, հատկապես XVIII—XIX դարերի ուսւանակարիչներ Ա. Պ. Լուենկոյի, Պ. Ի. Սոկոլովի, Ն. Ե. Եգորովի, Վ. Կ. Շերտուի, Ա. Մ. Իվանովի, Օ. Ա. Կիպրենսկու, Ֆ. Ա. Բրունիի, Կ. Պ. Բրյուլովի, Ա. Ա. Իվանովի և շատ ուրիշների գրաֆիկական ու գունանկարչական ստեղծագործությունները: Մարդկային մարմնի անատոմիայի լավ իմացության վրա հիմնված և բարձր վարպետությամբ կատարված աշքի ընկնող այդ ստեղծագործությունները ծառայում էին ընդօրինակության և պատճենահանումների համար՝ ակադեմիայի սաների կողմից:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ակադեմիայի փորագրական դասարանն ավարտած նկարիչ-փորագրողներ Ե. Պ. Զեմեսովի, Ի. Ա. Բերսենկի, Գ. Ի. Սկորոդումովի, Կ. Վ. Զեսկիի, Ս. Ֆ. Գալակտիոնովի, Ֆ. Ի. Խորդանի, Ն. Ի. Ռատկինի և ուրիշների գրաֆիկական ստեղծագործությունները, որոնք փորագրական արվեստի դասական օրինակներ են:

Գեղարվեստի ակադեմիայի թանգարանում լայնորեն ցուցադրվում են անտիկ արվեստի և արևմտաեվրոպական քանդակագործության նշանավոր ստեղծագործությունների բազմաթիվ ընդօրինակություններ, որոնք ճանաչողական մեծ նշանակություն ունեն: Այս, ինչպես և արևելյան ժողովուրդների մշակույթի այստեղ ներկայացվող օրինակների հետ մոտիկից ծանոթանալը նպաստում է Ստ. Ներսիսյանի ընդհանուր զարգացմանը և դասական արվեստի նկատմամբ նրա կողմնորոշմանը:

Սկսնակ նկարչի գեղարվեստական կրթությանը մեծ շափով նպաստում են նաև ակադեմիայի սրահներում հաճախակի կազմակերպվող՝ մասնավորապես ակադեմիական ցուցահանդեսները:

Վեց ամիս հետո՝ 1835 թ. աշնանը, նա նորից կանգնում է փակուղու առաջ՝ սպառվում են նրան տրված առանց այն էլ չնշին նյութական միջոցները: Նա զրկվում է օրվա ապրուստի հնարավորությունից, բայց չի թողնում նկարչության դասերը՝ շարունակում է հաճախել դասերին և բարեխնդորեն կատարել ուսուցիչների բոլոր հանձնարարությունները:

Ուրիշ ելք շգտնելով, նա նորից դիմում է «Նկարիչներին խրախուսող ընկերությանը», խնդրելով որոշ օգնություն: «Նկարիչներին խրախուսող պետերբուրգյան ընկերությունը» 1835 թ. հոկտեմբերի 14-ին որոշում է կայացնում՝ վեց ամսով ևս երկարաձգել Ստ. Ներսիսյանին տրվող նյութական օդնությունը: Այս անգամ նրան տրվում է 15 ոուրլի ապրուստի համար և 30 ոուրլի ուսման վարձ: Ապրելով ծայր աստիճան սուլ պայմաններում, Ստ. Ներսիսյանը շարունակում է

Համառորեն պարապել նկարչությամբ և հասնում է որոշակի արդյունքի՝ նա արագորեն առաջադիմում է:

1836 թ. գարնանը Ստ. Ներսիսյանը կրկին դիմում է գեղարվեստի ակադեմիայի վարչությանը՝ խնդրելով իրեն ընդունել, նկատի ունենալով իր առաջադիմությունը նկարչության մեջ: Նրան միջնորդում է Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության երրորդ բաժանմունքի պետ Ա. Կ. Բեկենդորֆը, որը տեսնելով երիտասարդ նկարչի աշխատանքները, 1836 թ. մարտի 23-ին գրում է պրեզիդենտին. «Մեռած սարկավագ Հակոբի որդի Ստեփան Տեր-Ներսիսովը 21 տարեկան, երկար ժամանակ սովորել է լավորակ նկարիչների մոտ և այժմ թախանձագին խնդրում է իմ միջնորդությունը, իր տաղանդի հետագա լավագույն կրթության համար իրեն ընդունել տալ գեղարվեստի ակադեմիա, այժմ գոյություն ունեցող կարգի համաձայն: Տեղյակ լինելով գեղեցիկ արվեստների նկատմամբ ունեցած հովանավորությանը և զարգացմանը նպաստելու Զեր Հակմանը, ևս պատիվ ունեմ խոնարհաբար խընդրել Զերդ բարձր գերազանցությանը՝ ցուց տալ բարյացակամ աշակցություն Տեր-Ներսիսովի ցանկությունը կատարելու խնդրում»<sup>10</sup>: Հինգ օր հետո՝ մարտի 28-ին, գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտ Ա. Ն. Օլենինը պատասխանում է. Ստ. Ներսիսյանը «...կարող է ընդունվել կայսերական գեղարվեստի ակադեմիա... նախօրոք ամեն տարի 750 ռ. ուսման վարձ վճարելու պայմանով»<sup>11</sup>: Այդպիսով, ուսումնատենչ, բայց աղքատ ու անօգնական սկսնակ նկարիչը 1836 թ. ևս դուրս է մնում գեղարվեստի ակադեմիայից: Դա շատ է դառնացնում նրա երիտասարդ հոգին: Սակայն Ներսիսյանը այս անգամ էլ չի հուսահատվում: Նա մնում է Պետերբուրգում և շարունակում է ապրել «Նկարիչներին խրախուսող ընկերության» կողմից ամսական 15 ռ. տրված թոշակով և օրական 2 ժամ հաճախում է գծանկարչության դասերին: Նա, միաժամանակ, լինում է էրմիտաժի և ակադեմիայի պատկերասրահներում, նկարիչ-ընկերների տներում և նրանց հետ դիտում մասնավոր անձանց գեղարվեստական հավա-

քածուները, մոտիկից ծանոթանալով կերպարվեստի հին ու  
նոր ստեղծագործություններին:

Ամբողջապես նկարչությամբ տարված Ստ. Ներսիսյանը,  
անշուշտ, ուշադրությամբ է դիտել 1835 և 1836 թթ. ամեն-  
ամյա ակադեմիական աշնանային ցուցահանդեսները, ուր  
ցուցադրվում էին գլխավորապես ակադեմիայի պրոֆեսոր-  
ների նկարչական ու քանդակագործական ստեղծագործու-  
թյունները: Նրան չէին կարող չուրախացնել 1836 թ. այստեղ  
ցուցադրված ակադեմիայի ուսանող հայրազգի Հովհաննես: Այլա-  
զովսկու ծովանկարները, որոնց համար սկսնակ ծովանկա-  
րիչը ստանում է երկրորդ կարգի ոսկե մեդալ: Շատ հավա-  
նական է, որ հենց այդ ժամանակ էլ Ստ. Ներսիսյանը ծանո-  
թանում է հայրենակցի հետ, որը և պատճառ է դառնում  
հետագայում ասելու, թե ինքը ակադեմիայում սովորել է  
Հովհաննես: Այլազովսկու հետ<sup>12</sup>:

Սակայն նրա վրա ամենից ավելի կարող էր տպավորու-  
թյուն թողնել ուսա մեծ նկարիչ Կարլ Պավլովիչ Բրյուկովի՝  
իտալիայում նկարած «Պոմպեյի վերջին օրը» մեծակտավ  
պատկերը (1833), որը Հռոմում, Միլանում և Փարիզում փա-  
ռավոր ցուցադրվելուց հետո, 1836 թ. ցուցադրվում է Պե-  
տերբուրգի գեղարվեստի ակադեմիայում: Դա, իսկապես,  
դառնում է ուսական արվեստի մեծ տոնը: Արվեստասեր  
հասարակությունը խմբված պատկերի առաջ խոսում, վի-  
ճում, մտքեր է փոխանակում:

Այդ պատկերը առանձնապես հիացնում է երիտասար-  
դությանը, մասնավորապես ակադեմիայի սաներին: Նրանք  
լավ էին հասկանում, որ ուսական պատմական նկարչության  
մեջ այդ պատկերով փաստորեն սկսվում է զարգացման նոր  
շրջան: Այդ նոր շրջանի բնորոշ կողմն այն էր, որ պատմա-  
կան թեմայով նկարի մեջ գլխավոր հերոսը դառնում է ոչ թե  
անհատը, այլ ժողովուրդը: Հոգեհարազարտ է և պատկերի  
հիմնական գաղափարը՝ սիրո և անձնավոհության զգա-  
ցումը: Վեզուվ լեռան հրաբխից և երկրաշարժից կործանվող  
քաղաքի մարդիկ, լինելով վտանգի մեջ, փորձում են այդ  
ահեղ ժամին միմյանց օգնել: Դա ժամանակի առաջադիմա-

կան աշխարհայացքի արտացոլումն էր պատմական նկարչության մեջ։ Տեղի է ունենում ահավոր ողբերգություն, որը, սակայն, չի հուսալքում, չի տիրեցնում դիտողին։ Բնության կույր տարերքի դեմ մարդկանց գործադրած ջանքերը ամրապնդում են դիտողի ողին, որը և՛ հուզում է, և՛ հիացնում։ Պատմության և հնագիտության նյութերի հիման վրա ստեղծված «Պոմպեյի վերջին օրը» հանճարեղ պատկերը միաժամանակ գերում է դիտողին գունանկարչական բարձր կուլտուրայով, կոմպոզիցիայի, մարդկանց ֆիգուրների, գործողության, առարկաների և միջավայրի պատկերման դասական կատարելությամբ։

Այդ ամենը տեսնում, լսում և հասկանում էր Ստ. Ներսիսյանը։ Սակայն նրա արագ առաջադիմությանը լրջորեն խանգարում էին նյութական աննպաստ պայմանները։ «Նկարիչներին խրախուսող ընկերությունից» ստացած ամսական 15 ռ. օգնությունը, որի մի մասը տալիս էր բնակարանի վարձ, ոչ միայն չէր բավարարում, այլև հաճախ օրերով նա մնում էր քաղցած։ Ստ. Ներսիսյանը լավ էր հասկանում, որ ազատ և հիմնովին աշխատելու և ամբողջապես ստեղծագործությամբ զբաղվելու համար անհրաժեշտ էր, նախ և առաջ, կարգավորել իր նյութական պայմաններ՝ գտնել ապրուստի կայուն միջոցներ։ Այդ նկատառումով Ստ. Ներսիսյանը 1837 թ. հունիսի 7-ին նամակով դիմում է մեծահարուստ Խաչատուր Հովհակիմի Լազարյանին՝ խնդրելով իրեն որդեգրել, քանի որ ինքը ծնողներ չունի, և դրանով ապահովել իր կանքը հայ արվեստին ծառայելու համար։ «Որդի գոլով ուրումն Յակովայ Տեր-Ներսիսյանց երեանցւոյ, ծնեալ 1815-ին և ի հինգամյա հասակի որբացեալ ի ծնօղաց՝ դեղերիմ ի բազմավիշտ տանջանս, — գրում է նա այդ նամակում, մանրամասն պատմելով իր կյանքի տիսուր անցքերը, — դեղերելով ի դրունս իմահասակ նկարիչ ընկերց, և պահպանելով դիս որպէս և իցէ, յառաջացուցի զուսումս անցս այս տարի և կես ամաց, որքան կարելի էր»։ Նա խնդրում է «արժանացուազիք զիս խառնել ի հօտ մեծապայծառ տանդ Եղիազարեանց», հանձ

առնելով «զծիգն աշխատութեան զօրութեամբ և շնորհօք տեսառն աստուծոյ առ ի լցուցանել զթերին ուսման իմոյ ի պարծանս անուան Զերոյ»<sup>13</sup>:

Վաղ մանկությունից իր ծնողներից զրկված Ստ. Ներսիսյանի մոտ կազարյաններին որդեգրվելու միտքը նոր չէր ծընվում: Դեռևս Թիֆլիսում եղած ժամանակ՝ 1830-ական թթ. սկզբներին, ինչպես նշել ենք, այդ հարցը բարձրացվել է, բայց այն մնացել է անպատճախան: Բացի այդ, կազարյանները դեռևս XVIII դարի վերջերին հովանալորել ու իրենց միջոցներով գեղարվեստի ակադեմիայում երկու հայ ուսանողներ են պահել (Գալստյան, Լալայան), հատկացնելով նրանց ուսման վարձը և ապրուստի միջոցները:

Ստ. Ներսիսյանը հուլս ուներ, որ այս անգամ անուշադիր չեն թողնի իրեն: Իսկապես, կազարյանները թեև չեն որդեգրում նրան, սակայն նշանակում են ամսական 10 ռ. թոշակ: Դա, իհարկե, կիսաքաղց ուսանողի համար որոշ օժանդակություն էր, բայց դեռ շատ քիչ էր հետզհետե աճող պահանջները բավարարելու համար: Ապրուստի, բնակարանի վարձի, հագուստի և այլ ծախսերի հետ, այժմ ավելանում են նաև նկարչական պիտույքների ծախսերը: Այդ վիճակից դուրս գալու համար նա վճռում է պատկերներ և պատճեններ նկարել և վաճառել: 22-ամյա Ներսիսյանը ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի համար արդեն բավական փորձ ուներ: Երկու տարի գծանկարչության դասերին հաճախելը բավական բան էր սովորեցրել: Խիստ նպաստավոր են եղել նաև պետերբուրգյան ցուցահանդեսները, որոնց նա, ինչպես և նշեցինք, պարբերաբար հաճախում էր, ինչպես նաև ուսական ու եվրոպական արվեստի հետ նրա ծանոթությունը թանգարաններում:

Դեռևս 1836 թ. մարտ ամսին ակադեմիայի պրեգիդենտ Ա. Ն. Օլենինն էր նկատել, որ իր կարծիքով «Հայ Ստեփան Ներսեսովը կարող է դառնալ հովաչ օգտակար իր հայրենիքի համար»: Այդպիսի կարծիք նա չէր կարող պաշտոնական գրության մեջ արտահայտել, եթե տեսած լիներ 21-ամյա

Հայի նկարչական աշխատանքները: Նշանակում է, որ դեռևս 1836 թ. առաջին քառորդում Ստ. Ներսիսյանն ունեցել է ինքնուրույն ստեղծագործություններ այն մակարդակի, որ իրավունք է վերապահվել դրանք ներկայացնել գեղարվեստի ակադեմիային: Իսկ մեկ տարի հետո՝ 1837 թ., նա, բնականաբար, բավական առաջադիմել էր:

Զինված իր այդ ունակությամբ և ձեռք բերած առաջադիմությամբ, աշխատասեր ու ընդունակ սկսնակ նկարիչը նկարում է պատկերներ, որոնցից մեկը՝ «Կրակող ասիացին», նա ներկայացնում է Պետերբուրգի «Նկարիչներին խրախուսող ընկերությանը», խնդրելով դրա դիմաց ցույց տալ նյութական օժանդակություն: Այդ մասին Ընկերության կոմիտեի 1837 թ. արձանագրությունների մատյանում (Ժուռնալ) կարդում ենք. «Նկարիչ Ներսեսովին, որը տառապում է աշբացավով, օգնելու համար կոմիտեն որոշում է գնել նրա կողմից ներկայացված նկարը («Կրակող ասիացին») 100 ռուբլով»<sup>14</sup>:

Այդ գումարով և «Նկարիչներին խրախուսող ընկերության» տված ամսական 15 ռ. օգնության և կազմականներից ստացած 10 ռ. թոշակով Ստ. Ներսիսյանը մի կերպ անց է կացնում 1837 թ. ձմեռը Պետերբուրգում:

Իր առաջին ստեղծագործություններից մեկի՝ «Կրակող ասիացին» պատկերի, ունեցած հաջողությունը ոգևորում է նկարչին և նա մտածում է ստեղծել նոր նկարներ ևս: Հենց այդ ժամանակ էլ պետերբուրգյան «Խուզոֆեստվեննայա գաղետայում» հրապարակվում է «Նկարիչներին խրախուսող ընկերության» հայտարարությունն այն մասին, որ 1838 թ. գարնանը կազմակերպվելու է գեղարվեստական ստեղծագործությունների նոր՝ երկրորդ վիճակախաղ, որին թույլատրվում է մասնակցել ոչ միայն բնագիր աշխատանքներով, այլև նշանավոր արվեստագետների ստեղծագործություններից կատարված լավագույն պատճեններով: «Գեղարվեստական ստեղծագործությունների մշտական վիճակախաղերի կազմակերպման նպատակն է,—կարդում ենք այդ թերթում,

— աշխուժացնել հայրենական արվեստագետներին և հասարակության մեջ տարածել նրանց ստեղծագործությունները գեղեցիկ արվեստների բոլոր տեսակների գծով»<sup>15</sup>:

Ստ. Ներսիսյանը նկարում և վիճակախաղի գեղարվեստական խորհրդին է ներկայացնում ոռու նկարիչ Սկոտտիի «Ատրճանակ կրող հայը» պատկերի պատճենը, որը և շահում է մրցանակ: «Նկարիչներին խրախուսող ընկերության» 1838 թ. ապրիլյան հաղորդման մեջ նշված շահած գեղարվեստական ստեղծագործություններից ցուցակի այն մասում, որը ներկայացված են «Հայտնի նկարիչների պատկերներից կատարված յուղաներկ պատճեններ», 67 կետում գրված է «Սկոտտիի «Ատրճանակ կրող հայը» պատկերը, Ներսիսովի»<sup>16</sup>: Այժմ դժվար է ասել, թե Սկոտտի նկարիչներից որի՞ ստեղծագործությունից է Ներսիսյանը պատճենահանել, քանի որ այդպիսի պատկեր ոռուսական արվեստագիտական գրականության մեջ ընդհանրապես չի նշվում: Բայց փաստն այն է, որ այդպիսի պատկեր եղել է և դրա պատճենն էլ շահել է մրցութում:

Հաջողություն գտնելով ստեղծագործական աշխատանքում, Ստ. Ներսիսյանը 1838 թ. մայիսի 5-ին՝ արդեն շորորորդ անգամ, գրավոր դիմում է գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտին, խնդրելով իրեն ընդունել ակադեմիա, դրանով իսկ, ինչպես ինքն է գրում: «Երշանկացնել մի պատանու, որն աստծուց և Զեղնից բացի, ուրիշ ոչ չունի»<sup>17</sup>:

Այս խնդրագրի հետ Ստ. Ներսիսյանը, անշուշտ, ներկայացնում է նաև իր նկարչական մի քանի նոր աշխատանքները, որոնք, կարծում ենք, գրավում են պրոֆեսորների ուշադրությունը: Թերևս դրանով պետք է բացատրել, որ երկու օր հետո՝ մայիսի 7-ին, պրեզիդենտ Ա. Ն. Օլենինը Ներսիսյանի դիմումի վրա մակարում է: «Կից ուղարկել կայսերական Գեղարվեստի ակադեմիայի վարչությանը համապատասխան գաղաքացիության համար, համաձայն № 1 պարագաների որոշման»: Դա նշանակում էր ընդառաջել Ներսիսյանին և սպասել վերադասի (կայսրի) կարգադրությանը:

Ամենայն հավանականությամբ, այդ դիմումի ու պրեգիդենտի մակագրության հետ պալատ է ուղարկվել նաև կոմս Ա. Խ. Բեկենդորֆի 1838 թ. երկրորդ գրավոր միջնորդությունը, ուր նա գրում է. «Ասիթ ունենալով տեսնելու երիտասարդ նկարիչ Ներսեսովի ստեղծագործությունները և ցանկանալով նպաստել նրա ընդունակությունների արագ զարգացմանը, խնդրում եմ ցուց տալ նրան բարեգործություն, ապահովելով նրան բնակարանով կամ միջնորդել դարձնելու նրան ակադեմիայի թոշակառուա<sup>18</sup>:

Այդ պաշտոնական գրություններն ու միջնորդությունը, ինչպես նաև ներկայացված նկարները, վերջապես, Հարգիլում են կայսեր կողմից և Ստ. Ներսիսյանը 1838 թ. գարնանը ընդունվում է Պետերբուրգի դեղարվեստի ակադեմիա:

Այս գործում, անկասկած, նպաստավոր դեր է կատարում գեղարվեստի ակադեմիայի այն ժամանակվա կոնֆերենց-քարտուղար, նկարիչ-քանդակագործ, պրոֆ. Ֆ. Պ. Տոլստոյը: Նա եղել է իր ժամանակի առաջավոր ու առավել աշքի քննող արվեստագետներից մեկը: Ֆ. Պ. Տոլստոյը (1783—1878) մտերմական հարաբերությունների մեջ է եղել Պուշկինի, Ժուկովսկու, Կովկովի, Պեկաբրիստներ Բեստումենի, Մուրավյովի և ուրիշների հետ: 1828 թ. զառնալով ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար, նա ավելի քան 30 տարի շարունակ (մինչև 1859 թ.) եղել է Հոգատար, ուշադիր և նրբանկատ երիտասարդ տաղանդների նկատմամբ, ամեն կերպ օգնել է նրանց աշխատանքում, ուսման մեջ և նյութապես ապահովելու խնդրում: Հայտնի է նրա եռանդուն աշակցությունը գյուղական պատանիներ Գրիգորի և Նիկոնով Զերնեցով եղբայրներին ակադեմիա ընդունելու հարցում, նրա օգնությունը Պ. Ֆեղոտովին, նրա միջնորդությունը թագավորի առաջ՝ Տարաս Շևենկոյին աքսորից վերադարձնելու խնդրում և այլն:

Նույնպիսի հոգատարություն նա ցուցաբերում է նաև Ստ. Ներսիսյանի նկատմամբ: Այդ նա է 1838 թ. մայիսի 7-ին ակադեմիայի վարչության մատյանում գրանցել «Հողված 10: ...Հարգելով նկարչության մեջ ցուց տված ընդունա-

կությունները և գերազանց հաջողությունները, Ներսեսովին ընդունել շրդ կարգի ակադեմիսում՝ ակադեմիայի գումարի մնացորդի հաշվին<sup>19</sup>:

Վերջապես, երեք տարի Պետերբուրգում դեգերելուց, տքնաջան ու կիսաքաղց, բայց համառիքն աշխատելուց հետո, իրականանում է հայ երիտասարդի երազանքը՝ նա ընդդունվում է գեղարվեստի ակադեմիա:

Ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար, պլոտֆ. Ֆ. Պ. Տոլստոյի վերոհիշյալ ձեւակերպման մեջ կա մի նշում, որի վրա հրավիրում ենք ընթերցողի ուշադրությունը: Ակադեմիայի վարչության մատյանի հոդված 10-ում «Հարգելով նկարչության մեջ ցույց տված ընդունակությունները և գերազանց հաջողությունները» արձանագրությունը, ինքնին, բնութագրում է երիտասարդ հայ նկարչին և վկայում է այն մասին, որ նախքան ակադեմիա ընդունվելը Ստ. Ներսիսյանը նկարչության մեջ ինքնազարգացմամբ և գծանկարչության դասարանի ուսուցիչների օժանդակությամբ արդեն հասել էր այնպիսի մակարդակի, որ ակադեմիայի պրեզիդենտը և կոնֆերենց-քարտուղարը հարկ են համարել բնութագրել որպես «գերազանց հաջողություններ», մի գնահատական, որը սովորաբար տրվում էր ակադեմիան ավարտող սաներին:

Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ հենց նույն տարում, ինչպես նշվեց, 1838 թ., Պետերբուրգի «Նկարիչներին խրախուսող ընկերության» կողմից կազմակերպված գեղարվեստական ստեղծագործությունների վիճակախաղում Ստ. Ներսիսյանի ներկայացրած ոռու նկարիչ Սկոտտիի «Ատրճանակ կրող հայը» պատկերի պատճենը շահում է 100<sup>0</sup> ռուբլի: Պետերբուրգում՝ այն ժամանակվա բազմաթիվ ոռու և օտարազգի նկարիչների միջավայրում, վիճակախաղում շահելը, այն էլ մի պատկերի պատճենով, հեշտությամբ ձեռք բերվող գործ չէր: Դա նշանակում է, որ Ստ. Ներսիսյանի նկարած պատճենը կատարված է եղել մասնագիտորեն, գեղարվեստական բարձր մակարդակով: Դա միաժամանակ ասում է այն մասին, որ անցած երկու և կես տարիներն անպատուղ չեն անցել: Չնայած մեծ զբրկանքներին ու անսահման

դժվարություններին, Ստ. Ներսիսյանը նպատակին հասնելու համար համառորեն աշխատել և ամեն ինչ արել է նկարչությանը մասնագիտորեն տիրապետելու համար, հասնելով բաղձալի արդյունքի:

Այդպես, 1838 թ. մայիսից սկսվում է Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում ակադեմիստ Ստ. Ներսիսյանի մասնագիտական հիմնալոր կրթության շրջանը:

Գեղարվեստի ակադեմիայում Ստ. Ներսիսյանը սովորում է մի քանի պրոֆեսորների, գլխավորապես նկարիչներ Ա. Գ. Վարնեկի և Ա. Ի. Զառերվեյդի մոտ: Ալեքսանդր Գրիգորիչ Վարնեկը (1782—1843) ղեկավարում էր դիմանկարչության դասարանը: Լինելով պրոֆեսիոնալ դիմանկարիչ, նա մեծ վարպետությամբ ստեղծում էր ժամանակակիցների կերպարներ: Նրա լավագույն դիմանկարները, որոնք աշքի են ընկնում պարզությամբ և ճշմարտությամբ, ունական կան են, թեև առանձին ստեղծագործություններ կրում են գեղեցկացման որոշ միտումներ, որոնք ժամանակի ուսուական ումատափոմի կնիք են կրում: Ալեքսանդր Իվանովիչ Զառերվեյդի (1782—1844) պատմական մարտանկարչության դասարանում Ստ. Ներսիսյանը սովորում է կենցաղային ու մարտանկարչական թեմաներով բազմաֆիզուլտ-սյուժետային պատկերներ ստեղծելու արվեստը, որը հետո, ինչպես ցույց կտանք, բավական հաջողությամբ կիրառում է նա իր ստեղծագործություններում: Այս պրոֆեսորի մոտ, Ստ. Ներսիսյանից առաջ, սովորել էր Հովհ. Այվազովսկին, որը հետագայում ստեղծում է մարտանկարչական թեմաներով բազմաթիվ բարձրարվեստ պատկերներ:

Պրոֆ. Ա. Ի. Զառերվեյդի մոտ, ինչպես և Ա. Գ. Վարնեկի դիմանկարչության դասարանում Ստ. Ներսիսյանը հանդես է բերում մեծ եռանդ և նվիրվածություն: Նա արագորեն առաջադիմում է ուսման մեջ և, ինչպես ցույց են տալիս դասարանական մատյանները, բոլոր առաջադրանքները, այդ թվում նրա գծանկարչությունը, պրոֆեսորների կողմից նշվել են լավ և գերազանց գնահատականներով:

Ակադեմիստէ այդպիսի առաջադիմությունը իրավունք էր վերապահում ժամկետից շուտ ավարտելու ուսման դասընթացը: Այդպես էլ լինում է: Ստ. Ներսիսյանը գեղարվեստի ակադեմիայում սովորում է երկու լրիվ ուսումնական տարի: 1840 թ. նա իրավունք է ստանում ներկայացնել դիպլոմային-ավարտական աշխատանք նկարչի կոչման համար: Ստ. Ներսիսյանը 1840 թ. գարնանը գեղարվեստի ակադեմիայի խորհրդին ներկայացնում է մի դիմանկար և խնդրում է դրա հիման վրա իրեն շնորհել նկարչի կոչում կամ, ինչպես ինքն է համեստորեն գրում, «ծայրահեղ գեպքում նկարչության ուսուցչի կոչում՝ գիմնազիաներում դասավանդելու համար»: Շատ շանցած՝ օգոստոսի 19-ին, ակադեմիայի խորհրդուղը որոշում է «Ստեփան Ներսեսովին շնորհել ազատ նկարչի կոչում... և, եթե նա ցանկանում է, տալ նրան գիմնազիաներում նկարչություն դասավանդելու իրավունքի լրացուցիչ ատեստատ»<sup>20</sup>: Սեպտեմբերի 22-ին ակադեմիայի մեծ (ընդհանուր) խորհրդուղ հաստատում է այդ որոշումը, որից հետո Ստ. Ներսիսյանը ստանում է միանգամից երկու վկայական՝ դիպլոմ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան ավարտելու մասին և գիմնազիաներում (կամ դպրոցներում) նկարչություն դասավանդելու իրավունքի վկայական (ատեստատ):

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հեռավոր Հայաստանից Ռուսաստանի մայրաքաղաք մեկնած արվեստասեր և ուսումնատենչ հայ պատանին հինգ տարի շարունակ (1835—1840) Պետերբուրգում համառ և տքնազան աշխատանքով հասնում է իր նպատակին՝ նա ստանում է գեղարվեստական հիմնավոր կրթություն, պրոֆեսիոնալ նկարչի կոչում և նկարչություն դասավանդելու իրավունքի վկայական<sup>21</sup>:

Այժմ նրան մնում է ստացած բարձրագույն կրթությունը և մասնագիտությունը ծառայեցնել իր հարազատ ժողովրդին՝ նրա երիտասարդ սերնդի գեղարվեստական դաստիարակությանը: Այդպիսին էր նկարչի երազանքը: Այդ մասին էր Հոդ տանում և. Աբովյանը, որն իր միջնորդական նամակում,

գեռ 1835 թ. Հունվարին գրել էր, որ Ստ. Ներսիսյանը «ցանկանում է կամ այստեղ մեռնել, կամ վերադառնալ իբրև արվեստագետ իր ազգի համար»:

Այդ համոզմունքով տոգորված Ստ. Ներսիսյանը պատրաստվում է Հայրենիք վերադառնալ: Բայց Հայրենիք երկրից որևէ լուր կամ հրավեր չուներ: Այդ պատճառով գեղարվեստի ակադեմիան ավարտելուց հետո Ստ. Ներսիսյանը մնում է Պետերբուրգում: Կատարելագործվելու նպատակով նա 1840—1842 թվականներին շարունակում է պարբերաբար հաճախել ակադեմիային առընթեր գծանկարչության երեկոյան պարապմունքներին: Այժմ նրան, ամենից ավելի, անհանգըստացնում է բնակարտան շունենալը: Պետերբուրգում բնակարտանի վարձը այնքան թանկ էր, որ նա հնարավորություն շուներ վճարել: Այդ պատճառով Ներսիսյանը դիմում է ներքին գործերի մինիստրության երդորդ բաժանմունքի պետ կոմս Ա. Խ. Բեկենդորֆին (որին նա արդեն ծանոթ էր), խընդուրելով նրա միջնորդությունը ակադեմիայի հանրակացարանի սենյակներից մեկում իրեն տեղավորելու համար: Սեպտեմբերի 18-ին Ա. Խ. Բեկենդորֆը պաշտոնակես դիմում է ակադեմիայի պրեզիդենտին: Ստ. Ներսիսյանը «միջոցներ շունի ակադեմիայից դուրս ապրելու համար,—գրում է նա, —առիթ ունենալով տեսնել այդ երիտասարդ արտիստի ստեղծագործությունները և ցանկանալով նպաստել նրա ընդունակությունների արագ զարգացմանը, ևս խորապես խընդուրում եմ Զերդ բարձր գերազանցությանը, եթե հնարավոր է, ցույց տալ նրան բարելարություն, տեղավորելով նրան գեղարվեստի ակադեմիայում կամ Զեր միջնորդությամբ նշանակել տալ նորին մեծության թոշակառու<sup>22</sup>: Որոշ ուշացումով՝ հոկտեմբերին, պրեզիդենտը պատասխանում է. «Կայսերական գեղարվեստի ակադեմիային առընթեր ուսումնարանը վերափոխությունից հետո, 1840 թ. մարտի 4-ի վերադասի հաստատմամբ, դադարեցվել է այնտեղ աշակերտների բնակությունը և նրանց պահպանումը, ուստի դրանից օգտվել կարող են միայն ակադեմիայում սովորող ազատ ուն-

կընդիրները: Ես իմ կողմից համարձակվում եմ ենթադրել, որ Հայ Ստ. Ներսեսովը կարող է դառնալ ամբողջապես օգտակար իր հայրենիքի համար, եթե նա կարողանա օգտվել թագավոր-կայսրի առատաձեռնությունից, իր գոյության և ակադեմիային մոտիկ բնակարան ձեռք բերելու համար, որը Հնարավորություն կտա հաճախել դասընթացներին իր վերջնական ուսումնառության համար»<sup>23</sup>:

Ստ. Ներսիսյանը, իր ծայրահեղ համեստ բնավորությամբ, իհարկե, չի կարողանում անձնական խնդրով զիմել կայսրին և ակադեմիայի հանրակացարանում տեղավորվելու կամ թոշակառու դառնալու ցանկությունը, ինքնին, վերանում է:

Նորավարտ նկարիչը, այդպիսով, դարձյալ մնում է անօգնական վիճակում: Որոշ ժամանակ անց մի անկյուն գրտնելով բնակվելու համար, նա շարունակում է սուղ պայման-ներում ապրել ու աշխատել:

Ինչպես ասվեց վերեռում, Ա. Խ. Բեկենդորֆը «առիթ է ունեցել տեսնել այդ երիտասարդ արտիստի ստեղծագործությունները»: Դա արդեն ասում է այն մասին, որ Ստ. Ներսիսյանը 1840 թ. ունեցել է գեղարվեստական հետաքրքրություն ներկայացնող մի շարք ստեղծագործություններ: Աչա այդ ստեղծագործություններից մեկը՝ «Հրացանը լիցքավորող պարսիկը» պատկերը ևս, ներկայացնում է Փետերբուրգի կայսերական գեղարվեստի ակադեմիայի տարեկան (աշնանային) ցուցահանդեսում: Այդ ցուցահանդեսը բացվում է 1840 թ. սեպտեմբերին: Դրան մասնակցում են ուսուու եվրոպացի շատ նկարիչներ, գեղարվեստի ակադեմիայի պիտիքներներ և ակադեմիկոսներ Կ. Բրյուլովը, Ս. Վորոբյովը, Ֆ. Բրունին, Ս. Գալակտիոնովը, Ի. Խորոցկին, Գ. Կոցերուն, Ժ. Էնգրը, Գ. Գյուդենը և ուրիշներ, ինչպես նաև ակադեմիայի նորավարտ արվեստագետներ, այդ թվում երեք հայ նկարիչ՝ Հովհ. Այվազովսկին, Աղաթոն Հովնաթանյանը և Ստ. Ներսիսյանը: Այն ժամանակ իտալիայում գտնվող Հովհ. Այվազովսկու ուղարկած պատկերներից այստեղ ցուցադրվում են ավելի քան հինգը՝ «Նեապոլը լուսնի

լույսով՝ ողողված», «Ամալֆի», «Սորենտո», «Կապրի կղզին» և ուրիշները։ Աղաթոն Հովնաթանյանը ցուցադրում է իր ավարտական աշխատանքը՝ «Մուսուլմանական կիսաէսկադրոնի լիոնցու գիմանկարը»։

Ներսեսով ստորագրությամբ Ստ. Ներսիսյանից ցուցադրված «Հրացանը լիցքավորող պարսիկը» պատկերը նույնպես մեզ չի հասել։ Այդ անվամբ պատկերը նշված է «կայսերական գեղարվեստի ակադեմիայի սրահներում ցուցադրված գեղարվեստական ստեղծագործությունների տեղեկատուիք» մեջ (№ 10)։ Այն փաստը, որ նորավարտ նկարիչը ներկայացվել է նշանավոր արվեստագետների հետ միևնույն ցուցահանդեսում, դա արդեն թոփշքային առաջխաղացում էր երիտասարդ արվեստագետի ստեղծագործական կյանքում։ Հինգ-վեց տարի առաջ անհայտ, անօդնական և աղքատ սկսնակ նկարիչը այժմ՝ 1842 թվի աշնանը, արդեն ցուցադրվում է ակադեմիայի պրոֆեսորների, ոռու և եվրոպացի անվանի նկարիչների ու քանդակագործների շարքում, ճանաշում գտնելով գեղարվեստի աշխարհում։ Ահա այդպիսին է եղել արվեստի բարձունքներին ձգտող տաղանդավոր հայ երիտասարդի համառ, հետեւողական աշխատասիրության ուղին։

Մուսաստանի մայրաքաղաքում՝ ոռու արվեստագետների ու մտավորականների միջավայրում աճած, բարձրագույն կրթություն և մասնագիտություն ձեռք բերած արվեստագետը այժմ արդեն մտադրվում է մեկնել Հայրենիք և ծառայել Հարազատ ժողովրդին։ Այդ նպատակով էլ 1842 թ. նոյեմբերի 23-ին նա մի նամակով դիմում է Խաչատրու Աբովյանին, ինդրելով օգնել իրեն հայրենի երկրի պարոցներից մեկում նկարչության առարկայի ուսուցչի պաշտոն ստանալու և դրանով իսկ հայրենիք տեղափոխվելու համար։ Բերում ենք այդ նամակը որոշ կրթատումներով։

«Ուսումնականիդ Խաչատրոյ Ապովեանի  
ողջոյն և սէր անմոռանալի։

Արդարև, ըստ իսկականին լինի կեղծիս քարշահոգութեան լոելով մինչ ցարդ. այժմ ի գոելն իմ առ ձեզ զնամակ

բարեկամութեան, որոց հասարակաց իսկ է կարծիս, բայց  
ըստ դատողութեան մեծահոգաց և ուսումնականաց՝ ներևսցի,  
թողլով ի ժամուն՝ յորում ձեռնահաս լիցի: Արդ, իմ է այս  
ամենայն սխալմունք, և ես գանգատիմ ի հոլովմանէ դառնա-  
գին ժամուց, զոր արգելէին միշտ ի միտ ածել զապագան,  
իսկ՝ զենի այնր ամինայնի զգալով իմ՝ զսէր Զեր, զոր ցու-  
ցիք ինձ ի 1835 ամի. ի ո. Պետերբուրգ՝ ամաչեմ այժմ գրել  
ինչ առ բարեկամութեան Զեր, զորմէ սպառեալ էի, ուստի  
հանդիպեալ պատահմանցն, որ յիս՝ ուսուցանէ շխախտել  
զայն՝ որ էի վերատեսչէն Աստուծոյ, վասն վորո ցանկամ  
միշտ ունիլ, և առ այս ապացուցութիւն գրեմ առ բարեկամդ,  
զի իմասցի, որ յաւոր միում ստացեալ եմ պակէթ մի ի Տեր  
Մովսիսէ տէր Մովսիսեան, որ էրն ի Պետերբուրգ, առ լեյբ  
մեդիկ Մարկոսովն, չգիտելով իմ, թէ յումմէ իցէ պակեթն,  
տարի առ նա, զոր շբացեալ եհարց. նախ, թե Ապովեանէ է այս,  
և ես չգիտելով, արարի պատասխանի. «այո՛», զոր ի բանաչն,  
հաստատեցաւ զկարծիս, յիտ յորոյ ընկալեալ իմ զսէր և  
զմարդասիրութիւն նորա, և իմանալով զբարեկամութիւն մեր՝  
խոստանայ ունել և ընդիս զսէրն, զոր առ ձեզ, և հրափրէ  
զիս առնել յարժամ երթևեկութեան առ ինքն, որպես եղեալդ  
բարեկամ, իսկ իմ զբաղեալ ի տարաբախտ ժամանակի, չեր-  
կարեցի զընթացս իմ առ նա, որ պարտավորեալս մինչ ցարդ  
լսիմ: իսկ այժմեան դիտաւորութիւն իմ յորդորեաց զիս առ-  
նել ձեզ զայս գրութիւն, յուսամ, զի մի անտես լինիցի ի  
ձէնչ՝ զոր խնդրեմս, նախ, ներել զանցեալն և տալ ի ժամա-  
նսկի, զոր ամենաքնոքն պատահեսցի, և, երկրորդ, ընկա-  
լեալ իմ փոքր ի շատէ զուսումն նկարչութեան զոր էի գեգե-  
րեալ ի նա, կամիմ այժմ զալ ի Տփխիս, վասն որոյ գիտելով  
տեղոյդ արդիւնաւորութեանցն, որ առ զարհեստն իմ երկ-  
րայիմ, ուստի ցանկամ մտանել ի պաշտօն ուսուցչութեան  
նկարագրութեանս տեղոյդ նոր բացեալ ճեմարանն կուսա-  
նաց, զոր ոչ ոք կալեալ զիմս հավատարիմ, բաց ի բարեկա-  
մէդ և ի պարուչիկ Արշակայ Տեր Ղուկասեանցէ, համարձա-  
կիմ գրել առ ձեզ զնամակս խնդրեանաց, զի աշխատ լինել  
իմանալ որպիսութենէ վերոյիշեալ ճեմարանին, թէ զո՞ր

այնր վկայականօք ուսուցիչ հաստատեալ, թէ ոչ, և կամ ի լինելն, գուցէ, կատարէ միայն զգործ և ոչ հաստատեա. որոյ վասն աղաշեմ մի անտես առնուցու բարեկամդ իմ հետեկի առայս գրել փութացէս զիսկութիւն, եթէ գոյ հնար մտանել զիս ի նա՝ աշխատեցայց մինչ դեռ ժամանակ ի ձեռն է առաքել զիսնդրադիր իմ հանդերձ վկայականօք առ տեղւոյդ կուսական, և յետ այնր փութացայց և ևս ի տես և ի յուսումն կարուտությանդ սիրոյ:

Մնամ ամենախոնարհ կրտսեր բարեկամ Զեր զաղատական նկարիչ Ստեփանոս Ներսիսյանց»<sup>24</sup>:

Այս նամակի պատասխանը, եթե եղել է, ապա մեզ չի հասել: Սակայն այն փաստը, որ Ստ. Ներսիսյանը դրանից հետո՝ մինչև 1846 թ. աշնանը, մնացել է Պետերբուրգում, հիմք է տալիս ասելու, որ հայրենիքում նկարչության առարկայի ազատ ժամեր շինելու պատճառով հնարավոր շի եղել նրան հրավիրել մանկավարժական աշխատանքի:

Պետերբուրգում Ստ. Ներսիսյանը, իհարկե, անգործ չի մնացել: Նա, անկասկած, զբաղվել է նկարչությամբ: Դրժբախտաբար 1843—1846 թթ. նկարչի գործունեության մասին մեզ շատ բան ստույգ հայտնի չէ: Հայտնի է միայն, որ նա 1845 թ. նկարել է «Երիտասարդի դիմանկարը»:

Ստեփանոս Ներսիսյանի պետերբուրգյան կյանքի մասին խոսելիս ավելորդ շենք համարում երկու խոսք ասել նաև նրա ընկերական միջավայրի մասին: Դեռևս 1837 թ. գրած նամակներից մեկում նա հաղորդում է, թե ինքը իր կյանքը անց է կացնում «ղեգերելով ի դրունս իմահասակ նկարիչ ընկերց»: Նա, ցավոք, այդ հասակակից ընկերների անունները չի նշում: Սակայն թերթելով նույն շրջանի գեղարվեստի ակադեմիայի ուսանողական և քննական ցուցակները, մենք հանդիպում ենք նրան հասակակից նկարիչ ուսանողների մի շարք անունների, որոնց հետ Ստեփանոս Ներսիսյանը, անկասկած, ընկերություն է արել: Այդպիսիք են, օրինակ, Հովհաննես Այլազովսկին, Աղաթոն Հովհնաթանյանը, Մովսես

Մելիքյանը, Հովհ. Աֆանդյանը, Վրացի Գ. Մայսուրածեն, ուսւա և ուկրաինացի նկարիչներ Տ. Շեշենկոն, Ա. Զարյանկոն և ուրիշներ: Նրա ընկերներից են եղել Մոսկվայի հայոց եկեղեցու վանահայր Արտեմ Տեր-Ղուկասյանի երկու զավակներ՝ Արշակը և Խաչին, որոնք այդ ժամանակ սովորում էին Պետերբուրգում: Անկասկած նա ծանոթ է եղել և հավանաբար ընկերություն է արել նաև գեղարվեստի ակադեմիան 1840 թ. ավարտած այն 23 ուսանողների, կամ դրանց մի մասի հետ, որոնք նույն ժամանակ իր հետ ստացել են նկարչի կոչում:

Նրա մտերիմ ընկերներից է Հովհ. Այվազովսկին, որին նա բազմիցս հիշել է և հետազայում պատմել մերձավոր անձանց: Դա եղել է այնպիսի մտերմություն, որ երբ Հովհ. Այվազովսկին 1845 թ. մեկնում է Ղրիմ՝ Թեոդոսիա, պետերբուրգյան իր բնակարանը հանձնում է Ստ. Ներսիսյանին, որը մինչև այդ ապրում էր վարձով՝ «Յօստրովի Վասիլևկոյ մի տասներորդի լինի ի մեջ մեծ ու միջի պրոսպեկտին ի տան Տրանչելի» հասցեով: Նկարիչը տեղափոխվում է նոր, կահավորված և մի քանի սենյակներից բաղկացած բնակարան արվեստանոցով, որի հասցեն նկարիչը այսպիս է ներկայացնում. «Բնակարան ունեմ մեծ Սաղովյան փողոցի Օրդոնանս-Հառողի մոտ, տիկին Յակովլեայի տանը, ակադեմիկոս Այվազովսկու բնակարանը»:

Այդ բնակարանում Ստ. Ներսիսյանն ապրում և աշխատում է շուրջ մեկ տարի՝ մինչև 1846 թ. աշնանը: Նույն տարվա գարնանը Պետերբուրգից նա մի դիմում է ուղարկում Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովին և կցելով գիմնազիաներում նկարչություն դասավանդելու մասին ակադեմիայից ստացած ատեսատը, խնդրում է Թիֆլիսի դպրոցներից մեկում նկարչության ուսուցչի պաշտոն տալ իրեն: Այդ դիմումի մեջ նա գրում է. «Յանկանալով ընդունվել ծառայության Թիֆլիսի գավառական գիմնազիայում բացված նկարչության ուսուցչի ազատ տեղում և կցելով Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայից ստացած ատեսատը, համարձակվում եմ խորապես խնդրելու Զերդ պայծառափայլությանը, նշանակել

ինձ նկարչության ուսուցիչ Թիֆլիսի գավառական գիմնազիայում: Երևանցի նկարիչ Ներսեսով, Պետերբուրգ, 12 ապրիլի, 1846 թ.»<sup>25</sup>:

Թիֆլիսում մայիսի 9-ին ստացված այս գիմումի վրա Մ. Ս. Վորոնցովը մակագրում է. «Պատասխանել գիրեկցիալի անոնից, որ ազատ տեղ այլևս չկա»: Կովկասի փոխարքացի դիվանատան գիրեկտորը այս մակագրության հիման վրա պատասխանում է. «26 մայիսի, 1846 թ., պարոն նկարիչ Ս. Ներսեսովին: Մեզ ուղարկված է Կովկասի փոխարքացին ուղղված ձեր գիմումը, որով խնդրում եք ընդունել ձեզ ծառայության Թիֆլիսի գիմնազիայում նկարչության ուսուցչի համար բացվող ազատ տեղում: Փոխարքայի հանձնարարությամբ պատիվ ունեմ տեղեկացնելու ձեզ, հ. պ., որ ձեր խնդրանքը հնարավոր չէ բավարարել, այդ ազատ տեղը արդեն զբաղված լինելու պատճառով: Ատեսատը վերադարձում է»<sup>26</sup>:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայրենիք վերադառնալու և իր ժողովրդին ծառայելու նկարիչ Ստ. Ներսիսյանի բոլոր հույսերը և գործադրած ջանքերը այս անգամ ևս ապարդյուն են անցնում:

Բայց նկարիչը, այնուամենայնիվ, չի հուսալքվում: Մի քանի ամիս ևս Պետերբուրգում մնալուց հետո՝ 1846 թ. աշնանը նա պատրաստվում է առանց հրավեր ստանալու վերդառնալ հայրենիք:

#### Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՍՏ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՄԱԿԱԳՐԸ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԵՎ. ՀԱՍՏԱԿԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

(1846—1884)

Տոգորված հարազատ ժողովրդի լուսավորության, նրա առաջադիմության և նոր սերնդին գեղարվեստական կրթություն տալու ջերմ ցանկությամբ, նկարիչ Ստ. Ներսիսյանը

1846 թ. աշնանը Պետերբուրգից վերադառնում է Հայրենիք և բնակություն հաստատում Թիֆլիսում։ Այդ ժամանակվանից էլ սկսվում է Հայ նկարչի կյանքի, ստեղծագործության, մանկավարժական և հասարակական գործունեության նոր, առավել բովանդակալից և ուշագրավ շրջանը։

Թիֆլիսը այդ ժամանակ մի փոքրիկ և բազմազգ բնակչություն ունեցող արևելյան քաղաք էր։ «Ասիայում ուսական իշխանության կենտրոնական այդ վայրը», ինչպես բնութագրել է Ֆ. Էնգելսը Կ. Մարքսին 1855 թ. գրած նամակում, միաժամանակ մշակութային խոշոր կենտրոն էր։ Այստեղ էին կենտրոնացված Հայոց, վրաց և կովկասյան մյուս ազգերի, ինչպես և ոռոսական մտավորականության մի զգալի մասը, ոռու զինվորականության կովկասյան կորպուսի շտաբը, պետական բարձրագույն իշխանությունները։

1840-ական թթ. կեսերին Թիֆլիսում ապրում առողջ էին մի քանի հայ, ոռու և օտարազգի (գլխավորապես իտալացի) նկարիչներ և ճարտարապետներ։ Նրանցից ամենից ավելի հայտնի էին Մկրտում և Հակոբ Հովնաթանյանները, Ֆ. Ի. Բայկովը, Գ. Գագարինը, Բելովը, Ժոկովսկին, Բերեժնոյը և ուրիշներ։ Նրանք կատարում էին մասնավոր պատվերներ և նկարում բնության տեսարաններ, հին հուշարձանների պատկերներ և դիմանկարներ։

Այդ ժամանակ եկեղեցին այլևս հանդես չէր գալիս նկարչության, ընդհանրապես կերպարվեստի, հիմնական պատվիրատուի դերում, ինչպես առաջ Կառավարությունն էլ շահագրգուված չէր նկարիչներին պատվերներ տալու խնդրով։ Նկարիչներն ստիպված աշխատում էին մասնավոր պատվերներով։ Իսկ պատվերներ տալիս էին գլխավորապես ունեորդասի և ոռոսական արիստոկրատական խավի անձինք։ Թերեւս այդ պատճառով XIX դարի կեսերին Հայ իրականության մեջ, մասնավորապես կերպարվեստում, հիմնական, առաջատար ժանրը դառնում է դիմանկարչությունը։ Դիմանկարիչ Հակոբ Հովնաթանյանը (1809—1881) այդ շրջանի ամենաճանաչված ու հանրահայտ նկարիչն էր։ Այդ ժամանակ

Թիֆլիսում լույս տեսնող «հլյուստրացիա» ամսագիրը՝ 1846 թ.  
Հաղորդում է, թե ով որ ցանկանում է իր դիմանկարը  
ունենալ, պատվիրում է նկարիչ Հակոբ Հովնաթանյանին:  
Դիմանկարիչ Հ. Հովնաթանյանը, սակայն, ոչ միայն նկարում  
էր պատվերով, այլև հաշվի էր առնում պատվիրատուների  
պահանջները, երբեմն նաև նրանց ճաշակն ու ցանկություն-  
ները: Այդպես են ստեղծվել նրա նկարած Կովկասի կառա-  
վարիչների՝ Ա. Երմոլովի, Ի. Պատկեհչի, Վ. Ռոզենի, Յ. Գո-  
լովինի, Ս. Վորոնցովի և այլոց դիմանկարները:

Այդպես էին աշխատում Թիֆլիսում ստեղծագործող  
մյուս նկարիչները ևս: Նրանցից շատերը, սակայն, չդիմանա-  
լով մրցությանը, հեռանում էին Անդրկովկասից, Հրապարա-  
կը թողնելով Հակոբ Հովնաթանյանին: Նույնիսկ նրա կրտսեր  
եղբայրը՝ նկարիչ Աղաթոն Հովնաթանյանը, որն ավարտել էր  
Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան, 1845 թ. գալով  
Թիֆլիս, համապատասխան աշխատանք չի գտնում և նկար-  
չության պատվերներ շունենալու պատճառով վերադառնում  
է Պետերբուրգ, ուր և անցնում է նրա կյանքը:

Նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը Պետերբուրգից վերա-  
դառնալով Թիֆլիս, կանգնում է նույն դժվարությունների  
առաջ: Դպրոցներում կամ պետական հիմնարկներում պաշ-  
տոնական (հաստիքային) աշխատանքի տեղ չկար, եղածն էլ  
արդեն զբաղեցրել էին ոռու և օտարազգի նկարիչները կամ  
ճարտարապետները, իսկ պատվերները տրվում էին գլխավո-  
րապես Հ. Հովնաթանյանին, մանավանդ որ Ստ. Ներսիսյա-  
նը պատվերով և պատահական անձանց դիմանկարներ  
սկզբունքորեն չեր ուզում նկարել:

Այդ պայմաններում երիտասարդ նկարիչը մնում է մի-  
այնակ ու անօգնական: Ավելի քան տասը տարվա իր բացա-  
կայության շրջանում բավական փոխվել էր Թիֆլիսի հասա-  
րակությունը: Նրան այստեղ ոչ ոք չէր ճանաչում, բացի ներ-  
սիսյան դպրոցի մի քանի ուսուցիչներից և նախկին սանե-  
րից, որոնք, սակայն, հասարակական կյանքում վճռական  
դեր չէին կատարում նրան հիմնավոր օգնություն ցույց տա-

լու համար: Այդ ժամանակ հայ մտավորականներից Ստ. Ներսիսյանին ճանաշում էին միայն և. Աբովյանը, որը, սակայն, ապրում և ուսուցչություն էր անում Երևանում, Ստ. Նազարյանը, որը դասախոսում էր Կաղանի համալսարանում, Մկրտիչ Էմինը, բժիշկ-բանահավաք Գ. Ախովերդյանը՝ և մի քանի այլ անձինք: Պահպանվել է Մկրտիչ Էմինի գրած 1846 թ. սեպտեմբերի 16-ի նամակը, որով նա բժիշկ Գ. Ախովերդյանին հայտնում է նկարիչ Ստ. Ներսիսյանի Թիֆլիս գալու մասին<sup>2</sup>:

Սակայն 30-ամյա նկարիչը, համակված հարազատ ժողովրդի լուսավորության և նոր սերնդին գեղարվեստական կրթություն տալու ոգով, չեր կարող երկար ժամանակ այստեղ անգործ մնալ: Նա որոշում է ձրի դասեր տալ: Զնայած նյութական աննպաստ պայմաններին, Ստ. Ներսիսյանը համաձայնվում է նկարչության անվճար դասեր տալ Ներսիսյան դպրոցում, այդ պարոցի հանրակացարանային սենյակներից մեկում բնակվելու պայմանով:

1846 թ. ուշ աշնանից սկսվում է Ստ. Ներսիսյանի մանկավարժական գործունեությունը: Այստեղ նա դասավանդում է մի քանի տարի: Այդ պարոցի պատմությանը նվիրված ուսումնակրության մեջ Ալ. Երիցյանը վկայակուում է դրամական հաշվետվություններ, որոնցից երեսում է, որ Ստ. Ներսիսյանը նկարչություն է դասավանդել երկրորդ և վերջին դասարաններում: «Վերջին դասարան—նկարչություն—Ստ. Ներսիսյանց—ձրի, երկրորդ դասարան—Ստ. Ներսիսյանց—ձրի» կարդում հնք այդ գրքում<sup>3</sup>:

Ներսիսյան դպրոցում դասավանդելիս նկարիչը իր շափականց համեստ և ժողովրդասեր բնավորությամբ շուտով դառնում է աշակերտների սիրելին ու բարեկամը: Նրա աշակերտները ու միայն սիրով ու ջանասիրությամբ էին կատարում նկարչության ուսուցչի բոլոր առաջադրանքները, այն, ինչպես վկայում են ժամանակակիցները, աղատ մուտք ունեին նրա փոքրիկ կացարանը: «40-ական թվականներին իբրև նկարչության ուսուցիչ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում,— գրում է գրող Պ. Պողօչանը,— նա իր արհեստի հետ ազգայ-

նական սեր է ներշնչել իր սաների սրտում, նրա բոլոր սաները անխտրապես սիրել են նրան և ազատ մուտք են ունեցել նրա աղջատիկ խցիկի ներսը, մի հատկություն, որ հազվագեց երեւութ էր այն ժամանակվա ուսուցչական պաշտոնականության մեջ»<sup>4</sup>:

Նկարչի մանկավարժական աշխատանքում դրսեռորված այդ հատկությունը, որը խսկապես արտակարգ երևույթ էր XIX դարի հայոց դպրոցական կյանքում, պատահական չէր: Դա բխում էր արվեստագետի դեմոկրատական համոզմունքից՝ իր ժամանակին դրսեռորված առաջավոր հայացքներ, որոնք, ինչպես կտեսնենք, որոշակի արտահայտություն են գտնում նաև նրա հասարակական գործունեության մեջ և նկարչական ստեղծագործություններում:

Ստ. Ներսիսյանի մանկավարժական գործունեությունը և, ընդհանրապես, նրա մասնագիտական բարձր պատրաստականությունն ու գիտելիքները արժանանում են հայ մտավորականության ուշադրությանն ու դրվատանքին: Այդ մասին է վկայում Կազանի համալսարանի դասախոս, հետագայում հանրահայտ հրապարակախոս Ստեփանոս Նազարյանի 1847 թ. նամակը ուղղված նկարչին, որի կարեսքությունը նկատի ունենալով բերում ենք այդ նամակը ամբողջությամբ.

«Գիտնական և հմուտ Արուեստականի պարոն Ստեփանոսի Ներսիսյան՝ ողջոյն սիրոյ և յարգանաց ի Ս. Նազարեանց.

Լուր եղել ինձ ի բանից մեծապատիւ վարժապետի Արարատեանց, եթէ ի ժամուս գտանիք ի Տփխիս և ողջունէք զիս զողջոյն բարեկամական, զոր ընկալեալ սրտի բաղձանօք ողջունեմ զՁեղ զանդրադան ողջոյն և ցալիմ ապաքէն, զի ժամանակս հարուստ չեղել մեզ տեղեկանալ որպիսութեան միմիեանց, բայց այսմ պարտաւոր եմք երկոքին մեզ միապէս, բայց ես քան զՁեղ առաւել՝ զի ելեալ ի Պետերբուրգէ անտեղեակ միշտ մնացի զգործոց ձերոց խոյս տուեալ ի Ղազան, բայց ամենեան եղել յոշ կամայս, վասն զի շտապ տագնապի գործոց պաշտոնամանս բարձեալ յինէն զամենայն այդպի-

սեաց մտադրութիւն՝ անհնարաւոր զիս արարին մատվել ընդ ձեղ  
ի նամակախոսութիւն, որ ի ցանկալեացն էր ինձ միշտ իբրև  
ընդ առն արուեստականի և յազգէ մերմե: Ցանկամ գիտել,  
թէ յորմէ՞ հետէ կեայք ի Տփխիս, և ո՞ր է պաշտոն Զէր: Ար-  
քունի՞ արդյոք, թէ մասնաւոր—և ո՞ր յառաջադիմութիւն  
գործոց ճարտարութեան. կամ թէ սիրէ՞ արդյոք հասարա-  
կութիւն տփխիսեան և մեծարէ՞ զճարտարդ համազգի, զայսմ  
ամենայնէ գրել ինձ աղալեմ—վասն զի, որպես գիտեք քաշ,  
սիրեմ և պատուեմ յոյժ զճարտարութիւն, նոյն և զճարտարս  
գիտնապէս, մանավանդ եթէ այդպիսիք առ մեղ իցեն, բայց  
հայտնի է ձեզ՝ որպես ճշմարտութիւն, նույնպէս և ուսմունք  
ամենայն՝ անզիտաց անպետ են և միմիայն ի գիտնոց և յի-  
մաստնոց ծանուցեալ պատուասիրին: Ոչ առանց խորհրդոց  
զայսպիսիս խօսիմ ընդ պատուականիդ, այլ ցաւիմ, զի կոյր  
ազգ մեր ոչ կամի ճանաշող լինել արժանաւորութեան Հայ-  
կազնեայ արանց, և զոր ինչ ընդ իս առնին, ի հարկէ և ընդ  
ձեզ առնել ոչ դանդաղեսցին: Մի միայն ցանկութիւն էր իմ  
լաշխարհիս յայսմիկ, մինչդեռ չէին երեկոյացել աւուրք կե-  
նացս և մինչդեռ խազայր յերակունս իմ արիւն հայրենասի-  
րական սրտի՝ հիմնարկել ուր և իցէ ի Ռուսաստանեայ՝ Ցա-  
սարակութիւն կամ ընկերութիւն ինչ ուսումնական և հաւա-  
քեալ ընդանօր զամենայն արժանաւոր անձինս մերոյս ազգի  
ուսումնականս և արուեստականս միանգամայն և աշխատե-  
ցուցանել զնոսա յօդուտ և ի փառս հայկազեան անուան,  
ոչինչ հոգուցեալ, թէ կան առ մեղ եպիսկոպոսք և հայրա-  
պետք՝ իշխանք և իշխանապետք՝ ոչ ձեռս ի գոգս ամփոփեալ  
առնեն և ոչինչ յականաւորացն և յազնուականագունիցն՝  
Պաշտպանութիւն և մեծարանք ասէ Կիկերոն, սնուցանեն  
զարհեստն, ուր արժանիք պատույ շստանան քաջալերս նըն-  
ջին (և տեսին յանարգանս, իսկ փառօք) և մեծարանօք վա-  
ռեալ բորբոքին մարդիկ ի նախանձաւորութիւն այնոցիկ՝ որք  
լաւքն են և գեղեցիկ. բայց այդպիսիք անհասկանալի են  
տկար և հիւանդ մտաց մերայնոց, ազգ հայոց չիք, և որք  
մնան, չեն՝ բայց միայն տխուր աւերակք բանագիտ հայոց  
հայկական հնութեան: ԶՄխիթարեանս ոչ դասեմ ընդ մեզ, զի

նոքա ոչ մեզ վասատակին, այլ իւրեանց, և առնէին և արարին  
որշափ ինչ կար է. բայց մենք ողորմելիքս զի՞նչ, լոեմ և լոեցից  
միշտ, ուր գործք մեր յայտնաբարբառ քարոզեն զան-  
պիտանութիւն և զողորմելի վիճակ հայոց՝ առ ի պակասու-  
թենէ բանագետ հայրենասիրաց: Ես ուստի՛ հայրենասերք,  
առողջամիտ և առատաձեռն հայրենասերք՝ ուր չիք ուսումն,  
ուր չիք լուսաւորութիւնն ոչ ի գիտութիւնս և ոչ յարուեսոս,  
այլ ամենայն տեղիս խաւար թանձրամած:

Խնդրեմ գրել առ իս զամենայն հանգամանաց ձերոց և  
մնալ միշտ ընդ իս ի նամակախօսութիւն սիրեմ և պատուեմ  
զձեզ իբրև դիտուն արուեստական և ճարտար հայոցս ի Ռու-  
սաստանեայս, և կամիմ զի ճանաչիցէք և դուք զիս իբրև բա-  
րեկամ և բարեացակամ որպես քեզ, նույնպէս և սխրալի  
ճարտարութեամբ, իսկ եթե տացէ տէր՝ յուսամ և պաշտպան  
քեզ և քեզանմանեաց: Ողջ լեր վասն արժանաւորաց քեզ և  
քոյոյ հարապատի Ս. Նազարեանց. ի 11 հունիսի 1847 ի Կա-  
զան. կամելով գրել առ իս՝ կարես ստանալ զհասցեն իմ ի  
պարոն Արկադեայ Արարատեանաց<sup>5</sup>:

Այս ջերմ և արտառուշ նամակը, որի մեջ բարձր է գնա-  
հատվում նկարիշ-արվեստագետը, նրա տաղանդն ու հասա-  
րակական օգտակար գործունեությունը, միաժամանակ ցա-  
վակցվում է նրա նկատմամբ այն ժամանակ եղած անտար-  
բերությունը, անկասկած, խորապես հուզում և միաժամանակ  
ստեղծագործական նոր լիցք է տալիս նկարչին: Հայտնի չէ,  
Ստ. Ներսիսյանը գրե՞լ է պատասխան նամակ, թի՛ ոչ, բայց  
ինչ էլ որ եղած լինի, այդ նամակի պատասխանը կարող էր  
լինել, ինչպես նկարիշն է սիրել հաճախ ասել, «գործ, գործ և  
գործ»:

1847 թ. Ստ. Ներսիսյանը շարունակել է ապրել և առաջ-  
վա պես աշխատել Թիֆլիսում: Այդ մասին մենք տեղեկա-  
նում ենք Թիֆլիսում լույս տեսնող «Կավկազսկի կալենդա-  
րից»: Սակայն 1848 թ. այդ տարեգրքում չի նշվում Ստ.  
Ներսիսյանի անունը: Պետք է ենթադրել, որ այդ տարին նա  
բացակայել է Թիֆլիսից: Հավանաբար տեղափոխվել կամ  
հրավիրվել է Շուշի: Մենք այդ ենթադրությանն ենք հանգում

նաև այն պատճառով, որ Հենց նույն տարում Ստ. Ներսիսյանը նկարել է մի շուշեցու, ավելի լայն իմաստով՝ դարաբաղցի տղամարդու պատկեր («Տղամարդը ծխամորճով»), որի վրա նշված է 1848 թվականը:

1849 թ. Ստ. Ներսիսյանը՝ գարձյալ Թիֆլիսում էր: Այդ տարուց սկսած «Կավկազսկի կալենդարը» պարբերաբար հաղորդում է Թիֆլիսում գործող անձանց, այդ թվում և նկարի Ներսիսյանի մասին: Ստ. Ներսիսյանը շարունակում է ապրել ու աշխատել Ներսիսյան գպրոցում՝ «Յուսումնարանն հայոց Տփխիսայք»:

Այս տարում, մանկավարժական աշխատանքին զուգընթաց, Ստ. Ներսիսյանը նկարում է մի քանի պատկեր, որոնցից մեկ հայտնի են միայն երկուսը՝ գեներալ Մ. Զ. Արզության-Երկայնաբաղուկի և թագուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի դիմանկարները: 1850 թ. Ներսիսյան դպրոցի նոր ուսումնական տարվա կապակցությամբ նույն դպրոցի հոգաբարձու Դ. Խերոգինյանը Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն գրած նամակում հաղորդում է, թե «Հայազգի պատկերահանն Ներսիսեան, որ այժմ բնակի յՈւսումնարանի Զեր, վառեալ ջերմեռանդ սիրով ծառայութեան ազգի, որպես տրիտուր իւրաց բազմադիմի պարտեաց՝ որով պարտաւորեալն է՝ ի շաբաթու՝ ձրի անվարձ ուսուցանել՝ ի դպրոցիս զարհեստ նկարչութեան՝ որոց միանգամ ունիցին յօժարութիւն կամ ցանկութիւն:

Մենք շվատացաք առանց բարեհաճութեան Զեր առնել զայս, սակայն յուսամք զի Զերդ վեհափառութիւն ոչ զանց ստասչիք հաղորդել մեկ զբարեհաճութիւն Զեր ընդ այն...»<sup>6</sup>:

1850-ական թթ. սկզբներից Ստ. Ներսիսյանը շարունակում է աշխատել Ներսիսյան դպրոցում դարձյալ առանց աշխատավարձի, թեև գտնվում էր նյութական ծանր և անապահով վիճակում: Այդ մասին է վկայում նույն այդ տարում՝ 1850 թ. հունիսի 22-ին, Ստ. Ներսիսյանի գրած շափածո նամակ-խնդրագիրը: «Առ յարգոյ բժիշկն Գևորգ Հախվերդյանց»-ին, որտեղ նկարագրելով իր թշվառ, անօգնական վի-

ճակը, «ի համայնից յուսակտուր» խնդրում է 25 ոռփլի  
պարտք տալ իրեն և լինել

«Ինձ կարեկից  
փրցուցանէք  
Զիմ աղետից»:

Բերում ենք այդ շափածո նամակ-խնդրագիրը նկարչի բա-  
նաստեղծական հակումների և նրա գրական ստեղծագործու-  
թյան մասին որոշ պատկերացում կազմելու համար:

«Առ յարգոյ բժիշկն Գեորգ  
Հախվերդեանց.  
Երեկեան օր՝  
Օրն թշուառ,  
Տանջեալ բախտէս՝  
Հարստահար.

Զիմացայ ու՞ր՝ կամ ո՞՛ հանգեայց,  
Եվ կամ յումմէ՝ ունիլ ինձ ճար:

Թափառական՝  
Օրն բոլոր,  
Շրջեալ աստ անդ՝  
Ոլոր մոլոր.

Հրապուրեալ՝ այն ինչ մտաց,  
Բերի առ Զեղ սիրտ ըղձաւոր:

Մինչ յուսահատ՝  
Գլուխ ի կոր,  
Մտի սենեակդ՝  
Մենաւոր.

Այն ինչ բարձեալ՝ զաշս իմ տեսի,  
Վիր իշխանին տակառափոր:

Որ լայն բացեալ՝  
Նա զբերան,  
Կամէր կլուզ՝  
Զմեղ համայն.

Բայց ասուլիսն՝ խառնուփինթոր,

Արար զինքն՝ ծաղը ի բերան:  
իսկ ես նստեալ՝  
խոսք իմ կլեալ,  
իբր ակռաւի՝  
Զագու քաղցեալ.

Նկարէի ուշոյ իմոյ՝  
թէ ի՞ւ գտից Զեղ մեկուսեալ:  
Անդ բանայի՝  
Զեղ առաջին,  
Զգաղտնի հոգւոյս՝  
Խաւարային.

Որ բռնաւոր՝ լեալ իմ բախտի  
Ստրկացայ բոլորովին:  
Այս օրերի՝  
Կեանք իմ քաղցեալ,  
Ոչ ինձ իւիք՝  
Հնար գտեալ.

Ի համայնից յուսակտուր,  
Զեղ միայնոյ ապավինեալ:  
Գրեմ առ Զեղ՝  
Զայս դուզնաքեայ,  
Տոմսակ խնդրոյս՝  
Որ առ Զեղ գայ.

Ընդ ծառայիս շնորհ կալչէք,  
Թուղթ դրամոց քսան և հնգեայ:  
Այդու եղեալ՝  
Ինձ կարեկից,  
Փրցուցանէք՝  
Զիմ աղետից.

Հլու խոնարհ Զեղ մտերիմ,  
Մնամ փութալ վերադարձից:

Ե. ՆԵՐՍԻՆՅԱՆՑ»<sup>7</sup>:

Խնդրած դրամական օգնությունը նկարիւը գ. Ախվերդ-  
45

յանից ստանում է (100 սուբ.), սակայն շարունակում է ապրել նյութական սուղ պայմաններում:

1853 թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում կատարվում են «բարեփոխումներ»: Այդ ժամանակ դպրոցում դասավանդող մի քանի առաջադեմ ուսուցիչներ, այդ թվում երկրաշափության ուսուցիչ Գ. Սունդուկյանը՝ ապագա մեծ դրամատուրգը, Մ. Ախունդովը և նկարիչ Ստ. Ներսիսյանը ազատվում են ուսուցչական պաշտոնից այն պատճառաբանությամբ, թե նրանց դասավանդած առարկաները չեն համապատասխանում հոգեւոր դպրոցի ծրագրերին: Ստ. Ներսիսյանը դարձյալ որոշ ժամանակ մնում է առանց աշխատանքի: «Կավկազսկի կալենդարից» տեղեկանում ենք, որ Ստ. Ներսիսյանը 1856—1857 ուսումնական տարում աշխատում էր «Կովկասյան կուսանաց ինստիտուտում», որպես նկարչության առարկայի ուսուցիչ: Հավանաբար, հենց այս շրջանում էլ նա նկարում է գեներալ Բ. Հ. Բեհրությանի և Ներսես Աշտարակեցու մեծակտավ դիմանկարները:

1857 թ. երկրորդ կեսում արդեն հանրահայտ նկարիչ և մանկավարժ Ստեփանոս Ներսիսյանը հրավիրվում է Շուշի՝ Ղարաբաղի կենտրոնը, որպես հայոց թեմական դպրոցի նկարչության առարկայի ուսուցիչ:

Շուշին այն ժամանակ հայ մշակույթի կարևոր օջախներից մեկն էր: «Թիֆլիսից հետո,—գրում է Լեոն, —ամբողջ Անդրկովկասում Շուշին էր այն հայաբնակ վայրը, ուր առավելապես արմատներ էր բռնում նույն սահմանադրական շարժումը»<sup>8</sup>: Այդ շարժումը, ինչպես հայտնի է, հասարակության առաջավոր խավերի՝ գլխավորապես երիտասարդ սերընդի, դեմոկրատական ձգտումների իրականացման համար մղվող պայքարն էր: Այստեղ էին հավաքված հայ մշակութային գործիչների մի զգալի մասը՝ գրող Պ. Պոռշյանը, մանկավարժ Պ. Շանշյանը, բանասեր Գ. Մուրադյանը (հետագայում Մելիքսեղեկ արքեպիսկոպոսը) և ուրիշներ:

Շուշի քաղաքի հասարակական կյանքի կենտրոնական դեմքերից մեկը Համբարձում Հախումյանն էր՝ Հախումյան-ների հարուստ տան եռանդուն ներկայացուցիչը, որը, ինչպես

վկայում է պատմաբան լեռն, ոմեծ ազգեցություն ուներ քաղաքում: Նա հոշակված էր իր մեծածախս խնչուքներով, առատաձեռն նվիրատվություններով: ...Բայց ինչ էլ եղած լինի Համբարձում աղան իր անհատական կյանքում, մեզ համար նշանակություն ունեցողն այն է, որ այդ մեծափառթամ բուրժուան ուներ առանձին հակում գեպի հասարակական գործունեությունը և, որ ավելի ևս գնահատելին է, առաջադիմական սահմանադրական շարժման կողմնակից էր, իր հեղինակությունը և ուժը նվիրում էր այդ շարժման»<sup>9</sup>: Հախումյանների առանձնատանը կար սալոն, ուր շաբաթվա որոշակի օրերին հավաքվում էին քաղաքի մտավորականները և զրուցում հասարակությանը հուզող հարցերի, մասնավորապես կրթության, դրականության և արվեստի մասին, մտքեր փոխանակում ու բանավիճում:

Ահա այս միջավայրում է ապրում և գործում նկարիչ Ստ. Ներսիսյանը ավելի քան ութ տարի՝ 1857—1865 թվականներին: Այստեղ էլ, հենց, ծագում է քաղաքում հանրային ընթերցարան-գրադարան հիմնելու և գործող թեմական գրադրոցը վերակառուցելու նրա ծրագրերը և դասավանդման ձեվերը նոր ժամանակների պահանջներին համապատասխան վերանայելու մտքերը, նոր և առաջադիմական գաղափարներ, որոնց կենսագործմանը անմիջական և ակտիվ մասնակցություն է ցուցաբերում նաև նկարիչը:

Պետք է, սակայն, նկատել, որ այդ նոր գաղափարները շեն ծագել մեկ կամ մի քանի տեղաբնիկ անձանց մոտ ինքնաբերաբար: Դա ժամանակի պահանջն էր, հասարակության առաջադիմությունից բխող անհրաժեշտության, իուստաստանի խոշոր կենտրոնների և արևմտաեվրոպական քաղաքակիրթ երկրների հետ Շուշիի հասարակության ունեցած մշտական շփման հետեւանք: «Շուշին,—գրում է Լեռն,—իբրև առևմտրականների քաղաք, շատ եռանդուն հարաբերություններ ուներ ուստական խոշոր կենտրոնների, մասնավորապես Մոսկվայի և արտասահմանի հետ: Եվ ահա այս հանապարհով է, երկի, որ Շուշի մուտք են գործում նոր գաղափարներ»<sup>10</sup>:

Այդ նոր գաղափարների իրականացման գործերից մեկն էր՝ Հասարակական (Հանրային) ընթերցարան-գրադարանի ստեղծումը քաղաքում, որին 1858 թ. տրվում է «Թանգարան վերածնութեան» անունը: «Թանգարան վերածնութեան» գրուները լայնորեն բացվում են Հասարակության բոլոր խավերի առաջ: Դա միաժամանակ ծառայում է որպես Հասարակական հավաքույթների, ժողովների և զեկուցումների վայր: Այդտեղ «ամենայն հարազատությամբ քարոզում էին այն ժամանակվա մեր առաջավոր գործիչներ նազարյանի, նալբանդյանի, Շանշանի գաղափարները: Հայ ժողովուրդը պիտի հանդիս գա իբրև գիտակից ազգություն և իր համար փրկության խարիսխ դարձնէ ալգային դաստիարակությունը», գրում է լեռն այդ ժողովներում շոշափվող հարցերի մասին<sup>11</sup>:

Իսկապես, նոր սերնդի կրթության և դաստիարակության հարցերը դառնում են մշակութային այդ օջախի գործիչների առաջնակարգ խնդիրները: «Ժամանակի գիտակից տարրերը ճիռ էին թափում ամրացնելու ազգային դպրոցների գրությունը, որպեսզի Հայ երիտասարդները այստեղ դաստիարակվեն»<sup>12</sup> և, ինչպես գրում է նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը 1861 թ., «Գնան այնուհետև լուսավոր տերությունների համալսարաններումն ու արհեստանոցներումն ստանան բարձր գիտություններ և արհեստներ, որ վերադարձած իրանց հայրենիքն՝ լիցնեն և համբարեն ամենայն մասամբ հայրենաց շտեմարաններն, ինչպես երբեմն մեր սուրբ նախնիքն էին Աթենքից վերադարձած»<sup>13</sup>,

Հինգերորդ դարի Հայ թարգմանիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և մյուսների, մեծ ավանդությը վկայակոչելով, նկարիչը մանկավարժության հարցերում փաստորեն կանգնում է իր ժամանակի առաջավոր մտածողների՝ Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի և մյուսների շարքում: Նա ևս պնդում է, որ եթե ազգի մեջ պակասում են կամ չկան գիտության նորագույն նվաճումները, ապա դրանք պետք է վերցնել օտար մշակութային արժեքներից՝ «ընտրել օգտակարն ու հարկա-

վորը» և «իրենց ազգին և հայրենյաց պիտոյից հարմարեցնենք»<sup>14</sup>:

Իր զարթոնքն ապրող հայ ժողովրդի լուսավորության միջոցով հասարակական խնդիրների լուծումը, ի՞մարկե, արամատական միջոցառում չէր, սակայն նկարչի առաջարկած խնդիրը բխում էր ժամանակի պահանջից: Այդ պահանջը ավելի շատ զգացվում էր Շուշի քաղաքի և ընդհանրապես Ղարաբաղի հայ հասարակության մեջ: Պատահական չէր, որ նույն ժամանակ Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը և մյուս մտավորականները իրենց թարգմանություններով և հոդվածներով աշխատում էին հայությանը ամեն կերպ հաղորդակից դարձնել ուսւական և արևմտահվոռպական գեղարվեստական մշակույթին և գիտության նվաճումների հետ: Հենց իրենք՝ հայ դեմոկրատ գործիչները, և. Աբովյանից սկսած, ինչպես և ինքը՝ նկարիչը, ուսւական կամ եվրոպական կրթություն ստացած մտավորականներ էին, որոնք ուսւակություն մտածողներ Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուքովի, Հետագայում՝ Կ. Դ. Ռեշետիկանի մանկավարժական առաջադիմ ուսմունքի բարերար ազդեցությամբ, ինչպես և եվրոպացի ժան Ժակ Ռուսոյի, Ռոբերտ Օուենի և մյուսների օրինակով պրոպագանդում էին հայ իրականության մեջ մանկավարժական նոր մեթոդներ, Ստ. Նազարյանի խոսքերով ասած «սեփականել յուրյան եվրոպական կրթությունը և լուսավորությունը»:

Հայ առաջավոր գործիչների այդ ճիղերը՝ նըանց համառ և հետևողական պայքարը, տալիս է իր դրական արդյունքը: 1860 թ. սեպտեմբերին Շուշու թեմական դպրոցը վերջնականապես հանձնվում է հոգաբարձության տնօրինությանը, և կոնսիստորիան՝ եկեղեցու հոգևոր իշխանությունը, դադարում է դպրոցի ղեկավարությունից: Կազմվում և հաստավվում է «կանոնադրություն Շուշուայ հայոց հոգևոր դպրոցի», որը նպատակ է դնում «պատրաստել գլխավորապես հայաստանեաց եկեղեցոյ արժանաւոր պաշտօնեաներ և առհասարակ հայոց հասարակութեան համար լուսաւորիալ և ուսեալ անդամներ»<sup>15</sup>:

Աւշագրավ է, որ վեց դասարանոց այդ դպրոցում նկար-չությունը նախատեսվում է 5 դասարաններում (2-6-րդ), իսկ առաջին և երեք դասարաններում նաև՝ վայելագրություն։ Դպրոցի ծրագրերում վայելագրությանը և մանավանդ նկարչությանը այդքան լայն տեղ հատկացնելը, ինքնին, վկայում է այն մասին, որ Շուշի քաղաքի հասարակությունը կարեոր նշանակություն է տվել նոր, երիտասարդ սերնդի գեղարվեստական դաստիարակությանը։ Այստեղ, անկասկած, կարենոր ու վճռական նշանակություն է ունեցել նկարիչ Ստ. Ներսիսյանի մասնակցությունը ինչպես «Թանգարան վերածնութեան» ընթերցարանի հիմնադրմանը, նույնպես և հայոց թեմական դպրոցի նոր կանոնադրության մշակմանը։

«Պետերբուրգի նկարչական ակադեմիան ավարտած հմուտ պատկերացան Ներսիսյանը, — գրում է գրող Պերճ Պոռշյանը, որը մոտիկից զիտեր նկարչին և նրա հետ երկար տարիներ աշխատել էր նույն այդ դպրոցում, — այն անձնավորություններից էր, որ աշխատում էր գործել առանց իր եսը ցույց գնելու։ ...Նրա բնորդոշ հատկությունն էր յուր եղած հայրնակ տեղերի ժամանակակից պահանջներին հետևելն և լուսամբ յուր կարեաց շափ գործին նպաստելը, բայց այնպես որ գործը առաջ ընթանա ու ինքը գործիչներից վերջինը համարվի, կամ բոլորովին չերևա։ Այդ ուղղությամբ նա տարիներով գործակցում էր Ղարաբաղի դպրանոցի հառաջադիմության և հարատեսության համար աշխատողների շարքում»<sup>16</sup>։

Թերևս այդ համեստության պատճառով շատ հաճախ մոռացության է տրվել նկարչի անունը հասարակական գործիչների շարքում։ Նույնիսկ պատմաբան Լեռն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի պատմության մեջ ոչ մի տեղ չի նշում նկարչի անունը, թեև Ստ. Ներսիսյանի մի հոդվածից նա բերում է քաղվածք առանց հեղինակին նշելու։

Մինչդեռ նկարիչ Ստ. նեռախոյանը եղել է Ղարաբաղի կուլտուր-լուսավորական գործիչների շարքում առաջիններից մեկը, մի ակտիվ և նվիրված գործիչ, որը մասնակցել է

այստեղ իրականացվող համարյա բոլոր կուլտուր-լուսավորական գործերին: «Ես ամեն արարմանց և գործողութեանց միջին գտնուելովս անձամբ անձին՝ կարող եմ համարձակ, կենդանի և ականատես վկա համարուիլ ամենայն ազգասեր սրտերի առաջին», գրում է իր մասին Ստ. Ներսիսյանը Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի և «Թանգարան վերածնութեան» ընթերցարան-գրադարան կազմակերպելու մասին 1861 թ. հրապարակած իր նամակ-հոդվածում:

Այդ հանրօգուտ մշակութային գործերին հայ նկարչի ունեցած անմիջական և եռանդուն մասնակցության մասին է վկայում նաև այն փաստը, որ Ստ. Ներսիսյանը, միաժամանակ, նամակներով դիմում է իր ծանոթ-բարեկամներին ու հայտնի գործիչներին՝ շուշեցիների նախաձեռնությունը պաշտպանելու և օգնելու համար: Պահպանվել է այդ նամակներից մեկը, ուղղված ժամանակի անվանի գործիչ Գ. Ախովերդյանին, որով նկարիչը խնդրում է միջնորդել փոխարքայի առաջ «Թանգարան վերածնութեան» հանրային ընթերցարան-գրադարանի կազմակերպումը թույլատրելու համար: Այդ նամակի հետ ուղարկելով նորաստեղծ ընթերցարանի «Կանոնադրությունը», նկարիչը խնդրում է ծանոթանալ և անդամագրվել ամսական 10 ռ. վճար մուծելու պայմանով: Բավական ընդարձակ նամակում շոշափվում են նաև անձնական և հասարակական կարեռ հարցեր, ուստի հարկ ենք համարում մեջ բերել այն ամբողջությամբ:

«Գերհարդո եղբորդ իմո ԳԵՈՐԳԱ  
ողջուն հարգանաց.

Շատ ժամանակից է, որ պատրաստվում էի իմ գծուծ նամակովս արծարծիլ տալ զիս (?)՝ Զեր հիշողության գոնյամեկնվագի մեջում, բայց իմ քաշվող բնությունս ինձի թույլ չ'ը տալիս, որ վստահանայի. այժմ ևս՝ դողդողալով՝ բայց մեծ հուսով, որ տեղիք պիտի գտնի Զեր հիշողության մեկ անկյունումը, որ ժամանակ-ժամանակ հիշել տա Զեր տարագիր նկարչիս: Ես, իմո կողմից ո՛չինչ չունիմ գրելու առողջությանս համար. փառք աստուծո, վերին նախախնամությունը

պահպանում ա մինչեւ Հմի, թեև ինչպես մարդ ենթակա բնության՝ վախտ-վախտ ոտս քարին ա դիպշում, բայց էլի կոկիծը շուտով անց ա կենում, էլի սիրեկանովս զբաղվում եմ և ամենը մոռանում։ Այսոր ինչպե՞ս չի մոռանամ, որ երբեմն էնպես բաների եմ հանդիպում՝ որ կամա ակամա պետք է, որ մասնակից լինինք թե ուրախությանը և թե զայրացածությանը, զոր օրինակ, եթե մաքներիդ կըլինի, մին անգամ, չփիտեմ որ նոմերումն էր, կարգացինք «Մեղուի» թերերի վրա մեկ բանաստեղծական գրատան համար, որ իբր թե բացվել ա Շուշվա Ղալումն հանուն սրբոյն Գեորգա ի պատիվ առաջնորդ հիմնողին։ Բայց ինչ ժամանակ որ ես եկի էս տեղ՝ ոչինչ չի տեսի՝ բացի բարաբանի ձեն լսելուց և երգիշների՝ բանաստեղծական թանգարան վերածնության սրբո Գեորգա անունով Շուշվա Ղալումն։

Հիմա՝ բարեկամ, նորերումս ոմանց ազգասեր երիտասարդներից ծնվեցավ նոր հնարավոր և ոչ բանաստեղծական միտք, որ բաժանորդությամբ ժողովրդականաց բացվի գրատուն հանուն Շուշվա Ղալի հասարակության, որ և բացվեցավ՝ տարին տասն մանեթ բաժանորդությունով, և տեղիվուս բաղաքապետն սիրով համաձայնելուց ետքը՝ ներկայացրուց գուբերնատորին, և գուբերնատորն էլ սիրով ներկայացրել անամեստնիկին հաստատելու համար։ Իշարկե, ես որ առիթ ունեցա էս անգամիս երեսիս միարտեն ետ քաշել և վստահաբար գրել Զեզ, որ արծարծեք Զեր հիշողության մեջ երբեմն Զեր կորած մոլորած նկարչիս, (Զ)որդորված այն ազգասեր երիտասարդներից, նոցա և իմ խնդիրս ներկայացնում եմ Զերդ ազգասեր եղբայրության առջեր, որ սիրով ընդունիք էս աշխատանքը, ինչպես զլխավոր անդամ՝ էս նոր կազմված ընկերությանն՝ հետևել նամեստնիկի մոտ բարեպատեհ ժամու մեջ, որ ևս սիրով ընդունի հաստատելն հանդերձ ընծայաբերությամբ՝ ինչպես Շամախու գրատանն, որով նոր իմն սիրով կը կապեք Զեր հարգությունը՝ Ղարաբաղու հայոց հասարակության հետ ևս։

Կամիմ ասել, որ արդեն բաց արած՝ և ժողովուրդը սիրով

գնում են և պարապում են ընթերցանությունով, թեև առ ժամը գրատունն իրան սեփական գրյանք չունի, բայց բավականին գրյանք ունեցող ժողովուրդներից բերին, ժամանակավոր դրին էն տեղ, որ սկսվի երթևեկությունը և կարդացմի հանդերձ լրագրերով և օրագրերով, մինչև որ իրա սեփականը ստացվի, որ և գրվել ա ամենայն կարելի լրագիրք և օրագիրը ստանալու բաժանորդ՝ թե հայոց և թե ոռուաց: Իհարկե շուշվա-ղալեցիք հույս ունին, որ տեղըդ ևս կը գտնվին ազգասեր բաժանորդներ, թեև հեռի նույն ընթերցարանից, բայց գիտեցած լինին, որ նոցա տեղ տեղվույս ազգի շքավորքը կը պարապմին ընթերցանությամբ, վասն որո թող շխնայեն իրանց մասնակցությունը. կարծեմ որ լավ բան ա, էնպես չի՞. Աստված տա, որ էս օրինակ դառնա ամենայն հայոց քաղաքներումն և սրանից դեպի ուրիշ աստվածահաճո ընկերություններ, որ պաղատելով առ աստված՝ մնամ ողջունելով Զեր համայն գերդաստանին և եղբոր Զերում իվան Ֆեռորիշին, Մտեփան Պավլովիչին և համայն բարեկամաց՝

Մտերիմ և նվաստ եղբայր Զեր

### Մտեփանոս Ներսիսյանց

Հ. Գ. Հլա աշքներս լույս լինի, որ մեր մտաց ծնունդը պսակվեցավ. աստուծուց ընտրած կաթողիկոսն հաստատեցավ իրա աթոռին: Բայց էս բանը շատ վատ է, որ էս տեղ լսվեցավ, թե Լեան Մելիքովն նամեստնիկի կողմից գնում է ընդառաջ Սարգիս եպիսկոպոսի հետ ի միասին, բայց ես կասկածվում եմ, գուցե էղ անիծած սևագլուխը և սևահոգին՝ նուան էն մյուս բաժինը պահած լինի և գործ ածի նրան էլ ուզարկելու համար, որ ինքն այնուհետև... Եվ մեկ էլ խընդրում եմ Զեր հարգությունիցն, որ ինչպես գիտեք Դուք ևս, շատ մարդիկ, թե աշխար(հ)ականք և թե հոգեսրականք՝ մաս-մաս բաժանված, պատրաստվում են, որ զանազան անշահ ու անբարշտական գանգատագրերով կալկապ անեն էս մեր անփորձ, մեր երկրի մարդկանց բնություններին, Օսմանյան տերությունի ծնունդ կաթողիկոսին էլ ներսես հանգուցյաւ

կաթողիկոսի նման դատաստանական չնշին գործերով, որ հետո չի կարողանա շահել ազգին ինչպես իրա նախորդն, վասն որո հարկ է մեզ ամենացունցս արթուն կենալ էս պայմանով, որ մենք ամենայն ջերմեռանդությամբ ամեն դժվարությունների առաջն առնենք և եթե կարելի կըլինի, ամեն տեղից և ամենի սրտիցը հանենք էնպիսի մտքերն և նրանց տեղը սիրո և խաղաղության սերմերը ցանենք մինչև նրա գալը և Ազգը նրա հետ տեսնվիլը: Էս դարումը ազգը մեկ նոր օրինակ մեծագործություն արեց, որ առանց մեկ մեծ փոթորկի և դրամաշարժության կարողացավ իրան եկեղեցվո համար գլուխ ընտրել, որ և հաջողեցավ աստուծո օգնականությունովն: Հիմա էլ եթե կարողացանք էս խորհուրդը կատարել, պետք է գիտենանք, որ ազգի երջանկության առավոտը ծագել ա և չպիտի դարձյալ մերը մտնի: «Տէր տացէ զբան իւր՝ ոյք Աւետարանին զօրութեամբ բազմաւա: Ես էս բոպեին կարդում էի մեր էս աստվածընտիր կաթողիկոսի շարադրած «Բարի մարդ և բարի քրիստոնյա» անվանված գիրքն, վասն որո համարձակվում եմ էսպիսի բաներ խորհրդածել նրա արձանավորության վերա:

...էս նամակիս հետն էլ ուղարկում եմ մեր էստեղի նոր բաց արած գրատան կանոններն, որն որ ուղարկված պիտի ըլնի նամեստնիկին ևս, որ նա հիմնի սորա վերա իրա բարեհաճ հաստատությունն: Մեծ հուսով մնում եմ տեղվույս վառված երիտասարդներն Զեր բարեհաճությամբ ընդունիլությանն: Թե Զեր աշխատ լինելն նամեստնիկի մոտ էս աղղային գործի և լուսավորության տարածվելու միջոցի հաստատությունն և նպաստամատուց լինելվույն, թե Զեր չի հրաժարվիլն հանդամութենե այս նորոգ ընկերությանը, և թե իրանց արժանացնելն Զեր հոգիաշարժ նամակով Զեր գործողության պաղոց կենդանակերպվելու մասին:

Ի 11 մարտի 1859 ամի,

Ի Շուշվա Ղալեն»<sup>17</sup>:

Խորապես համոզված այն բանում, որ «աղգի երջանկության առավոտը ծագել ա և չպիտի մերը մտնի», Ստ. Ներ-

սիսյանը 1860-ական թթ. շարունակում է նոր, կրկնապատկված հուանդով աշխատել: 1861 թ. մարտի 9-ին նա նույնիսկ հանգես է գալիս այն ժամանակ Թիֆլիսում լույս տեսնող «Կոռունկ Հայոց աշխարհին» պարբերականում<sup>18</sup>: Այստեղ նա հրապարակում է մի բաց նամակ՝ հոդված, որտեղ նկարին արծարծում է ժողովրդի լայն խավերի մեջ կուլտուր-լուսավորական պրոպագանդա մղելու անհրաժեշտությունը, նա սիրով պատմում է Ղարաբաղի գավառի, Հայկական Շուշի քաղաքում հանրային ընթերցարան և նոր դպրոց բացելու, այդ հայրենանվեր գործում եղած դժվարությունների և հաջողությունների մասին: Նամակը բնութագրում է նկարչին որպես հասարակական շահերով ապրող առաջադեմ ու ակտիվ գործիչ և մեծ հայրենասեր: Նա գրում է. «Յարգոյ հրատարակիչ Զեղ քաջ Հայտնի է, որ ես անցկացած 1860 թվականիցն մինչ էս օրս արծարծվում է մեր Ղարաբաղցւոց միջում վերին նախախնամութինիցն հոգևորված էս սուրբ միտքն, որ մեր միջին, այսինքն՝ Շուշուայ քաղաքումը կենդրոնացնենք մի այնպիսի հայոց հոգևոր դպրոց, որ համապատասխան լինի մեր նախնական սուրբ վարպետների շաւացն, այսինքն հայոց անարատ մանկունքն թէ հոգևորականաց և թէ մարմնաւորականաց կրթուին և զարգանան հայկական հոգևոր իրենց անարատ և ոչ խմորումն ս. եկեղեցւոյ ծոցումն, իրանց մաքուր և կաթոգին մարց գրկումն, իրանց սուրբ հողումն և ջրումն և յետոյ զարգացած թէ հոգոյ բարոյական կրթութենով և թէ մարմնոյ ամենայն մասին կազդուրմամբ՝ գնան այնուհետև լուսավոր տերութիւնների համալսարաններումն և արհեստանոցներումն ըստանան բարձր գիտութիւններ և արհեստներ, որ վերադարձած իրանց հայրենիքն լիցեն և համբարեն ամենայն մասամբ հայրենաց շտեմարաններն, ինչպես երբեմն մեր սուրբ նախնիքն էին Աթենքից վերադարձած»<sup>19</sup>:

Մի այդպիսի օրինակելի դպրոցի ստեղծման համար, այնուհետև գրում է նկարիչը, ղարաբաղցիների մոտ ծննդում է միտք այն մասին, որ «հասարակության կարողությունը

միացնեն հոգևոր դպրոցի սխմուած արդեանց հետ և նրա հետն էլ խնդրեն վեհափառ կաթողիկոսին, որ մի քանի ժողովրդեան կամաւոր տուրքերն, որն որ մինչև այժմ վիճակն իրան է սեփականացնել, այն տուրքերն փոխադրուի հոգևոր դպրոցի արդեանց հետո»: Այդ միտքը, դրում է նկարիչը, վեհափառը «ուրախութենով ընդունելուց հաքը՝ իրան հայրապետական կոնդակաւ խրախուսեց»: Սակայն, դրում է նկարիչն այնուհետև, «մեկ քանի ժամանակից յետոյ անդամներն կոնսիստորիայի տեսնելով, որ ապօրինի շահուց դոներն սկիտի այնուհետև իրանց առաջին փակվի, ծածուկ հնարքներով սինօթականաց մտքերը պղտորեցին ու էլ հրաման ստացան նրանցից, որ էլ յետ դարձնեն իրանց տեղը նորին վեհափառութեան կոնդակովն ավելացրած վերևը յիշուած ժողովրդոց կամավոր տուրքերն»:

**Ստ.** Ներսիսյանն այնուհետև ցավ է հայտնում, որ «մեկ քանի անմիտ գլուխները դարձան ճիստած, աղքակործան մտքերով շաղախված՝ կոնսիստորիայի անդամների դրդմամբ, ուզեցան որ տակն ու վրայ անեն, շփոթեն ամբողջութեան սուրբ միտքն, բայց... Վասակայ և Մեհրուժանի նման. նրանք մերժվեցին ժողովրդի կողմից: «Նրանք պատրաստվել էին Հայաստանի գլխին կրակ թափելու, բայց սուրբ Վարդանանց խոմբերը ջարդ ու փշուր արին նրանց յոյս դրած կարծր վահանները և իրանց նահատակութիւնովն յիշատակի ծայն կանգնացրին մեր հայոց հարազատ որդիքների սրտումը»:

Իր այդ բաց նամակ-հոդվածի վերջում **Ստ.** Ներսիսյանը դրում է. «...Մտաղրվեցինք և անցգալի եղանակաւ ստորագրութիւն բանալ սուրբ նապատակին հասնելու համար, բացինք և համարյա թէ հասանք ևս արդեն մեր նպատակին, այնպես որ յերկուսն մաստի սկսեցավ ստորագրութիւնն մինչև մարտի 9-ին, որ էս օրս է զանազան տեսակ գրոց գումարըն հասաւ քառասուն հազարին, դեռևս հարիւր անձանց ստորագրութեամբը, որոնց միջին կան ևս կանայք. ժողովուրդիքն վառուած զալիս են ստորագրում: ...Ահա այս ուրա-

խառիթ հանգամանքներն են, որոնք ձեզ ես այսօր իրա ամենայն ճշտութիւնովն հաղորդում եմ կարճ ի կարճոյ՝ թողելով լիակատարն երկրորդ նամակումս: ...ինձ մեծ ուրախութիւն է պատճառում էսպիսի ուրախառիթ լուրերով ուրախացնել մեր համայն ազգային սիրովը վառված սրտերը<sup>20</sup>:

Երկրորդ «լիակատարն նամակը» եթե նույնիսկ գրվել է, ապա այն չի հրապարակվել: Սակայն այս առաջին նամակ-հոդվածը, ինչպես տեսնում ենք, ամբողջապես հագեցված է մեծ սիրով ու հայրենասիրությամբ հանրօգուտ գործի նկատմամբ:

1859 թ. մայիսի 27-ին «ի Շուշուայ Ղալեն» Ստ. Ներսիսյանը ուղարկում է երկրորդ նամակը Գևորգ Ախվերդյանին, ուր գրում է. «Մեծաւ համբերութեամբ մինչ ցարդ ակն առի յարգութեանդ նամակին՝ իրը պատասխանի իմոյն առ Տերդ ուղղեալ, շառի. այժմ պարտ անձինս վարկայ երկրորդելք: Հարցնելով այն մասին, թե «արդեօք ու՞ր մնաց մեր Շուշուայ հասարակութեան անուամբ բացեալ Հայոց գրատան հաստատությունն», նկարիչը, միաժամանակ, շնորհավորում է նրան «Գալուստ Տեառն աստուծընտիր կաթողիկոսի մերոյս Մատթեոսի առաջնոյք»: Լսած լինելով, որ նորընտիր կաթողիկոսին ուղեկցելէն «Գերապատիվ Սարգիս Թեոդորիան, Գաբրիէլ Այվազեան և Մկրտչի Խրիմեան, և որոց «աշոյն խոնարհեալ մատուցանեմ համբոյը թախծանաց՝ շրթմամբ յարգութեանդ», նա խնդրում է «ողջունել սիրով», եթե, իրոք «մեր Յովհաննէս մեծանուն նկարիչ Այվազեանն ընդ եղօրն իւրում եկալ իցե»:

Անդրադառնալով իրեն հուզող հայ ժողովրդի բարեկեցության խնդրին, նկարիչը գրում է. «Հապա, և մեզ որդույս հայկազյանց՝ պարտ է միայն զայս խորհել, զի միով հնարիւք գուն գործել պահել զնա առ մեզ, Հայաստանեաց որդուցս կենդոնացեալ վիճակին հովիւ և առաջնորդ, որ է Տփխիս: Այս մտօք տանջեալ իմ հանապազօր, համարձակեցայ ուղղել առ Զեղ այս նամակաւս մտացս յորդոր, զի ի Զենչ յուսամ լինել կայան և կազդուրիչ այսմ օգտակար խորհրդոյս՝ եթե Զեր ևս յափշտակին միտք: Բաւական է շարագրգիռ մարդ-

կանց թույլ տալ կեղեքել զաղգն ընդ իրաւամբ տնօրէնութեան իրենց, առնել՝ զոր ինչ արարին մինչ ցարդ, փոյթ շունենալով ապագայից Հայկեան որերոյս<sup>21</sup>: «Տատանեալ նկարիշ Ստեփաննոս Ներսիսեանցի» այս և վերջիշյալ նամակները, ինչպես տեսնում ենք, տոգորված են հասարակական շահագրգությամբ, ժողովրդին ծառայելու, նրա թշնամիների՝ «շարագրգիռ մարդկանց» դեմ պայքարելու և նոր երիտասարդ սերնդին լուսավոր գաղափարներով դաստիարակելու ոգով:

Ժողովրդին լուսավորելու, երիտասարդ սերնդի կրթության և գեղարվեստական դաստիարակությանը նպաստելու ձգտումները որոշակի կիրառում են դանում նրա մանկավարժական գործունեության մեջ: Ինչպես նշեցինք, Շուշիի հայոց թեմական դպրոցի բոլոր բարձր դասարանների ծրագրերում նախատեսված էր նկարչության առարկան: Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան ավարտած Ստեփաննոս Ներսիսյանը դասավանդում էր այդ բոլոր (2—6-րդ) դասարաններում: Նշանակում է դպրոցի համարյա բոլոր աշակերտները, այդ թվում և հոգևորական մասի աշակերտները, ստացել են մասնագիտական կրթություն կերպարվեստի գծով, ծանոթացել են նկարչությանը և կերպարվեստի պատմությանը, սովորել են նկարել: Նկարչության ուսուցիչը, սակայն, դրանով շի բավարարվում:

Այստեղ՝ Շուշի քաղաքում, դասերին զուգընթաց Ստ. Ներսիսյանը լայն աշխատանք է տանում հատկապես դպրոցական աղջիկների և կանանց գեղարվեստական, գեղագիտական դաստիարակության համար: Նրա նախաձեռնությամբ Շուշիում կազմակերպվում է կանանց գեղարվեստական-ձեռագործության խմբակ և ինքն էլ սիրով ու ձրիաբար գծանկարում է զարդանկարների էսքիզներ այդ խմբակի համար: «Երկու ժամ հեռավորութենէ—վկայում է ժամանակակիցը,—առանց տաքի և ցրտի նայելու, ոտքով գալիս էր Շուշի և ձրիաբար գծագրութիւն էր ուսուցանում աշակերտներին, և ժախր չպատճառելու համար, ձեռագործութեան օրի-

նակներն ինքն էր գծագրում իրենց երկրի բնական ծաղիկներն, ծառերն, տերեներն և կամ գեղեցիկ տեսարաններն»<sup>22</sup>:

Կլանված հասարակական և մանկավարժական աշխատանքներով, Ստ. Ներսիսյանը քիչ ժամանակ էր գտնում նկարչական ստեղծագործությամբ զբաղվելու համար։ Շուրջ ութ տարվա ընթացքում նա Շուշի քաղաքում մի քանի դիմանկարներ և ավետարանական թեմաներով պատկերներ է նկարում։ Հայաստանի պետական պատմական արխիվում պահպատմ է «Գերապատիվ Դանիել վարդապետ Շահնազարյանցին» ուղղված Ստ. Ներսիսյանի երկտող նամակը, գրված 1860 թ. մայիսի 13-ին, որով խնդրում է ուղարկել իր նկարած պատկերի հոնորարք՝ ...15 ոռություն։ Այդ նամակը բավական զուազ, բայց պերճախոս ներկայացնում է նկարչի նյութական աննպաստ վիճակը։ Բերում ենք այդ նամակը ամբողջությամբ։ «Հոգեոր հայր,—գրում է նա գերապատիվ Դանիել վարդապետին.—Դուք տեղյակ լինելով իմ այժմյան դրությանս՝ հույս ունիմ չի զլանաք առաքել իմ ձեզանից ստանալիք պատկերի մասին (համար) տասն և հինգ մաներն, որ մնացել ա ձեզ մոտ և որին պետք է ընդունի իմ կըծկած գրությունս մեծավ գոհունակությամբ, իհարկե, Դուք այժմ կըմտնեք իմ դրությանս մեջ և չեք դատարկ դարձնիլ իմ ծառայիս»<sup>23</sup>։

Թե ինչ պատկերի մասին է խոսքը, այժմ դժվար է որոշակի ասել։ Հայտնի է միայն, որ այդ տարիներին Ստ. Ներսիսյանը նկարել է փրկչի պատկերը։ Վերոհիշյալ երկտող նամակը, հավանաբար, վերաբերում է այդ շրջանի եկեղեցական նկարների համար տրվելիք վճարին։ Այստեղ ուշադրություն է գրավում նաև այդ դիմումի վրա ժամանակի նշանավոր հոգեոր գործչի մակագրությունը՝ «Հատուցի տասն ոռութիւնի արծաթ»։ այսինքն՝ շատ ավելի քիչ, քան նախօրոք պայմանավորված գումարը։

Ստ. Ներսիսյանը այդպիսի աշխատանքներ շատ է նկարել։ Դրանց մի մասը նա նվիրել է եկեղեցիներին ձրիաբար։ «Շատերը,—գրում է Պոռշյանը,—Ներսիսյանին դատապար-

մոռմ էին իբրև ծույլ նկարիչ, բայց նա անուշադիր էր զըտ-նըվում շհասկացողների բամբասանքներին և նեղ ու մտերիմ շրջանների մեջ միայն բացատրում իր սիրտը: Նա նկար-չությունից վեր էր համարում համեստ և օգտակար գործչի դերը<sup>24</sup>: Այդ համոզմամբ էլ իր ժամանակի մեծ մասը նկա-րիչը հատկացնում էր հասարակական օգտակար գործունեու-թյանը, եռանդուն մասնակցություն ունենալով հասարակա-կան համարյա բոլոր ձեռնարկումներին: 1863—1864 թթ. նա, օրինակ, անմիջական մասնակցություն է ունենում Շու-շի քաղաքում 1864 թ. ապրիլի 7-ին օրիորդաց (Մայրամյան) դպրոցի հիմնադրմանը՝ մի առաջավոր դպրոց, որի «նսկա-տակն էր պատրաստել լուսավորյալ վարժապետներ և լու-սավոր մայրեր»<sup>25</sup>:

Թերեւ երկար շարունակվեր նկարչի հասարակական-մանկավարժական գործունեությունը Շուշի քաղաքում, եթե որոշ տեղաշարժեր շկատարվեին մշակութային այդ օջախում: 1860-ական թթ. կեսերին բավական նոսրանում է մտավո-րական գործիչների շրջանը այդ առևտրական քաղաքում: Թեմական դպրոցի տնօրենն Պ. Շանշյանը ազատվում է պաշ-տոնից և տեղափոխվում Թիֆլիս: Շուշիից հեռանում է նաև նկարչի մտերիմ ընկեր և գործակից, գրող Պ. Պողյանը: Թիֆ-լիս և Բաքու են մեկնում ուրիշները: Ստ. Ներսիսյանը, որ այդ շրջանում ապրում էր Համբարձում Հախումյանի հյուր-ընկալ տան սենյակներից մեկում, իրեն միայնակ էր զգում: Քանասեր Մ. Մուրադյանը, որը հետագայում հրապարակում է «Փետրոս Շանշյան» մենագրությունը, գրում է, որ «Հինգ ամսեն ավելի մնացի ի տուն ազնիվ Հախումյանցի, վայելե-լով նահապետական հյուրասիրութեան ամեն բարիքներն ու սփոփանքները, սեղանակից ունենալով նաև հայրենասեր նկարիչ ներսեսեան»<sup>26</sup>:

Սակայն այդ հյուրասիրությունները և, մանավանդ, Հախումյանների հարուստ առանձնատանը մշտապես կաղ-մակերպվող ճոխ ու մեծածախս ճաշկերույթները նրան չէին հրապուրում: Նա ցանկանում էր կատարել հանրօգուտ աշ-

խատանք, բայց այդպիսին հետղետե պակասում է Շուշի-ում: «Ղարաբաղի դպրոցական վարչությունը փոխվելուց հետո,—գրում է Պ. Պոռշյանը իր ընկերոջ մասին,—Ներսիսեանը ծերության հասակում ավելորդ համարեց մնալ Շուշիում և տեղափոխվեցավ Թիֆլիս»<sup>27</sup>:

1865 թ. սկսած նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի հետագա կյանքը և գործունեությունն ընթանում է Հայ մշակույթի ամենախոշոր կենտրոնում՝ Թիֆլիսում: Իր բացակայության ավելի քան 8 տարիների ընթացքում այս քաղաքը արագորեն առաջադիմել էր: 1860-ական թթ. ևս Հայերը այստեղ կազմում էին քաղաքային բնակչության մեծամասնությունը: Այդ «ժամանակ տեղական բուրգուազիան, որը բաղկացած էր բացառապես Հայ կապիտալիստներից, զգալիորեն ամրացել էր և խաղում էր առաջին զութակի դերը քաղաքային կյանքում, լայն ու ակտիվ մասնակցություն ունենալով Հատկապես քաղաքային ինքնավարության մեջ»<sup>28</sup>: Այստեղ էին կենտրոնացված Հայկական թերթերի ու ամսագրերի խմբագրությունները, ուսումնական հիմնարկների և բարեգործական կազմակերպությունների վարչությունները, գրականության և արվեստի, թատրոնի ու երաժշտության ղեկավարմարմինները, մշակույթի շատ գործիչներ: 1863 թ. այստեղ՝ Թիֆլիսում, հիմնադրվում է Հայկական ազգային թատրոնը իր բավական մեծ թատերախմբով, որը դեռևս 1855 թ. Թամամշյանի կողմից կառուցված օպերային թատրոնի հետ դառնում է մայրաքաղաքի հիմնական կուլտուրական օջախը: Այստեղ 1868—1869 թթ. ձմռանը Հայ ժողովրդի մեծ զավակ ժողանկարիչ Հովհաննեսի ցուցահանդեսը, որն, անկասկած, այցելում են նկարիչներ Ստ. Ներսիսյանը, Հովհաննեսի ցուցահաննեսի ժամանակակից պատկերացի էին Հայերը 200 հոգու համար Հայազգի մեծ ժողանկարչի ու նրա թիֆլիսյան ցուցահանդեսի պատվին:

Շփումը մշակութային գործիչների և Թիֆլիսում գործող ռուս և օտարազգի արվեստագետների հետ նպաստում է Ստ. Ներսիսյանի ստեղծագործական եռանդուն գործունեությանը։ Դրանով էլ պետք է բացատրել, որ 1865—70-ական թթ., ընդհուպ մինչև մահը, Ստ. Ներսիսյանը ստեղծում է հայ մշակութային գործիչների շատ ավելի կերպարներ, քան մինչև այդ՝ 1840—50-ական թթ.։

1878 թ. մարտի 27-ին Ստ. Ներսիսյանը Թիֆլիսից էջմիածին է ուղարկում նամակ Գեորգ Դ. կաթողիկոսին և Ներսես Աշտարակեցու երկու դիմանկարները որպես նվեր։ Այդ նվիրատվական նամակում Ստ. Ներսիսյանը գրում է. «...Զէ անծանոթ Զերումդ վեհի՝ ազգաշեն գործերն անմահ Ներսեսի, յորոց նշանավորներից մինն և գլխավորն՝ Տիփիսիու Ներսիսեան աղջային հոգեոր դպրոցն, ուր եղել է և իմ՝ նվաստ նկարչիս, ուսում և կրթությունն... ևս՝ նվաստ նկարչւս, իմ խորին զգացմամբ և երախտապարտ հոգվով արկի զայս գործ իմս մատանց յազգս, որ յուրաքանչյուր ոք ունենալով առաջի աշաց՝ անջինջ պահեսցե անմահ հիշատակն երջաննկին։ Արդ, վեհափառ տէր, Դուք որ կալնում էք նորա գահն Զերդ վեհ հոգով և ազգաշեն գործերովդ, ուրեմն և ես բաղդ իմս որդիական պարտավորությամբ առաջի առնել Զերդ վեհափառ օծության գործ իմոց մատանց զայս զույգ պատկերս անմահ Ներսեսի, ունենալով անդրդվելի հույս և հաստատուն հայլատ սիրով և քաղցրությամբ ընդունելության՝ մնամ ակնկալու վեհիդ օրհնության»<sup>29</sup>։

Միրով և քաղցրությամբ նվիրված նկարչի այդ «զույգ պատկերները» մենք փնտրեցինք էջմիածնի Մայր տաճարի թանգարանում, Վեհարանում և եկեղեցական արվեստի ֆոնդերում, սակայն Ներսես Աշտարակեցու յուղանկար պատկեր, այն էլ «զույգ պատկեր» մենք չգտանք: Ենթադրում ենք, որ այդ «զույգ պատկերները» կարող են լինել Ներսեսին՝ ամբողջ հասակով պատկերող վիմագրություններ, կատարված, ինչպես նկարիչն է գրում՝ «իմոց մատանց»։ Այդպիսի մի վիմագրություն գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում, որի մասին խոսք կլինի առանձին։

Բացի վերոհիշյալ «զույգ պատկերներից», 1865—70-ական թթ. Ստ. Ներսիսյանը նկարում է ժամանակակիցների մի շարք դիմանկարներ և թեմատիկ-սյուժետային այլ պատկերներ, որոնցից մեզ են հասել Գրիգոր և Սոֆյա Իզմիրյանների, Մելիք-Աղամյանի, կանացի մի քանի դիմանկարներ և «Խնջույք գետափին» թեմատիկ պատկերը, նկարիչը, իշարկե, կարող էր շատ ավելի պատկերներ նկարել, քանի որ նա անընդհատ գործ էր պահանջում հասարակությունից, այսինքն ուղում էր, որ հայ հասարակությունը լինի կերպարվեստը գնահատող և գնողունակ, ինչպես եվրոպական քաղաքակիրթ երկրներում։

Սակայն ավազությունը նոր ձեռավորվող հայկական բուրժուազիան՝ ունեոր դասը, ոչ միայն գնողունակ չէր, այլև այն ժամանակ դեռ շատ հեռու էր գեղեցիկ արվեստները, մասնավորապես նկարչությունը, ըստ արժանվույն գնահատելուց և արժանին հատուցելուց։ Թերեւս դրանով պետք է բացատրել, որ դիմանկարի Հակոբ Հովհաննեսը թողեց գնաց Պարսկաստան, իսկ Ստ. Ներսիսյանը մնաց հասարակության ուշադրությունից դուրս՝ աղքատ վիճակում։ Մշտապես նյութական կարիքի մեջ ապրող նկարիչը հնարավորություն չի ունենում ոչ միայն ընտանիք կազմել, երեխաներ ունենալ, բարեկեցիկ կյանք ստեղծել իր համար, այլև ստիպված է լինում պարբերաբար օգնություն խնդրել ու ապրել պարտքերով։

Պահպանվել է 1869 թ. օգոստոսի 28-ին Ստ. Ներսիսյանի գրած մի նամակը իր մոտիկ ծանոթ Պետրոս Սիմոնյանին, որտեղ նա ասում է. «Պատվական Պետրոս եղբայր, անցյալ օրը զգիտեմ դուք ինձ վրա մեկ բան նշմարեցիք թե ոչ, միայն թե ես իմ բնական այդպիսի բաներում ամոթխածությամբս չկարողացա Զեզ ևս հայտնել ինչպես սրտիս մոտ եղբարս՝ իմ պակասությունն, և որից ստիպված՝ այսօր ես փոքրիկ տռասակովս խնդրում եմ, թեև քաջ զիտեմ Զեր սահմանափակ կարողությունը ես, որ ինձ համար և իցէ մեկ երեսուն մասնեթ ճարեք և ուղարկեք երեք ամիս ժամանակով,

որ ես նրանով ինձ անհանգիստ անող հարկերս լցուցանեմ՝ մինչև ձեռքիս սկսած պատկերներն ավարտեմ և մեծավ շնորհակալությամբ վերադարձնեմ ձեր այսօրվա ինձ տանջող հարկիցն աղատող դրամն և եթե միջոց գտնեք այս օրերս՝ խնդրեմ, մեկ ինձ հանդիպեցեք, որիդ պիտի մնամ անպատճառ տեսնվելու իմ կացարանում»<sup>30</sup>: Այս անձնական նամակի վրա մակագրված է «տվի 50 ռուբլի»:

Այդ գումարով նա, իհարկե, փակում է իր հարկերն ու պարտքերը, «ձեռքի սկսած պատկերներն ավարտում» է, սակայն դրանով բնավ էլ չեն բարելավվում նկարչի նյութական պայմանները: Ստ. Ներսիսյանը շարունակում է ապրել միայնակ և աղքատ վիճակում: Ծանոթ մարդկանց հորդորանքով հնարավոր է լինում վերացնել նկարչից պահանջվող պետական հարկերը, որը որոշ շափով թեթևացնում է նրա վիճակը: Իր նկարած դիմանկարների համար ստացած շնչին հոնորարը նույնական չէր բավարարում նրան, որովհետև հայ մտավորականները, որոնց նկարում էր իր իսկ ընտրությամբ, նույնակես միջոցներ չունեին նկարչին լիառատ վարձատրելու համար, իսկ շատ դիմանկարներ նա ուղակի նվիրել է պատկերվողներին: «Նա երբեք շզործածեց իր վրձինը Մամոնայի պաշտման համար,—գրում է ժամանակակիցը նկարչի մահից 8 տարի հետո,—նա չէր նկարել առևտրական, նա՛ գաղափարական նկարիչ էր, նրա վրձինը ծառայում էր գաղափարին և ոչ ոսկուն»<sup>31</sup>:

Իր ամբողջ կյանքը և վրձինը նվիրած լինելով գաղափարին՝ ժողովրդի լուսավորության և նոր, երիտասարդ սերնդի գեղարվեստական դաստիարակության վեհ գործին, Հայրենասեր նկարիչը թեև ապրում էր նյութապես աննպաստ վիճակում, սակայն իր լավատեսական բնավորությամբ երբեք չէր ընկճվում:

Այդ է վկայում այն փաստը, որ ժամանակից շուտ ծերացած 65-ամյա նկարիչը 1880 թ. հարց է բարձրացնում նոր նախիջևան քաղաքի 100-ամյակի տոնակատարության առիթով ստեղծել դրա հիմնադրի՝ հասարակական ու մշակութային խոշոր գործիչ, կաթողիկոս Հովսեփ Արդության-Երկայ-

նաբազուկի մեծադիր պատկերը։ Նրա լավատեսության և հայրենասիրական խորը զգացումների ցայտուն արտահայտությունն են դառնում նաև հայոց գրերի գյուտի ու ազգային գրականության մեծ սկզբնավորողներ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի դիմանկարները, որոնք նա նկարում է 1882 թ. Թիֆլիսում, 67 տարեկան հասակում, մոնումենտալ ստեղծագործություններ, որոնցից հատկապես Մեսրոպ Մաշտոցի դիմանկար-պատկերը մտավ ժողովրդի մեջ, ժողովրդականացավ և դարձավ լայնորեն ճանաչում գտած կերպար հայ կերպարվեստի պատմության մեջ առ այսօր։ Ավելին։

Շարունակելով իր հայրենասիրական գործունեությունը այս բնագավառում, Ստ. Ներսիսյանը 1882—1883 թթ. ստեղծում է այդ դիմանկար-պատկերների վիմագրական օրինակները և բազմացնելով, գրանք տարածում է ժողովրդի մեջ։ Նկարչի ցանկությամբ և նրա հորդորանքով այդ երկու գունանկար դիմանկարները հետագայում ևս՝ հեղինակի մահից հետո, կրկին փորագրվում են վիմագրական քարի վրա, բազմացվում և «Աղբյուր» մանկապատանեկան ամսագրի միջոցներով տարածվում ուսումնական և կուլտուր-լուսավորական հիմնարկներում։

Իր անսպառ աշխատասիրության հետ, չնայած պատկառելի տարիքին, նկարիչը չէր կորցրել հետաքրքրությունը նորի և գեղարվեստի աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ։

Այդ տեսակետից հետաքրքրական է նկարիչ Գ. Բաշինչաղյանի պատմածը այն մասին, թե ինչպես 68-ամյա նկարիչը լսած լինելով 26-ամյա Բաշինչաղյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը բացվելու մասին, 1883 թ. Հոկտեմբերին, դանդաղաքայլ, թույլ ոտքերով և ձեռնափայտին հենված գալիս է ցուցահանդեսը դիտելու։ «1883 թ. Ստ. Ներսիսյանը այցելեց իմ առաջին ցուցահանդեսը,—գրում է Գ. Բաշինչաղյանը հետագայում,—նա ակնոցներն աշքերին, հաստ ու պարզ ձեռնափայտը ձեռքին առանձին հետաքրքրությամբ և ուշադրությամբ նկարները դիտելուց հետո ար-

տասանեց իր մեղմ ձայնով. «Աստվածային կայծ կա» ու միքանի խրախուսական խոսքով հորդորելուց հետո հեռացավ»<sup>32</sup>:

Գ. Բաշինչաղյանը այնուհետև տալիս է նկարիչ Ստեփանոս Ներսիսյան-մարդու արտաքին նկարագիրը. «Նա փոքրահասակ, նիշար և թիաղեմ, շարժուն մի ծերունի էր, ակնոցներով զինված...մեղմ ձայնով, որ հաճելի տպավորություն էր թողնում տեսնողի վրա»<sup>33</sup>: Խսկապես, մեղ հասած նրա միակ լուսանկարը դիտողի վրա նույնպես հաճելի տպավորություն է թողնում:

Կյանքի վերջին շրջանում ավելի են ծանրանում նկարչի նյութական պայմանները: Բնավորությամբ զուսպ, ամաշկոտ և անհամարձակ լինելով, նա մնում է օրվա հացի կարոտ: «Հանգուցյալը հայ ժողովրդից այս վերջին տարիներին էլ չէր խնդրում օժանդակություն, այլ գո՛րծ, գո՛րծ և գո՛րծ ասելով էլ ավանդեց հոգին»—գրում է «Մշակ» թերթը:

Ստեփանոս Հակոբի Ներսիսյանը մեռավ 1884 թ. մարտի 23-ին Թիֆլիսում, Միքայելյանի՝ անտեր-անտիրական-ների և աղքատների հիվանդանոցում, 69 տարեկան հասակում: «Նա հոգին ավանդեց շրավորության մեջ և գուցե հենց մի քանի օր անօթի մնալուց», գրում է «Մշակը», ավելացնելով. «Նրան թաղեցին ծանոթ-բարեկամները»: Թաղումը տեղի է ունենում 2 օր հետո՝ մարտի 25-ին, Խոջի վանք կոչված գերեզմանոցում: «Հուղարկավորությանը ներկա էին շատերը: Մինչև գերեզման նրան տարան ուսերի վրա: Պարոն Գ. Խատիսյանը մի շատ սրտաշարժ ճառ ասեց, բոլորեքեան լաց էին լինում»<sup>34</sup>:

Անդրադառնալով նկարչին, նույն թերթը «Ներքին լուրեր» բաժնում գրում է. «Հանգուցյալը լինելով վերին աստիճանի գաղափարական մարդ և իր անձը բոլորովին նվիրած լինելով իր ժողովրդին, մինչև մահն էլ աշխատում էր նրա համար: Բայց հայ ժողովրդիը (իմա՝ բուրժուական հասարակությունը.—Մ. Ս.) շգնահատեց նրան կամ ավելի լավ է ասել հանգուցյալը իր անաշառության, պատվասիրության և անկեղ-

ծության շնորհիվ շգնահատվեց հայ ժողովրդից: Նկարիչ Ստ. Ներսիսյանը իր կյանքն անցկացրեց միայնության մեջ և շնայելով նրան, որ նա կարող էր շատ փառավոր ապրել, եթե միայն կամենար: ....Բայց մենք մեր օտարասիրության շնորհիվ խորշեցինք այդ մարդուց, որը չնայած իր դառն վիճակին դարձյալ ներողամտությամբ վերաբերվելով դեպի մեզ, դարձյալ չէր դադարում գործել մեզ համար»<sup>35</sup>:

Հայ մշակույթի ժամանակակից գործիչները, ինչպես վկայում է նկարիչ Գր. Շարբարչյանը, խորապես ցավակցում էին նաև այն բանի համար, որ «Ներսիսյանի կորուստը խիստ դգալի է մանավանդ այն պատճառով, որ այն ժամանակ շատ սակավ էին կովտուրապես զարդացած գեղարվեստագետները: Նա ընկավ ժամանակից առաջ, որպես մի շիտակ զինվոր կովտուրական ֆրոնտի վրա»<sup>36</sup>:

Ինչպես արդեն ասել ենք, Ստ. Ներսիսյանը ընտանիք և հայքագատ, ազգականներ չի ունեցել: Նա ապրել է միայնակ՝ ամուրի: Այդ պատճառով, նկարչի մահից հետո նրա անձնական իրերն ու նկարչական պարագաները, այդ թվում՝ նրա ստեղծագործությունները, երկար ժամանակ մնում են անտեր-անտիրական: Ութ ամիս հետո՝ 1884 թ. նոյեմբերի 18-ին, Թիֆլիսում լույս տեսնող «Կավказ» թերթը հրապարակում է դատական մարմինների հետեւյալ հայտարարությունը: «Թիֆլիս քաղաքի հաշտարարական դատարանի առաջին հաշտարարական բաժանմունքը դատակում է Թիֆլիսում մեռած նկարիչ Ստեփանոս Հակոբի ներսիսյանցի (նա ինքը՝ Ներսեսյանի) ժառանգներին հարուցել իրավասության իրավունք հանգուցյալից հետո մնացած ունեցվածքի նկատմամբ, քաղ. օրենսգրքի 1841 թ. գլ. XI, I մասով սահմանված ժամկետում (հրատ. 1857 թ.)»<sup>37</sup>:

Դրանից հետո, երբ ոչ ոք չի ներկայանում ժառանգության իրավունքի հարցով, նկարչի տանը և արվեստանոցում եղած իրերը, նկարչական պարագաները և «յուղաներկ պատկերները», այդ թվում Գ. Բաշինջաղյանի տեսած «Շա-

միլի ժամանակվա պատերազմական արկածները» ներկայացնող «Մեծ նկարը» և արվեստագետի անձնական արխիվը տեղափոխվում են Ներսիսյան դպրոցի նկուղը, իսկ բնակարանը հանձնվում է ուրիշի: 1920-ական թթ. սկզբը՝ ներին այն շենքը, որի վերնահարկում ապրում էր նկարիչը (հայտնի Արշակոնիների առանձնատունը), տեղավորվում է վրաց գեղարվեստի ակադեմիան:

Այժմ ոչինչ չի մնացել այն ամենից, ինչ թողել է նկարիչը իր տանը, որը և եղել է արվեստանոց:

## ՍՏԵՂԾԱԿՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղամոս ներսիսյանը նկարել է դիմանկարներ, կենցաղային ու պատերազմական թեմաներով սյուժետային պատկերներ, բնանկարներ, եկեղեցական նկարներ, զարդանկարների էսքիզներ ձեռագործության համար, կատարել է փորագրություններ վիմագրական քարի վրա՝ ստեղծել է վիմագրություններ։

Արվեստագիտական գրականության մեջ, սակայն, առայսօր հստակ պատկերացում չկա Ստ. ներսիսյանի նկարչության ժանրերի և, ընդհանրապես, նրա գեղարվեստական ժառանգության մասին։ Մինչև վերջին ժամանակներս նկարիչ Ստ. ներսիսյանը ներկայացվել է որպես միայն մի քանի դիմանկարների և կենցաղային թեմայով մի պատկերի հեղինակ։ «Պահպանվել է շատ քիչ աշխատանքներ ներսիսյանց—ընդամենը մի քանի դիմանկար և մեկ ժանրային պատկեր», գրել է արվեստագիտ-քանդակագործ Ս. Լ. Ստեղամոսը 1939 թ. Մոսկվայում լույս տեսած «Ակնարկներ Հայաստանի կերպարվեստի պատմության» հոդվածների ժողովածուի մեջ, նշելով միայն Արղությանի, Բեհբությանի, Եղ. Աբովյանի դիմանկարները և «Խնջույք գետափին» պատկերը<sup>1</sup>։ Այդ պատկերացումը ավանդաբար կրկնվել ու շարունակվում է մինչև մեր օրերը։ 1958 թ. Երևանում լույս տեսած «Բնանկարը և հայ նկարիչները» գրքում նկարիչ-արվեստաբան Ռ. Շիշմանյանը, արխիվային փաստաթղթերին անծանոթ լինելով, նկարչի ծննդյան տարեթիվը գետեղում է 1915—1920 թթ. միջև և գրում է. «Նրա կյանքի և գործունեության մասին ցարդ շունենք լայն ժամանություն, մեզ հասել հն միայն

Կցկտուր ստեղեկություններ», իսկ ստեղծագործություններից՝ «փոքրաթիվ նմուշներ»<sup>2</sup>: 1962 թ. Մոսկվայում լույս տեսած «Հայաստանի կերպարվեստը» գրքում հեղինակները նշել են միայն շորս դիմանկար և մեկ ժանրային պատկեր<sup>3</sup>, իսկ «Աշխարհի երկրների և ժողովուրդների արվեստը» համառության 5-րդ հատորում<sup>4</sup> և «Համընդհանուր արվեստի պատմության» 5-րդ հատորում<sup>5</sup> նույնիսկ դիմանկարչական ոչ մի ստեղծագործության անուն չի հիշատակվում: Դա առանձնապես տարօրինակ է թվում, եթե հենց նույն ժամանակ՝ 1962 թ., Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» ամսագրում հրապարակված նկարչի ստեղծագործությունների ցուցակում նշվում է 28 գունանկարչական և գրաֆիկական աշխատանք<sup>6</sup>: Դրանից հետո՝ 1965 թ., «Հայաստանի պետական պատկերասրահի սեփականությունը կազմող 8 գունանկարչական դիմանկար և մեկ կենցաղային պատկեր»: Ութ գունանկարչական պատկեր է նշում և վերլուծում նաև արվեստաբան Ե. Մարտիկյանը «Հայկական կերպարվեստի պատմություն» գրքի առաջին հատորում<sup>8</sup>, իսկ 1979 թ. Երևանում լույս տեսած «Ակնարկներ Հայկերպարվեստի պատմության» ուսուերին ծավալուն գրքում (հեղինակային կոլեկտիվ) ուղղակի գրված է. «այժմ նրան է վերագրվում 14 դիմանկար և մի ժանրային պատկեր»<sup>9</sup>:

Նկարիչ Ստ. Ներսիսյանի մասին արտահայտվել է նաև տողերիս գրողը: Դեռևս 1953 թ. Հրատարակված «Հայկական և ոռոսական կերպարվեստի կապերը XIX—XX դարերում» գրքում, թեմայի պահանջի սահմաններում, մենք նշել ենք միայն մի քանի ստեղծագործություն<sup>10</sup>, իսկ 1979 թ. «Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան և Հայ նկարիչները» գրքում՝ շուրջ 20 գունանկարչական և գրաֆիկական պատկեր<sup>11</sup>:

Էլ ավելի շփոթմունք է տիրում Ստ. Ներսիսյանի գեղարվեստական ուղղության՝ նրա ստեղծագործական մեթոդի, գնահատման խնդրում: Մինչև վերջին ժամանակներս Հայ արվեստագիտության մեջ նկարիչը դիտվում էր որպես

ոեալիստական ուղղության ներկայացուցիչ: Դեռևս 1939 թ.  
Ս. Լ. Ստեփանյանը գրել է. «Ստ. Ներսիսյանը 1850-ական  
թվականներին ոեալիզմի ավելի հստակ ու ավարտուն ներ-  
կայացուցիչն է», որը մենք համարում ենք միանգամայն  
Ճիշտ: Մինչդեռ քառասուն տարի հետո՝ 1979 թ., հրապա-  
րակված վերոհիշյալ «Ակնարկներ Հայ կերպարվեստի պատ-  
մության» ուսւարեն գրքում, առանց հիմնավորման, հայտա-  
րարվում է. թե «Հայ նկարչության մեջ նրա ստեղծագործու-  
թյունը ներկայացնում է զարգացման ակադեմիական ուղղու-  
թյունը»<sup>12</sup>:

Ստ. Ներսիսյանի ողջ ստեղծագործությունը՝ նկարչի  
գեղարվեստական ժառանգությունն ամբողջապես, ակադե-  
միական ուղղության վերագրելը կապված է ակադեմիա-  
կան ուղղության՝ ակադեմիզմի, և գեղարվեստական կրր-  
թության ակադեմիական սիստեմի միջև եղած տարրերու-  
թյան անտեսման հետ: Հայտնի է, որ ակադեմիական ուղ-  
ղությունը կտրում էր արվեստը իրականությունից: Այդ ուղ-  
ղությունը հաստատում էր վերացական՝ ժամանակից և ազ-  
գայինից գուրս գեղեցիկի նորմաներ, անտիկ և անցյալի  
դասական արվեստի ձևերի ու կանոնիկ կոմպոզիցիաների  
ընդօրինակում, պրոպագանդում էր իդեալիստական գեղա-  
դիտությունը, ծառայեցնելով այն իշխող դասակարգի ձեռ-  
քին որպես պայքարի զենք՝ ուղղված առաջավոր դեմոկրա-  
տական արվեստի գեմ: Դիմանկարում ակադեմիզմն արտա-  
հայտվում էր անձի ցուցադրման մեջ, նրա պայմանական,  
երբեմն ուղղակի կեղծ թատերական կեցվածքի, արհեստա-  
կան դիրքի, հագուստի փառահեղության, թանկարժեք կտո-  
րեղենի ու զարդերի փայլի վերարտադրման մեջ: Պահանջ-  
վում էր, որ թվա թե պատկերվող խոսում է իր մասին. «Նա-  
յիր ինձ վրա... ես այդ քաջարի զորավարն եմ»: Այդ կարգի  
դիմանկարներում մարդու արժանապատվությունը որոշվում  
էր նրա բարձր դասին պատկանելությամբ, ազնվականական  
ծագումով, սոսկ պետական կամ զինվորական բարձր կոչումով  
և այն կշիռով, որով նա տեղ էր գրավել հասարակության  
մեջ: Այդ ամենը դիմանկարին տալիս էր պաշտոնականու-

թյուն, և որ ակնառու է, գեկորատիվ շքեղություն։ Այդօրինակ դիմանկարներում արտահայտվում էին ազնվականության դասային իդեալները։

Ստ. Ներսիսյանի դիմանկարները, իհարկե, այդ կարգի ստեղծագործություններ չեն։ Ինչպես ցույց կտանք, դրանք խորապես ուելիստական և դեմոկրատական բնույթի պատկերներ են՝ ժամանակակից անձանց և պատմական գործիշների համոզիչ կերպարներ, ստեղծված XIX դարի կեսերին հայ աղդային, գեղարվեստական մշակույթի ընդհանուր զարգացման հենքի վրա։

Ստ. Ներսիսյանի գեղարվեստական ժառանգության և նրա ստեղծագործական մեթոդի մասին եղած վերոհիշյալ անորոշ պատկերացումներն ու շփոթմունքը ինքնին վկայում են, որ նկարչի կյանքը և գործունեությունը մինչև այժմ հանգամանորեն չեն ուսումնասիրված։

Ներկա աշխատության մեջ, որպես առաջին փորձ, մենք կաշխատենք փաստական նյութերի ընձեռած հնարավորությունների սահմաններով՝ ներկայացնել բազմավաստակ նկարչի հիմնական ստեղծագործությունները, նշելով դրանց տեղը և նշանակությունը XIX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ։

#### Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Զ Խ Ե Ն

### ԱՏ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՎԱՐ. ՇՐՋԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1835—1845)

Ստեփանոս Ներսիսյանը նկարչությամբ սկսել է զբաղվել վաղ հասակից։ Դեռևս 1830-ական թթ. կեսերին՝ 19—20-ամյա պատանին, Թիֆլիսում, այնուհետև Պետերբուրգում կատարում է նկարչական աշխատանքների «շատ փորձեր,—որոնք, ինչպես գրում է նկարիչը, իր դիմումներից մեկում 1835 թ.,—վկայում են նկարչության մեջ ունեցած իմ ընդու-

նակությունների մասին»։ Այդ նախնական աշխատանքների գեղարվեստական որակը հիմք է տվել այն ժամանակվա Կովկասի կառավարիչ Գ. Վ. Ռողենին գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտին ուղղած միջնորդական նամակում գրել, թե Ներսիսյանը «վճռել է այդ բնագավառում կատարելագործվել», իսկ գեներալ Ա. Խ. Բեկենդորֆի մոտ այն տպավորությունն է ստեղծվել, որ նա կարծել է, թե Ներսիսյանը «երկար ժամանակ սովորել է լավորակ նկարիչների մոտ»։

Թե ինչ աշխատանքներ է կատարել պատանի նկարիչը այդ տարիներին, մեզ առայժմ հայտնի չէ։ Սակայն պաշտոնական փաստաթղթերում, ինչպես նշել ենք, դրանք կոչվել են «նախնական փորձեր»։ Բայց դրանք եղել են այնպիսի «փորձեր», որոնց հիման վրա «Նկարիչներին խրախուսող ընկերության» կոմիտեն նրան 1835 թ. ամսական թոշակ է նշանակել։ Ավելին, Գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտ Ա. Օլենինի այն խոսքը, թե «Ես իմ կողմից համարձակվում եմ ենթադրել, որ Հայ Ստեփան Ներսիսովը կարող է դառնալ հույժ օգտակար իր հայրենիքի համար», պատահական չէր։ Այդպիսի համարձակ ենթադրություն Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտ-Նկարչի կողմից հնարավոր չէր, եթե նա տեսած լիներ սկսնակ նկարչի ստեղծագործությունները։ Այդ ամենը հիմք է տալիս ընդունելու, որ 1830-ական թթ. կեսերին Ստ. Ներսիսյանը արդեն հանդես է եկել նախնական ստեղծագործական աշխատանքներով, ստեղծագործություններ, որոնք դրավել են արվեստը հասկացող բարձրաստիճան անձանց ուշադրությունը և արժանացել են նրանց հովանավորությանը։

Ստեփանոս Ներսիսյանի վաղ շրջանի ստեղծագործությունների մասին ավելի հավաստի տեղեկություններ են Հաղորդում գրավոր աղբյուրները։ Դրանք արխիվային փաստաթղթեր են, որոնք վերաբերում են 1837—1838 թվականներին՝ նախակադեմիական շրջանին։ Այդ փաստաթղթերից մեկը վկայում է, ինչպես արդեն նշել ենք, որ «Նկարիչներին խրախուսող ընկերության» կոմիտեն 1837 թ. գնել է Ստ. Ներսիսյա-

նի ներկայացրած «Կրակող ասիացին» նկարը 100 ռուբլով։ Այդ տարիներին 100 ռ. բավական մեծ գումար էր, եթե նկատի ունենանք, որ մեկ ամսվա ապրուստի համար նրան տրվել է 10—15 ռ. թոշակ։ Դա նշանակում է, որ այդ պատկերը, անկասկած, ներկայացրել է գեղարվեստական կարևոր հետաքրքրություն և այնպիսի արժեք, որ արժանացել է բարձր գնահատման։ Բայց թե ինչ է պատկերել այդ «Կրակող ասիացին» և ինչպիսին է եղել այն, մենք այժմ, երբ ձեռքի տակ ուրիշ ոչ մի տեղեկանք կամ լուսանկար չունենք, որոշակի խոսք ասել չենք կարող։ Մեզ մնում է միայն ենթագրել, որ դա պատկերել է Հրացանակիր մի կովկասցի՝ կրակելիս։ Պետք է նկատել, որ կովկասյան ժողովուրդներին ոռուսներն այն ժամանակ սովորաբար անվանում էին ասիացիներ։ Ռուս նկարիչները հաճախ էին նկարում այդ ասիացիներին՝ հրացանակիր մարդկանց, մեծ մասամբ կովկասյան լեռնցիներին։ Այդ թեման բավական տարածում ուներ նաև ոռուսական գեղարվեստական գրականության մեջ և պոեզիայում։ Երիտասարդ՝ 22-ամյա սկսնակ նկարիչը, որը ապրում և գործում է Ռուսաստանի մայրաքաղաքում՝ նույն գեղարվեստական միջավայրում, բնականաբար, տարվել է նույն այդ թեմայով և ստեղծել է մի պատկեր, որը համահնչություն էր ժամանակի հետաքրքրությանը։ Նույն ժամանակի գործ է Ստ. Ներսիսյանի նկարած Սկոտափի «Ատրճանակ» կրող հայր։ Պատկերի պատճենը, որը, ինչպես նշեցինք, 1838 թ. Պետերբուրգի գեղարվեստական ստեղծագործությունների վիճակախաղում շահել է մրցանակ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, 1834—1838 թվականներին՝ նախքան գեղարվեստի ակադեմիա ընդունվելը, 19—23 տարեկան հասակում Ստեփանոս Ներսիսյանը ստեղծել է պատկերներ, որոնք ոչ միայն արժանացել են ուշադրության, այլև նրանցից մեկը գնվել է, մյուսը արժանացել մրցանակի։

Բացի գրավոր աղբյուրներից, նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի վաղ շրջանի ստեղծագործությունների մասին որոշ գաղափար է տալիս նաև մի երիտասարդի դիմանկար, որը բարեբախտաբար պահպանվել է մինչև մեր օրերը։ Դա Տեր-Ղու-

կասյանների հայտնի գերդաստանի ղավակներից մեկի, ավագ որդու՝ Արշակի, դիմանկարն է, մի փոքրածավալ անստորագիր աշխատանք ( $39 \times 32$  սմ), որը այժմ գտնվում է վրացական ՍՍՀ պատմության և ազգագրության ընկերության պետական թանգարանում<sup>1</sup>:

Ստ. Ներսիսյանը երիտասարդ Արշակ Տեր-Ղուկասյանին նկարել է Պետերբուրգում այդ ընտանիքի հետ ունեցած առաջին իսկ ծանոթության շրջանում: Հավանականությունից զուրկ չէ, որ միայնակ ու անօգնական, սկսնակ հայ նկարիչը Պետերբուրգում հյուրընկալվել և, թերևս, հյուրասիրվել է իր հասակակից Տեր-Ղուկասյան եղբայրների կողմից, մանավանդ, որ այդ երիտասարդների հայրը՝ Մոսկվայի հայոց եկեղեցու քահանա Հարություն (Արտեմ) Տեր-Ղուկասյանը, ինչպես հայտնի է, բարեկիրթ, հյուրընկալ և հոգատար անձ է եղել իր ժամանակին:

Արշակ Արտեմի (Հարությունի) Տեր-Ղուկասյանը (Տեր-Ղուկասով), որը հետագայում դարձավ անվանի գեներալ, ուսական ցամաքային զորքերի ականավոր զորավար, 1877—1878 թթ. ոռւս-թուրքական պատերազմի հերոսներից մեկը, այստեղ պատերազմած է երիտասարդ հասակում՝ ուսանողական համազգեստով: Արշակը 1835 թ. Մոսկվայից եկել էր Պետերբուրգ և ընդունվել հաղորդակցության ճանապարհների ինստիտուտ, ուր սովորել է չորս տարի: 1839 թ. նա փայլուն ավարտել է այդ ինստիտուտը և ստացել ճանապարհաշինության ինժեների կոչում: Նկարիչը Արշակին նկարել է հենց այդ տարիներին՝ ամենայն հավանականությամբ 1837—1838 թթ. Պետերբուրգում, երբ նա դեռևս կրում էր հաղորդակցության ճանապարհների ինստիտուտի ուսանողական հագուստ: Ստ. Ներսիսյանը նրան նկարել է երկու անգամ: Առաջինը մեկ սեանսով կատարված փոքրածավալ մի նկար է՝ էտյուդ, որը կրում է աշակերտական աշխատանքի բնույթ: Երկրորդ անգամ անդրադառնալով նույն կերպարին, սկսնակ նկարիչը ձգտել է հասնել պատկերվողի նմանության վերարտադրմանը: Նմանությունը, իհարկե, դիմանկարչության առաջնակարգ խնդիր-

ներից մեկն է, բայց ոչ միակը։ Կարևորը, սակայն, այստեղ մնացել է անլուծելի։ Երիտասարդ մարդու կենսալից բնավորության, նրա ներքնաշխարհի և ստեղծագործության գաղափարական նպատակադրումը գումանկարչության միջոցներով բացահայտելու կարողությունը այն խնդիրներն են, որոնք ծառացել են նկարչի առաջ և պահանջում են մասնագիտական կրթություն։ Այնուամենայնիվ, չնայած նույնիսկ գծանկարի թուլությանը և ձեռքի որոշ անվարժությանը, այստեղ նկատվում է դիմանկարչի բնածին ընդունակությունը։

Արշակ Տեր-Ղուկասյանի դիմանկարով ավարտվում են մեր տեղեկությունները սկսնակ նկարչի նախակաղեմիական շրջանի գեղարվեստական ստեղծագործությունների մասին։ Այդ, ինչպես և այլ՝ մեզ չհասած, աշխատանքների գեղարվեստական մակարդակի մասին կարելի է դատել նաև գեղարվեստի ակադեմիայի ղեկավարության այն գնահատականով, ինչ տրվել է 1838 թ. Ստ. Ներսիսյանին ակադեմիա ընդունվելու որոշման մեջ և գրանցվել ակադեմիական մատյանում, ըստ որի քննության ներկայացված աշխատանքները հաստատում են «նկարչության մեջ նրա ցույց տված ընդունակությունները և գերազանց առաջդիմությունը»։

Ակադեմիայի խստապահանջ պրոֆեսորների կողմից նորեկ ուսանողին այդպիսի բարձր գնահատական տալլ միաժամանակ բնութագրում է նկարչին և նրա վաղ շրջանի աշխատանքները։

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայով ուժանելով շրջանում (1838—1840) Ստ. Ներսիսյանի կատարած ուսումնական կամ արտադասարանական աշխատանքներից մեզ, դժբախտաբար, ոչնչ չի հասել։

Հայտնի է միայն, որ 1840 թ. ակադեմիան ավարտելիս Ներսիսյանը ներկայացրել է դիպլոմային-ավարտական աշխատանք՝ մի դիմանկար, նկարչի կոչում ստանալու համար։ Սակայն այդ ստեղծագործությունը նույնպես մեղ չի հասել։ Այժմ էլ անհայտ է նրա տեղը։

Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան 1840 թ. ավար-

տելուց հետո Ստ. Ներսիսյանի կատարած ստեղծագործական աշխատանքներից հայտնի է «Հրացանը լիցքավորող պարսիկը» պատկերը, որը 1842 թ. ցուցադրվել է ակադեմիայի սրահներում բացված աշնանային ցուցահանդեսում: Սա արդեն մեզ հայտնի երրորդ միաֆիգուր կոմպոզիցիան է, որի մեջ նկարիչը պատկերում է զինակիր մարդու՝ հրազեն կրող արևելցու կերպար: Դա պատահական չէ:

Հետաքրքրությունը հրազենով մարդու, մասնավորապես արևելցու, ինչպես ուսւներն են ասում՝ ասիացու, նկատմամբ թեև սկսվել էր ակադեմիայում ուսանելուց առաջ՝ 1837 թվականից, սակայն պրոֆ. Ա. Զառւերվեյդի մարտանկարչական դասարանում մասնագիտանալով այդ ժանրում, Ստ. Ներսիսյանը սիրով է ստեղծում մարտանկարչական կամ զինված մարդկանց պատկերներ: Մարտանկարչական պատկեր, ինչպես ցույց կտանք, նա ստեղծում է հետագայում ևս:

Ինչ վերաբերում է «Հրացանը լիցքավորող պարսիկը» պատկերին, ապա այն մեզ չի հասել: Այդ պատկերի անունը պահպանվել է միայն 1842 թ. ակադեմիական (աշնանային) ցուցահանդեսի կատալոգում:

Նույն շրջանի ստեղծագործություններից է «Երիտասարդի դիմանկարը» (1845), որը գրականության մեջ կամ թերթային-ամսագրային հոդվածներում հիշվում է նաև «Երիտասարդ՝ Լազարյան ճեմարանից», «Անձանոթ երիտասարդի դիմանկար ուսանողական մունզիրով»: Պատկերը 1923 թ. ստացվել է Թիֆլիսից և այժմ գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում: Դրա ձախ կողմի ներքեւի մասում նկարիչը դրել է իր ստորագրությունը և տարեթիվը՝ «Հերսեսօվ, 1845» (նկ. 1):

Այժմ դժվար է ասել, թե որտեղ է այն նկարվել՝ Պետերբուրգում, թե՞ Մոսկվայում: Երկու դեպքում էլ նշվում է մեկ վայր՝ ուսասական միջավայր: Իրոք, այս դիմանկարի մեջ նկատվում է ուսասական միջավայրի, մասնավորապես ուսասական նոր, ուսալիստական դիմանկարչության որոշ ազգեցրությունը: Դա, ամենից առաջ, արտահայտվում է դիմա-

նկարի կոմպոզիցիայում։ Երիտասարդը պատկերված է դիմացից, դիտողին ուղղված հայացքով։ Նա աշ ձեռքը ազատ գրել է բազկաթոռի հենակին, մյուսը՝ կախել ցած և հանգիստ նայում է առաջ։ Երիտասարդի երկարուն դեմքի վրա որոշակի ընդգծված են նրա մեծ ու լայն բացած աշքերը, իսկ խոհական հայացքում զգացվում է պատկերվողի մտավորական լինելը։ Ուսանողական տարազը՝ կրծքի վրա վերկից ներքեւ ձգված փայլուն կոճակներով, առաջին պլանի վրա նշված նրա ձեռքը նուրբ ու երկարուն մատներով, որոնք ողղված են լուսով, կոմպոզիցիայում անմիջապես աշքի են ընկնում և նպաստում են կերպարի բնութագրմանը։ Թերևս մեկը այն խելահաս երիտասարդ սերնդից, որը կոչված է կրելու ժողովրդի մեջ լուսավորություն տարածող ջահը, մի երիտասարդ, որը մարմնավորում է նկարչի փայտիայած գաղափարական հերոսի կերպարը։ Այս ստեղծագործության մեջ նկարիչը, անկասկած, խոշոր, առաջադիմական քայլ է կատարում նախորդ՝ վերը նշված Արշակ Տեր-Ղուկասյանի, դիմանկարի համեմատությամբ։ Ժամանակակից երիտասարդ մարդու կերպար ստեղծելու խնդրում։ Դա նշանակում է, որ գեղարվեստի ակադեմիայում պրոֆեսոր Ա. Գ. Վառնեկի դիմանկարչության դասարանում սովորած հայ նկարիչը հենց սկզբից մասնագիտանում է դիմանկարչության մեջ և հանդես է գալիս հենց այդ ժամանում։

Սրանք են ահա Ստ. Ներսիսյանի գործունեության վաղ շրջանից մեզ հասած և գրավոր աղբյուրներից հայտնի այն ստեղծագործությունները, որոնք այսուհետև պետք է մտնեն հայ նկարչության XIX դարի 30—40 ական թթ. պատմության մեջ։

Այս աշխատանքներով, սակայն, չի սահմանափակվում Ստ. Ներսիսյանի վաղ շրջանի ստեղծագործական գործունեությունը։ Տաղանդավոր, համառ և աշխատասեր բնավորությամբ երիտասարդ նկարիչը 1830—40-ական թվականներին, հատկապես գեղարվեստի ակադեմիան ավարտելուց հետո, անցած 5—6 տարիներին (1840—1846), անկասկած, կատարել է այլ աշխատանքներ ևս։ Սակայն այն, ինչ արդեն

Հայտնի է մեզ, հիմք է տալիս հաստատ ասելու, որ Ստ. Ներսիսյանը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում ստացել է մասնագիտական բարձր կրթություն և մասնագիտացել դիմանկարչության ժանրում։ Թեև վերոհիշյալ ստեղծագործություններում դեռևս լրիվ չեն դրսերվել նկարչի՝ դիմանկար ստեղծելու կարողությունը և առանձնահատկությունները, սակայն դրանք վկայում են, որ Ստ. Ներսիսյանի գործունեության հիմնական բնագավառը և հետաքրքրությունների աշխարհը հետագայում դառնում է գլխավորապես դիմանկարչությունը։ Այս բնագավառում է նա լիովին դրսերում իր քաղաքացիական ու հայրենասիրական ձգտումները։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԸ  
(1848—1884)

«Ինձ թվաց, որ նա ծնված է հատուկ պորտրետիստ լինելու համար,—գրել է նկարիչ Գ. Բաշինջաղյանը Ստ. Ներսիսյանի տուն-արվեստանոցում 1883 թ. տեսած պատկերներից ստացած տպավորության հիման վրա, ավելացնելով, որ, իրոք,—այս կողմից նա հմուտ գծագրող էր և բարեխիղճ կենդանագրող»<sup>1</sup>։

Իսկապես, 1846 թ. Պետերբուրգից վերադառնալուց հետո և այնուհետև՝ շուրջ 38 տարվա ընթացքում, նրա ստեղծած պատկերների մեծագույն մասը դիմանկարներ են։ Ստ. Ներսիսյանի դիմանկարները խոշոր ներդրում են XIX դարի հայ ազգային նկարչության մեջ։ Դիմանկարներ, ինչպես տեսանք, նա նկարել էր դեռևս 1830—40-ական թթ. և։ Սակայն իր կյանքի ու գործունեության նոր շրջանում՝ հայրենիքում՝ հայկական մշակույթի օջախներում, հասարակական-քաղաքական կյանքի նոր պայմաններում նրա ստեղծած դիմանկարներն իրենց բովանդակությամբ, գաղափարական ուղղվածությամբ և գեղարվեստական խնդիրների ինքնատիպ լուծումներով նոր որակ են ներկայացնում այն բոլոր պատ-

կերների համեմատությամբ, որոնք գոյություն են ունեցել մինչև այդ կամ ստեղծվում էին նկարչի գործունեության ժամանակաշրջանում:

Դիմանկարչությունը ազգային մշակույթի մեջ բավական հին և հարուստ պատմություն ունի: Նկարչության այդ ժամրը երեան է եկել դեռևս միջնադարյան մանրանկարչության և որմնանկարչության մեջ:

Դիմանկարչությունը, որպես հաստոցային նկարչության մի առանձին և ինքնուրուցն ժանր, հայ կերպարվեստի մեջ երեան է եկել XVII—XVIII դարերում: Միջնադարից հետո՝ ընդհուպ մինչև XIX դարի առաջին քառորդը, երբ Հայստանը դեռևս գտնվում էր Թուրքիայի և Պարսկաստանի կողմից բաժան-բաժան արված վիճակում և նրանց գերիշխանության տակ, կերպարվեստի, մասնավորապես հաստոցային նկարչության զարգացումը հիմնականում ընթանում էր բուն հայրենիքից գուրս՝ հարեան և հեռավոր երկրներում և հայկական գաղթօջախներում: Հայ ժողովրդի պատմական բախտի հետևանքով ստեղծված այդ իրավիճակն իր կնիքն է դնում նույն շրջանի արվեստի, մասնավորապես, նկարչության ոճի և թեմատիկայի վրա: Ստեղծվում են մեծ մասամբ օտարազգի անձանց դիմանկարներ, այդ թվում թագավորների, թագուհիների, իշխանների, նշանավոր վաճառականների ու հոգևոր գործիչների կերպարներ, կատարված բազմազան ոճերով ու գեղարվեստական-գաղափարական տարրեր լուծումներով: Այսպիսին են, օրինակ, նկարիչ Պավել Բոգուշի և նրա երկու նկարիչ որդիների՝ Հակոբ(Յան) և Սիմոն Բոգուշների ստեղծագործությունները: Հանրահայտ են Պավել Բոգուշի կերտած կեհաստանի թագավոր Զիգմոնդ Երրորդի ու Աննա Ալբորի-ացու, ինչպես և Սիմոն Բոգուշի նկարած Մարինա Մնիշեկի և ուրիշների դիմանկարները, նոր Զուղայի հայոց մշակութային օջախից գուրս եկած և Մոսկվայի Զինապալատի առաջնակարգ նկարիչ Աստվածատուր Սալթանյանի (Բոգդան Սալթանովի) նկարած ուսւ թագավորների և պալատական վերնախավի անձանց կերպարները, կեհաստանում և կիտվա-

յում գործած Հովհաննես (Խոնաս) Ռուստեմի (1761—1835) դիմանկարները, և, վերջապես, Մանասի ու Հովնաթան երկու տարբեր նկարչական ընտանիքների ներկայացուցիչների ստեղծագործությունները:

XIX դարի կեսերին, երբ հրապարակի վրա էր Ստ. Ներսիսյանը, հայ իրականության մեջ ապրում և գործում էին բավական շատ հայ նկարիչներ, այդ թվում պրոֆեսիոնալ դիմանկարիչներ և տարբեր ժանրերի կերպարվեստագետներ, որոնք ստեղծում էին ժամանակակից ու պատմական անձանց կերպարներ: Այդպիսիք են Մկրտում, Հակոբ և Աղաթոն Հովնաթանյանները, Հովհ. Այվազովսկին, Հովհ. Պատկանյանը և ուրիշներ արևելահայ, իսկ Հովհաննես (Ումետ) Պետրատը (1809—1874), Ռուբեն Մանասին, Աբրահամ Սաքայանը (1821—1876) և ուրիշներ՝ արևմտահայ իրականության մեջ: Այդ նկարիչների ստեղծած դիմանկարների առանձնահատկությունը, ամենից առաջ, այն է, որ հակառակ վերոհիշյալ՝ XVII—XVIII դարերի, ծագումով հայ արվեստագետների, սրանց ստեղծագործությունների մեծ մասը պատկերում է հայ անձանց՝ աղգությամբ հայ տղամարդկանց ու կանանց դիմանկարներ, հանդես բերելով ձգուում ստեղծելու աղգային կերպարներ դիմանկարչության մեջ:

Դիմանկարչության դիմելը ժամանակի պահանջն էր: Բացի հայերից, դիմանկարներ նկարում էին նույն միջավայրում ապրող նաև վրացի, ոռու, իտալացի և այլազգի նկարիչներ: XIX դարի կեսերին, երբ Անդրկովկասում իշխում էր ցարական բյուրոկրատիան, ունեոր և, հատկապես, աղնվականական խավերի մարդիկ դիմանկարչության մեջ տեսնում էին իրենց գերազանցությունը: Դրանով էլ պետք է բացատրել, որ նկարիչներ Հակոբ և Աղաթոն Հովնաթանյանները այդ շրջանում բավական շատ են նկարել աղնվականական վերնախավի այնպիսի անձանց դիմանկարներ, ինչպիսիք են Կովկասի փոխարքաներ (կառավարիչներ), գեներալներ Ա. Երմոլովի, Ի. Պասկեիչի, Գ. Ռողենի, Ս. Վորոնցովի, Ե. Գոլովինի և շատ ուրիշների, այդ թվում և Ալեքսանդր Երկրորդ կայսրի դիմանկարները:

Դիմանկարից Ստ. Ներսիսյանը շգնաց այդ ուղղությամբ և տուրք շտվեց վերնախավի գեղարվեստական պահանջներին: Ընդհակառակն, արվեստագետը մարդու գերազանցությունը տեսնում էր ոչ թե նրա աղնվականական ծագման կամ շինովնիկի բարձրաստիճան պաշտոնի, այլ մարդու հանրօգուտ գործունեության մեջ: 1850—60-ական թթ. և կյանքի վերջին շրջանում նրա նկարած դիմանկարների համարյա բոլոր հերոսները ժողովրդի ծոցից դուրս եկած և հարազատ ժողովրդի համար ծառայած մեծագործ անձանց կերպարներ են, հայ ժողովրդի ազատագործության, նրա բարեկեցիկ կյանքի ստեղծման համար մարտնչող մարդկանց, ազգային մշակույթի տարրեր բնագավառների հանրահայտ և առաջավոր, աշխարհիկ և հոգեւոր գործիչների դիմանկարներ: Ժամանակակից անձանց կամ պատմական անցյալի գործիչներ՝ նրա դիմանկարները միաժամանակ նկարչի խոսափողերն են՝ նկարչի գեղարվեստական ստեղծագործությունների դրական հերոսները, գործիչներ, որոնք հասարակությանը հայտնի են իրենց հանրօգուտ և օրինակելի գործունեությամբ: 1880 թ. գրած մի նամակում նա հենց այդպես էլ ասում է. «Այս՝ մենք ինչպես հայ ազգի զավակներ, պետք է որ ամենքս լավ ծանոթ լինենք այս տասնիններորդ դարի մեզ տված անհատների, եթե ոչ իսկ անձանց հետ, գեթ նոցա երևելի գործերուն»<sup>2</sup>: Առաջնորդվելով այդ սկզբունքով, Ստ. Ներսիսյանը ընդհանրապես պատվերներ չի ընդունում: Նա նկարում է իր ընտրությամբ այն մարդկանց, որոնք իրենց հանրօգուտ գործերով արժանի են հավերժ հիշվելու «այժմյա և ապագա սերնդոց սրտի ու մտաց մեջ»:

Այս տեսակետից դիմելով դիմանկարչությանը, Ստ. Ներսիսյանը իր կյանքի և գործունեության երկրորդ շրջանում ստեղծում է հայ ժողովրդի արժանավոր զավակների ու ազգային մշակույթի նշանավոր գործիչների կերպարներ: Արվեստագետի ստեղծագործությունների շարքում դիմանկարչությունը ոչ միայն առաջնակարգ տեղ է գրավում, այլև կազմում է նրա արվեստի պսակը:

Ստեփանոս Ներսիսյանի ստեղծագործական կյանքի նոր շրջանի առաջին գործերից մեկը պետք է համարել Մելիք-Աղամյանի դիմանկարը (նկ. 2): Այստեղ ստեղծագործությունը տարեթիվ ու ստորագրություն չունի, հայտնի չէ նույնիսկ պատկերվողի անունը, սակայն դատելով ստեղծագործության բնույթից և ոճական առանձնահատկությունից, մենք այն դասում ենք 1840-ական թվականների երկրորդ կեսում ստեղծված դիմանկարների շարքին:

Մասնագիտությամբ իրավաբան, գեղեցիկ արվեստների սիրահար Մելիք-Աղամյանը մեկն էր այն ժամանակակիցներից, որոնք գրավել էին նկարչի ուշադրությունը հասարակության մեջ ունեցած բարձր հեղինակությամբ և ազգային մշակույթի նկատմամբ ցուցաբերած հարգանքով: Թերևս այդ պատճառով Ներսիսյանը սիրով է նկարել նրան, իր ստեղծագործության մեջ բացահայտելով պատկերվողի անձնական արժանապատվությունը:

Մելիք-Աղամյանը պատկերված է նստած դիրքով, աջ ձեռքը ազդրին հենած, ձախը՝ բազկաթոռի հենակին: Նրա գեմքը դիտողին երևում է երեք քառորդ թերությամբ, իսկ մարմինը՝ գոտկատեղից: Նա հանգիստ, բայց ուշադիր, խելոք ու կենտրոնացված նայում է դիտողին և թվում է, թե խոսում է նրա հետ, մտքեր է փոխանակում: Պատկերելով մարդուն նրան բնորոշ դիրքով և այնպիսի վիճակում, որը բացահայտում է պատկերվողի բնավորությունը, Ստ. Ներսիսյանը հաղթահարում է անցյալից եկող և դեռևս նրա ժամանակ պահպանված կոմպոզիցիայի միօրինակությունը դիմանկարում: Նա ստեղծել է դիմանկարի նոր, Հովնաթանյանից տարբերվող կոմպոզիցիա, որի մեջ ժամանակակիցը երևում է միանդամայն ազատ կեցվածքով, բնական դիրքով ու կենսալից: Մարդու այդպիսի կեցվածքը ինքնին արդեն խոսում է այն ազատության մասին, որ հանձին Ստ. Ներսիսյանի XIX դ. կեսերին մուտք է գործում հայ նոր դիմանկարչության մեջ:

Մելիք-Աղամյանի դիմանկարը տրամաբանությամբ կատարված ստեղծագործություն է: Նկարիչը այստեղ պատկերել է իր ժամանակի մտավորականի կերպար: Դա նոր զարգացող

Հասարակության ներկայացուցչի ռեալիստական կերպար է՝ Պատկերի կոլորիտը նպաստել է մտահղացման լրիվ բացահայտմանը:

Ստ. Ներսիսյանի լավագույն դիմանկարներից է «Տղամարդը ծխամորճով» պատկերը, որի տակ կա նկարչի ստորագրությունը և տարեթիվը «Ներսեսօն, 1848»: Տղամարդը ծխամորճով» դիմանկարը բավական մեծածավալ ( $115 \times 160$ ) ստեղծագործություն է: Դա հայ նկարչի մինչև այդ կատարած աշխատանքներից ամենամեծն է և նշանակալիցը (նկ. 3):

Մեզ անծանոթ տղամարդը այստեղ պատկերված է զետնին նստած, հենված աջ թևի արմունկին, ձախը կիսածալ ոտքի ծնկանը դրած: Նրա կիսաթեք դեմքը ուղղված է դեպի աջ, ուշագիր նայում է մի կետի: Նրա հարուստ, արևելյան շքեղ հազուստը, որը Ղարաբաղի մելիքների ազգային տարազն է հիշեցնում, ուսին հենած երկար կայծքարով հրացանը, գոտկատեղում երկացող փոքրիկ թուղը և ատրճանակը ներկայացնում են մի զինված մարդ, որը, կարծես, նստել է հանգստանալու: Նա հաստամարմին, լայն դիմագծերով, երկար ու ժայրերը ոլորած սև բեղերով մի քաջառողջ տղամարդ է, կովկասահայ մի անձնավորություն, որը, կարծում ենք, ժամանակին հանրահայտ գործիչ է եղել: Այդ է հաստատում նաև նրա աջ ձեռքում բռնած երկար ծխամորճը, որի վրա եղած օղակի մեջ անց է կացրել բութ մատը: Այդպիսի օղակավոր ծխամորճեր նկարչի ժամանակ կրում էին Ղարաբաղի հայ մելիքները և հասարակության անվանի մարդիկ: Դատելով պատկերվողի դեմքի խելացի արտահայտությունից և նրա ազատ, անկաշկանդ կեցվածքից, որը, կարծես արտահայտում է մարդու աղատատենչ ոգին, կարելի է ասել, որ նա մեղմ բնավորությամբ անձնավորություն է, հասարակության կողմից ճանաշված ու գնահատված գործիչ: Թերեւս հենց այդ կողմը ընդգծած լինելու նպատակն է հետապնդել նկարիչը, որ լուսավորել է նրա լայն ու արտահայտիչ դեմքը և ձեռքերը, որոնք անմիջապես գրավում են դիմողի ուղագրությունը, ցայտուն դարձնելով մարդու թափանցող հայացքը:

Այդ դիմանկարը միափիգուր կոմպոզիցիա է, որտեղ մարդը պատկերված է բնության գրկում, տեսարանի հետ, որը և պատկերի մեջ մտցնում է որոշ պատմողական տարր:

Հետաքրքրական է նկատել, որ այս պատկերը ևս ներկայացնում է հրացանակիր մարդ՝ տաք և սառը զենքերով զինված անձնավորություն, որպիսի պատկերներ նկարիչը ստեղծել էր իր գործունեության առաջին շրջանում ևս:

Այդ տեսակետից ուշագրավ է նաև զինվորական ու հասարակական ականավոր գործիչ, գեներալ Մովսես Զաքարի Արդուղության-Երկայնաբազուկի (1798—1855) դիմանկարը: Պատկերի տակ նկարիչը դրել է իր ստորագրությունը և տարեթիվը՝ «Ներսեսօվէ, 1849»: Դա պատկերում է նշանավոր գորավարին գեներալական հագուստով, գլխաբաց, կիսադեմ (պրոֆիլ) և գոտկատեղից (նկ. 4):

Մովսես Արդուղությանը սերվում է հայկական հինգ XVIII դարի Հայաստանի կառավարիչներ Իվանե և Սարգիս Զաքարյան-Երկայնաբազուկիների հայտնի տոհմից, ազգանվերմի տոհմ, որը միջնադարում և, հատկապես, XVIII դարի վերջին քառորդում հիշվում է որպես «ազգ մեծ և երեսելիք որպես վկայեն պատմագիրք»: Այդ տոհմից սերված կաթողիկոս Հովսեփ Արդուղությանը (1743—1801), նրա եղբոր թոռ Մովսեսը և ուրիշներ նշանակալից դեր են կատարել հայ և ուսւ ժողովուրդների բազմադարյան բարեկամության և կապերի ամրապնդման, հայ ազատագրական շարժումների գլխավորման, Հայաստանը Ռուսաստանին միացնելու՝ ժողովրդի ձգտումների իրականացման գործում:

Առանձնապես հանրօգուտ է եղել Մովսես Արդուղության-Երկայնաբազուկի հասարակական ու վիճվորական գործունեությունը: 19 տարեկան հասակից մտնելով զինվորական ծառայության մեջ, նա 1827 թ. մասնակցում է Երևան քաղաքի գրավմանը և գեներալ Հ. Պ. Լազարյանի հետ անմիջականորեն գործակցում է XVII դարում բռնությամբ Պարսկաստան տարված 40.000 հայերի հայրենիք ներգաղթը կազմակերպելու մեծ ու դժվարին գործին: 1829 թ. նշանակվելով

Հայկական մարդի պետ, նա մի շարք բարենորոգումներ է կատարում հարազատ ժողովրդի կյանքի պայմանները բարեկալելու նպատակով։ Նկարիչը Մ. Արդության-Երկայնաբազուկին պատկերել է այն ժամանակ, երբ վերջինս նշանակված էր Մերձկասպյան երկրամասի գորքերի հրամանատար և քաղաքացիական նահանգապետ։

Նկարիչ Մտ. Ներսիսյանը հայագիտ այդ ականավոր գործին 1849 թ. կարող էր հանդիպած լինել Թիֆլիսում կամ, որ ավելի հավանական է՝ Շուշի քաղաքում, որն այդ ժամանակ մտնում էր նահանգապետի իշխանության սահմաններում։ Դիմանկարը նեկայացնում է XIX դարի առաջին կեսի հասարակական ու զինվորական խոշոր գործչի ու եալիստական կերպար։ Կերպարի դիմանկարչական հատկությունը՝ նմանությունը, կասկած չի առաջացնում։ Նա լիքը դեմքով, ու ու հաստ բեղերով, ուժեղ, հաղթանդամ տղամարդ է եղել, կյանքի 50 տարին անցկացրած զինվորական։ Նրա խիստ և ուշադիր հայացքում զգացվում է բնավորության կայունությունը և ուժեղ կամքը։

Դիմանկարի կոմպոզիցիան նկատելիորեն տարբերվում է ժամանակակից Հովնաթանյանի մշակած պատկերաձևեց։ Այստեղ վերարտադրված է մարդու ազատ, անկաշկանդ և բնական կեցվածքը։ Չնայած անձնավորության բարձր դիրքին և պաշտոնական արտհագուստին՝ նրա զինվորական տարագի և գեներալական տարբերանշանների մանրակրկիտ պատկերմանը, դիմանկարն աշքի է ընկնում որոշ ինտիմությամբ։ Նկարիչը նրա մեջ տեսել է ոչ այնքան հերոս զորավարին, որը մի շարք հաջող մարտեր է մղել, այլ, ամենից առաջ, խելացի և ձեռներեց հասարակական հանրօգուտ գործին։ Դիմանկարն ունի մեղմ, հաճելի կոլորիտ։ Թեև կերպարը աշքի չի ընկնում իր արտահայտչականությամբ, սակայն դիմանկարչական բնութագրության կատարելությունը անմոռաց է դարձնում պատկերվող անձը։

Նույն շրջանում է նկարված կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի դիմանկարը (1849), որը, սակայն, մեզ չի հասել<sup>3</sup>։ Ալեքսանդրա Ֆեոդորովնան (1798—1860) անժանոթ

անձ չէր հայ մտավորականների համար: Խաշատուր Աբովյանի մասին հուշագրողներից մի քանիսը վկայում են, որ ոռւս կայսրուհին լսած լինելով երիտասարդ Աբովյանի ապագա զործունեության ծրագրերի մասին, ցանկացել է տեսնել նրան և 1836 թ. զրուցելով նրա հետ, արտահայտել է «յուր հարգանքը դեպի հայ ժողովուրդը, որ ընդունակ է կյանքի բոլոր ասպարեզներում մեծ դեր խաղալ»<sup>4</sup>:

Նկարիչ Ստ. Ներսիսյանը, հավանաբար, այդ մասին լսել էր հենց նույն ժամանակ՝ 1836 թ. հունվարին, Պետերբուրգում, երբ և. Աբովյանը Դորպատից հայրենիք վերադառնալիս 10 օր մնացել է մայրաքաղաքում և, անկասկած, հանդիպել ու պատմել իր մտերիմ ընկերոջը՝ սկսնակ նկարչին, որը դեռ շատունակում էր ջանքեր թափել գեղարվեստի ակադեմիա ընդունվելու համար: Ստ. Ներսիսյանը կայսրուհուն կարող էր տեսած լինել Պետերբուրգում ապրած տարիներին: Այն փաստը, որ հայ նկարիչը նկարել է ոռւս կայսրուհու դիմանկարը, ասում է այն մասին, որ Ստ. Ներսիսյանը բարձր է գնահատել Ալեքսանդրա Ֆեոդորովնայի բարեգործությունը՝ իր միջոցներով Կովկասի օրիորդաց համար առաջնակարգ ուսումնարան հիմնադրելը այն ժամանակվա հայ մշակույթի օջախում, և կայսրուհու ջերմ հետաքրքրությունը հայ ժողովրդի շնորհալի զավակների նկատմամբ: Հավանաբար այստեղ կարևոր նշանակություն է ունեցել և այդ օրիորդաց ուսումնարանի խնդրանքը դրա հիմնադրի պատկերը նկարելու մասին, մի ուսումնարան, ուր դասավանդել է նաև ինքը՝ Ստ. Ներսիսյանը:

1850-ական թթ. Ստ. Ներսիսյանի դիմանկարչական արվեստի մեջ որոշ փոփոխություն է տեղի ունենում: Անցյալում՝ 1840-ական թվականներին, ստեղծած դիմանկարների գուստ, կամերացին բնույթը, որոշ ստեղծագործությունների մտերմիկ հատկությունը այս շրջանում տեղի են տալիս տոնական-հանդիսավոր նկարչությանը: Նա ստեղծում է տոնական-հանդիսավոր դիմանկարչության ժանրի գործեր՝ դիմանկարչության տեսակներից մեկը, որը նոր էր սկսել կազմավորվել ազգային նկարչության մեջ: Այդ ժանրի բնորոշ ստեղծ-

ժագործություններից են իշխան Բ. Հ. Բեհբությանի և կաթոլիկոս Ներսես Աշտարակեցու դիմանկարները:

Խուսական բանակի նշանավոր զորավար, գեներալ-լեյտենանտ Բարսեղ Հովսեփի Բեհբությանի (Բեհբութով, 1791—1858) դիմանկարը Սա. Ներսիսյանը նկարում է 1857 թ. նրա մահից մեկ տարի առաջ՝ Թիֆլիսում։ Դա նկարչի լավագույն ստեղծագործություններից մեկն է, առաջնակարգ մի պատկեր, որը ամենայն իրավամբ կարելի է դասել նույն շրջանի ոռուսական ու արևմտահելոպական երկրների հանքահայտ դիմանկարների շարքին (նկ. 5):

Ամենից առաջ անհրաժեշտ է նկատել, որ նկարիչը միանգամայն ճիշտ է ընտրել պատկերի կոմպոզիցիան՝ նրա պատկերաձեռք, որը կատարելապես համապատասխանում է քովանդակությանը՝ պատկերվող անձի հասարակական-քաղաքական, ուղղմական ու պետական խոշոր գործունեության գեղարվեստական բացահայտմանը։ Խակապես, Բ. Հ. Բեհբությանի ամբողջ գիտակից կյանքն անցել է զինվորական ու պետական ծառայության մեջ։ 21 տարեկան հասակում մասնակցել է 1812 թ. Հայրենական պատերազմին, 37 տարեկանում նա արդեն գեներալ-մայորի աստիճան ուներ։ Նա մասնակցել է ոռուս-պարսկական և ոռուս-թուրքական պատերազմներին Անդրկովկասում և իր անօրինակ քաջադրության ու տաղանդավոր զորավարության համար վայելել է զինվորների ու ազատագրված ժողովուրդների համակրանքը։ Բ. Հ. Բեհբությանի զինվորական բարձր արվեստը դրսևորվում է առանձնապես 1853—1856 թթ. Արևելյան պատերազմում։ Որպես կովկասյան ուղղմանակատի գործող բանակի գլխավոր հրամանատար, նա խոշոր հաղթանակ է տանում թուրքական մեծաթիվ բանակի դեմ Կարս քաղաքի մոտ, որի համար ստանում է այն ժամանակվա ոռուսական ամենաբարձր շքանշաններից մեկը՝ Անդրեյ Պերվողվաննիի շքանշանը։

Բ. Հ. Բեհբությանի հաղթանակները և նրա քաջագործությունները հպարտությամբ են լցնում Հայերի սիրտը։ Հայերն ամենուրեք ողջունում են նրան։ Հայ նշանավոր հասարակական գործիչներից կազմականները շնորհավորելով նրան հաղ-

թանակի առիթով, գրում են. «Փառք և պատիվ է Հայաստանի համար, որ իր որդիների թվում ունի լայնածավալ երկրի այնքան արժանավոր կառավարիչ և դրա հետ միասին այժմ հերոս:... Դուք մեր ազգի փառքն ու պարծանքն եք»<sup>5</sup>: Խաչատրուր Աբովյանը հապարտությամբ է նշում Բ. Հ. Բեհրությանի անունը Հայ ժողովրդի արժանավոր զավակների շարքում: «Մադաթովի ու Բեհրութովի արածը, — գրում է Խ. Աբովյանը, — բավական է, որ աշխարհքը իմանա, թե ինչ հոգի ուներ էն ժամանակ մեր ազգը»<sup>6</sup>: Այդ հապարտության զգացումը պայմանավորված էր ոչ միայն Բեհրությանի զինվորական սխրագործությամբ, այլև նրանով, որ ազատագրելով Հայկական մարզերը պարսկական և թուրքական դարավոր բռնակալությունից, ստեղծում էր կյանքի համեմատաբար նպաստավոր պայմաններ Հայ ժողովրդի ու կովկասյան մյուս ազգերի համար:

Բ. Հ. Բեհրությանը միաժամանակ պետական խոշոր գործիչ էր: Նա ութ տարի շարունակ (1830—1838) եղել է ազատագրված Հայկական մարզի կառավարիչ, իսկ 1847 թ. սկսած մինչև 1858 թթ. վարել է Անդրկովկասյան երկրամասի քաղաքացիական վարչությունը, որպես գլխավոր վարչության կոմիտեի նախագահ: Որոշ ժամանակ նա կատարել է նաև Կովկասի փոխարքայի պարտականությունը:

Այս այսպիսի զինվորական և պետական խոշոր գործչի կերպարը, բնականաբար, պահանջում էր նոր և համապատասխան պատկերածել: Պատկերի կոմպոզիցիան ամփոփում է այդ ամենը:

Գեներալ-լեյտենանտ Բ. Հ. Բեհրությանը այստեղ պատկերված է զինվորական համազգեստով, ձիգ կանգնած՝ մինչև ծնկները, գլուխը բաց, աջ ձեռքը կոնքին հենած, ձախը՝ թրի կոթին: Գեներալը նայում է մի կողմի վրա՝ դեպի աջ, սուր և խիստ հայացքով: Նրա արծվացին քիթը, նիճար, դուրս պրծած այտոսկրներով դեմքը, ուզմադաշտերում արևից ու լեռնային քամիներից այրված և կոպտացած լինելով՝ մուգ-պղնձագույն տեսք են ստացել: Նրա ինքնավստահ, հպարտ կեցվածքը, կամքի հզոր ուժը և ներքին մեծ եռանդը, որոնք

Համոզիչ վերաբաղրված են որպես անձնավորության բնուրոշ գծեր, ներկայացնում են մարտերում կոփված քաջամարտիկ զորավարի տոնական-հանդիսավոր կերպարը: 67-ամյա զինվորականն ու պետական խոշոր գործիչը այստեղ դիտողին ներկայացված է ամրակուռ և աշխույժ, զգացվում է վըճռականություն և համարձակություն:

Դիմանկարում աշքի են ընկնում մեծ զորավարի բաղմաթիվ շքանշաններն ու տարբերանշանները: Ամենայն մանրամասնությամբ վերաբաղրվել են դրանց առարկայական հատկությունը, մետաղի կամ թանկարժեք քարերի ու ոսկու միայն և նույնիսկ հագուստի ու մորթե զիսարկի նյութական հատկությունը: Այս դիմանկարում Ստ. Ներսիսյանը մի փոքր տեղ է հատկացրել բնանկարին, որը ներկայացնում է Կովկասի լեռնային բնության տեսարան: Բնանկարչական մոտիվը այստեղ սոսկ դեկորատիվ հենք չէ, այլ մարդու կերպարի բացահայտման միջոց՝ նրա գործունեության վայրի ցուցադրում, որպեսին ընդունված էր նույն շրջանի հայ, ոուս և արևմտաեվրոպական դիմանկարչության մեջ: Բնանկարչական մոտիվն այստեղ ունի նաև որոշ կոմպոզիցիոն նշանակություն, քանի որ բնանկարը դիմանկարի մեջ մուծում է տարածականություն՝ տարբեր պլանների համեմատությամբ: Դիմանկարի գունային կառուցվածքը՝ նրա բոլոր մասերի և տարբեր առարկաների գույների փոխադարձ կապը և ներդաշնակությունը, նպաստում են իրականության լրիվ վերաբարտադրմանն ու կերպարի համոզչությանը: Պատկերի բնական կոլորիտը միաժամանակ նպաստում է գունանկարչական այս ստեղծագործության գաղափարական բովանդակության հստակ բացահայտմանը:

Բ. Հ. Բեհրությանի դիմանկարը, ինչպես ասացինք, լուծված է որպես տոնական-հանդիսավոր ոճի ստեղծագործություն: Պատկերին այդպիսի բնույթ է տվել մարդու ձիգ, հանդիսավոր կեցվածքը, որը, իհարկե, դիտմամբ չի մտահղացված նկարչի կողմից: Այդօրինակ կեցվածքում չկա ոչ մի միտումնավորություն, քանի որ դա համապատասխանում է աղքային հերոսի մասին հարազատ ժողովրդի պատկերաց-

մանը: Իր հիմքով ուեալիստական այս ստեղծագործության մեջ կա ինչ-որ ոռմանտիկա, որը նույնպես բխում է ժողովրդական մտածելակերպից և նկարչի հայրենասիրական զգացումներից: Մովսես Արդությանի համեմատությամբ Բեհբությանի կոմպոզիցիոն դիմանկարը նոր առաջընթաց քայլ էր ոչ միայն նկարչի ստեղծագործության, այլև ընդհանրապես, XIX դարի հայկական ազգային դիմանկարչության մեջ:

Իսկապես, նույն շրջանի և համարյա նույն միջավայրի նկարիչ Հակոբ Հովնաթանյանը, որը նկարել է նաև գեներալ-ների և ոռւս զորավարների պատկերներ, այդ կարգի տոնական-հանդիսավոր դիմանկար չի ստեղծել: Դրա պատճառը, մեր կարծիքով, ամենից առաջ պետք է որոնել ոռւսական գեղարվեստի ակադեմիայում Ստ. Ներսիսյանի ստացած կրթության մեջ:

Բարսեղ Բեհբությանի դիմանկարի կոմպոզիցիայում, իշարեն, նկատելի է առնչություն ոռւսական, և ոչ միայն ոռւսական, դիմանկարչության հետ: Սակայն յուրացնելով համաշխարհային նկարչության մեջ մինչև այդ կիրառված ձեւերը, Ներսիսյանը ձուլել է դրանք ազգային հերոսի մասին իր ունեցած հասկացողությանը, որը համընկնում է ժողովրդական մտածողության և նրա պատկերացումների հետ: Այս- տեղ նկարիչը բացահայտել է իր հերոսի նշանավոր լինելը, իսկ մողելի զսպլածության ու դեմքի խիստ արտահայտության մեջ առկա է այդ խոշոր անձնավորության մարդկայնությունը:

Այդ ամենը արդյունք էր Ստ. Ներսիսյանի մասնագիտական կրթության և նրա դեմոկրատական աշխարհըմբոնման: Ավելորդ շենք համարում այս կապակցությամբ նշել, որ ոռւսական կերպարվեստի մեծագույն գործիչները, այդ թվում Ի. Կրամսկոյը, Ի. Ռեպինը և շատ ուրիշներ, իրենց գեղարվեստական կրթությունը ստացել են հենց այն ուսումնական հաստատությունում, ուր տարիներ առաջ սովորել է Ստ. Ներսիսյանը: Բայց նրանցից ոչ մեկի արվեստը չի որակվել ակադեմիական ուղղություն: Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան,

Հնայած նրա զեկավարության հետադիմական քաղաքականությանը, լավագույն պրոֆեսոր-ակադեմիկոսների միջոցով ուսանողությանը դաստիարակում և զինում էր գեղարվեստական վարպետության իսկական գիտությամբ՝ գծանկարի բարձր կուլտուրայով, համաշխարհային կերպարվեստի, մասնավորապես նկարչության բոլոր տեսակների ու ժամրերի խորը իմացությամբ, որը և նպաստեց կերպարվեստի բարձր զարգացմանը Ռուսաստանում և ոռուսական կայսրության սահմաններում ապրող ժողովուրդների գեղարվեստական մշակույթի առաջադիմությանը:

Նկարիչ Ստ. Ներսիսյանը այդ միջավայրի և ոռուսական գեղարվեստական մշակույթի մեջ կրթված արվեստագետ էր: Իինելով տաղանդավոր և ազգանվեր նկարիչ, նա ոռուսական մշակույթից վերցնում է այն լավագույնը, ինչը կարող էր նպաստել, և իրոք նպաստում է հարազատ հայ ժողովրդի ազգային գեղարվեստի հարստացմանն ու առաջադիմությանը:

Գեներալ Բ. Հ. Բեհրությանի դիմանկարը այդ կարգի ստեղծագործություններից է: Ռուսական բանակի քաջակորուլ հայ զորավարի՝ ժողովրդի պատկերացման մեջ հերոսականացված անձնավորության կերպարը, ինքնին, թելաղրում էր պատկերի այնպիսի կառուցվածք, հերոսի այնպիսի կեցվածք և դիմք, որ ավելի հստակ և մատչելի արտահայտի նկարչի հայրենասիրական միտումը՝ հերոսության գաղափարը: Այստեղ նկարիչը հասել է պատկերաձեկի և բովանդակության միասնությանը: Դա հայ նոր դիմանկարչության խոշոր նվաճումներից է, դասական մի ստեղծագործություն, որն իր բարձր արվեստով և գաղափարական հարուստ բովանդակությամբ հասնում է ժամանակի դիմանկարչության արվեստի մակարդակին, ուղի հարթելով այդ մակարդակով դիմանկարչության զարգացման համար:

Հայ նոր կերպարվեստի մեջ Ստ. Ներսիսյանի սկզբնավորած տոննական-հանդիսավոր դիմանկարչության ժանրի բնորոշ ստեղծագործություններից է նաև Ներսես Աշտարակեցու մեծադիր (177×114) պատկերը:

Ամենայն հայոց կաթողիկոսի դիմանկարը Ստ. Ներսիսյանը նկարել է մի քանի անգամ և տարբեր ժամանակներում: Մեր խոսքը վերաբերում է Ներսեսի մեծադիր պատկերին, որի մեջ կաթողիկոսը պատկերվել է ամբողջ հասակով իր առանձնասենյակում, գահին նստած դիրքով (նկ. 6): Հայտնի են նաև նրա երկու այլ՝ գունանկարչական և գրաֆիկական պատկերներ, որոնք այժմ գտնվում են Հայաստանի պետական պատկերասրահում: Մի անձնավորության այդքան շատ և տարբեր ժամանակներում պատկերելը պետք է բացատրել ոչ միայն նրանով, որ իր ժամանակին մեծ է եղել հետաքան պատկերասրահում:

Հանրահայտ են Ներսեսի անմիջական մասնակցությունը և եռանգում գործունեությունը 1827—1828 թթ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու գործում: Էլ ավելի հայտնի է նրա նախաձեռնությամբ ու ջանքերով Թիֆլիսում 1824 թ. հայկական դպրոցի հիմնադրումը՝ մի առաջնակարգ ուսումնարան, որը տվեց հայ գրի, գրականության, հասարակական մտքի ու գիտության տարբեր բնագավառների գործիչներ:

Իր նամակում (գրված 1880 թ. հունվարին) Ստ. Ներսիսյանը Ներսես Աշտարակեցուն համարում է «մերս ազգի և եկեղեցւոյ համար նահատակված երջանկահիշատակ» անձնավորություն, «որոյ ի մեջ այլ երևելի գործերին է Ներսիսյան ազգային հոգեոր դպրոցն Տիփսիսու»: Այդ դպրոցի խոշոր նշանակություններից մեկը նա համարում է նաև այն, որ «Ներսիսյան դպրոցի հիմնվելուց առաջ, Վրաստանա հայ եկեղեցիների բեմերից քարոզ լսվում էր վրաց բարեառով հայ ժողովրդի ականջներին՝ հայերեն շհասկանալու պատճառով»: Այսօր շնորհիվ նույն դպրոցի վերականգնեցան հայ լեզուի դպրությունն ամեն տեղ՝ ի ձեռն նույն դպրոցումն սնուած և կրթուած քահանաների և երիտասարդ ուսուցիչների»<sup>7</sup>:

Սովետական պատմագիտությունը նույնպես բարձր է

գնահատում Ներսես կաթողիկոսի հանրօգուստ ծառայությունները: «Զի կարելի ուրանալ խոշոր այս եկեղեցականի վաղեմի ծառայությունները,—գրում է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը,—իր ձեռն առած ազգի ղեկը, Ներսեսը այն մարդն էր, որ շարունակում էր XVIII դարի հայ երեկոի գործիչների՝ դեպի Ռուսաստան կողմնորոշված Խորացել Օրու և Դավիթ Բեկի, Լազարեկի և Հովսեփ Արդությանի քաղաքական ուղեգիծը: ...Տնտեսական, շինարարական, տպագրական ու գրպարոցական իր ջանքերի ուղղությամբ նա շարունակում էր դարձյալ այն գործունեությունը, որի հիմքը նույն XVIII դարում դրել էին Սիմեոն Երևանցին ու Արդությանը: Անասելի էր այդ եռանդը, որ սպառեց Ներսեսը իր որդեգուած ճանապարհով քայլելու համար»<sup>8</sup>:

Ահա այս խոշոր գործչի կերպարը ստեղծելու, «այժմուա և ապագա սերնդոց սրտի ու մտաց մեջ», ինչպես նկարիչն է գրել, «հավերժական ու անջինջ հիշատակ մնալու համար Ստ. Ներսիսյանն ընտրել է դիմանկառչության տարրեր պատկերակեր՝ կրծքից կամ մինչև գոտկատեղը պատկերող դիմանկար, և դիմանկար, որը մարդուն ներկայացնում է ամբողջ հասակով: Հայտնի են երկու առանձին մեծակտավ պատկերներ, որոնք հայոց կաթողիկոսին ներկայացնում են հենց այդպես ամբողջ հասակով, առանձնասենյակում, գահին նստած դիրքով: Այդ երկու պատկերների կոմպոզիցիոն նմանությունը և մանրամասների ճշգրիտ վերարտագրությունը հիմք են տալիս ասելու, որ դրանցից մեկը մյուսի կրկնությունն է: Առաջինը, անկասկած, նկարված է բնականից և թողնում է բնորդից անմիջականորեն ընկալվածի թարմ տպավորությունը: Այդ պատկերն այժմ գտնվում է Ալուակայում (Ղրիմ)<sup>9</sup> Վորոնցովի պալատ-թանգարանում, ուր գտնվելիս է եղել հենց սկզբից՝ 1850-ական թվականներից: Դա նշանակում է, որ այդ մեծակտավ պատկերը կարող էր նկարված լինել 1850-ական թվ. սկզբներին՝ մինչև կաթողիկոսի մահը (1856):

Ինչ վերաբերում է նույնանման կոմպոզիցիայով երկրորդ պատկերին, որը գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահում, ապա այն, կարծում ենք, ստեղծվել է կաթո-

դիկոսի մահից հետո, Հիշողությամբ կամ առաջին պատկերի հիման վրա: Այդ կարծիքի համար հիմք է ծառայում, ամենից առաջ, նկարիչ Գր. Շարբարչյանի հրապարակած այն տեղեկությունը, ըստ որի Ստ. Ներսիսյանը կաթողիկոսի մահից հետո «Ներսիսյան դպրոցի հոգաբարձության պատվերով նկարում է Ներսես Հինգերորդի պատկերը և ստանում 100 ռուբլի»<sup>10</sup>: Ժամանակակիցները նույնպես վկայում են, որ Ներսիսյան դպրոցի ուսուցչական սրահի պատից երկար ժամանակ կախված է եղել դպրոցի հիմնադիր Ներսեսի մեծակտավ պատկերը: Դա ներկայացնում է Ներսես Աշտարակեցուն կաթողիկոսական դահին նստած, սրածայր վեղարը գլխին, սևազգեստ, աջ ձեռքը սեղանին՝ Ս. գրքի վրա դրած, ձախը հենած բազկաթոռի եղրին և մատներով թզբեհը բոնած, ծերունական նիշար, սմբած դեմքով, երկար ու սպիտակ մորուքով:

Կաթողիկոսի ամբողջ ֆիգուրը ներկայացնող այս դիմանկարը տոնական-հանդիսավոր բնույթ ունի: Դա երևում է ոչ միայն պատկերվողի կեցվածքից, այլև նրա կաթողիկոսական հագուստի մեծարժեք զարդարանքներից: Մեծ աստղաշքանշանը, որը փակցված է ձախ կրծքին, վզից կախված պնակեն՝ եկեղեցական բարձրաստիճան զարդը, և աղամանդի խաչը վեղարի վրա՝ զագաթի մոտ, որոշակի ցուցադրում են ծայրագույն պատրիարքի պաշտոնական կողմը: Այդ հանդիսավորությանը նպաստում է նաև պատկերի երկրորդ պլանի աջ կողմի վերին մասը ծածկող վարագույրը, որը տոնական մոնումենտալ դիմանկարի ավանդույթի արտահայտություն է հայ նկարչի ստեղծագործության մեջ: Հատկանշական է և այն, որ այստեղ, ինչպես և Բեհբությանի դիմանկարում, նկատվում է դիտողից պատկերվող անձնավորության հեռու լինելը: Անցյալի դասական դիմանկարչության այդ հատկությունը, որը կիրառվել է ինչպես ոռուսական, նույնպես և արևմտակելքոպական տոնական մոնումենտալ նկարչության մեջ, Ներսիսյանը հետագայում հաղթահարում է՝ նա կրծատում է այդ տարածությունը և պատկերվողները թվում են դիտողին ավելի մոտ:

Ներսեսի դիմանկարում ավելի խոսուն է նրա դեմքը: Դա ներկայացնում է խելոք, ուժեղ կամքով ու գործունյա, վճռական ու անսասան բնավորությամբ հոգեոր խոշոր գործչի ուսալիստական կերպար: Արտահայտիչ են նրա աջ ձեռքի բարակ, արդեն ոսկրացած մատները, որոնցով կարծես բռնել է Ս. գիրքը: Որոշ պայմանականություն կա պատկերի գունային գամմայում: Ներսես կաթողիկոսի այս դիմանկարին հատուկ է մոնումենտալությունը, որն արտահայտվում է ոչ միայն ամբողջ կոմպոզիցիայում, այլև կերպարի նշանակալից լինելու մեջ:

Ներսես կաթողիկոսի կերպարին նկարիչը կրկին անդրադառնում է 1870-ական թվականների կեսերին և, եթե նախապատրաստվում և տոնվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի 50-ամյակը (1824—1874): Այդ տոնակատարության առթիվ Ստ. Ներսիսյանը նկարում է կաթողիկոս Ներսեսին նվիրված երկու պատկեր՝ մի դիմանկար և մի գրաֆիկական զարդանկար նույն դիմանկարի լուսանկարով: Յուղաներկ պատկերը Ներսեսին ներկայացնում է կաթողիկոսական հագուստով, գոտկատեղից, մուգ կապտավոն վեղարը գլխին, դեմքը երեք քառորդ թեքված դեպի աջ՝ մի կետի հառած հայցքով, բարձրաստիճան շքանշաններ կրծքին: Այս դիմանկարը, իհարկե, նկարված է հիշողությամբ կամ, որ շատ հավանական է, նախորդ տարիներին նկարած պատկերների հիման վրա: Այստեղ նկարիչը ստեղծել է հոգեոր և հասարակական խոշոր գործչի արտահայտիչ կերպար: Հետագայում՝ 1880 թ. հունվարին գրած մի նամակում նկարիչը մեծարելով ամենայն հայոց կաթողիկոսի գերն ու նշանակությունը, գրում է. «Ես՝ նուաստ նկարիչ, նույն դպրոցում ուսանողներից մինն լինելով, ինձ սուրբ պարտք համարեցի իմովս արվեստի ամեն մի զգայուն հայի համար այս երևելի և արժանագով յիշատակն ընդ գրուանաւ շթողնով՝ նկարեցի նորին հիմնադրին կենդանագիրն» (նկ. 7):

Ահա հենց այդ յուղաներկ դիմանկարը այժմ գտնվում է Հայաստանի պետական պատկերասրահի էքսպոզիցիայում:

«Անհայտ նկարչի» անվան տակ: Անստորագիր այս պատկերն, անկասկած, նկարիչ Ստ. Ներսիսյանի ստեղծագործությունն է: Այդ եղբակացության համար մենք հենվում ենք ոչ միայն ոճական նմանության, այլև այն փաստի վրա, որ դրա լուսանկարը նկարիչը դրել է գրաֆիկական իր մի զարդանկարի մեջ: Մենք նկատի ունենք Հայաստանի պետական պատկերասրահի գրաֆիկական ֆոնդում պահպող այն վիմագրությունը, որի վրա գրված է. «Ի լիշտատակ յիսուն տարուայ գոյութեան ներսեսեան հայոց աղգային դպրոցին Տփխիսայ»:

Գրաֆիկական այդ ստեղծագործության պատկանելությունը Ստ. Ներսիսյանին կասկած չի հարուցում նախ և առաջ այն պատճառով, որ դրա վրա կա նկարչի ստորագրությունը: Վիմագրության աջ կողմի ներքեսի մասում՝ շրջանակից գուրս, նկարիչը գրել է իր անունը ոռուսերեն, որոշակի նշելով, որ այդ փորագրությունը բարի վրա կատարել է ինքը՝ իր ձեռքով. «Պու ո րու նա կան Ներսեսօն» գրել է նա<sup>11</sup>: 41×31 սմ շափերով ստվարաթղթի վրա նկարիչը պատկերել է ծառի ճյուղերի բարդ հյուսվածքներ ներկայացնող մի զարդանկար, որի կենտրոնական մասում, ձվածև շրջանակի մեջ փակցվել է Ներսես կաթողիկոսի պատկերի լուսանկարը, որը ճշտորեն ներկայացնում է վերոհիշյալ դիմանկարը: Դա ևս հիմք է տալիս ասելու, որ 1870-ական թվականներին նկարված Ներսես կաթողիկոսի յուղաներկ պատկերը Ստ. Ներսիսյանի ստեղծագործությունն է (նկ. 8, 9):

Վիմագրությունը Ներսես կաթողիկոսին մեծարելու, նրա հանրօգուտ բարեգործությունները ակնառու ցուցադրելու նպատակ է հետապնդում: Այդ են հաստատում զարդանկարի մեջ եղած երեք առանձին բնանկարները ևս: Դրանցից մեկը պատկերում է «Լիճ և անտառ», մյուսը՝ «Լիճ սրբոյ Էջմիածնի», իսկ երրորդը ներկայացնում է նորակառուց Ներսիսյան դպրոցի շենքը շինարարական հրապարակով և մարգկանց ֆիգուրներով: Այդ նկարի շուրջը փորագրված է. «Հայոց Ներսիսյան աղգային հոգեսոր դպրոց ի Տփխիս» (նկ. 10, 11, 12):

Ինչպնդ տեսնում ենք, նկարիչը մի վիմագրության մեջ

պատկերել է կաթողիկոսի կուլտուր-լուսավորական և շինարարական գործունեությունը, ակնառու դարձնելով այս իրողությունը, որ ներսեսը կառուցել է ահա ա՛յս նորաշեն դրաբոցը, հիմնադրել զովաշունչ ա՛յս անտառը էջմիածնի շրջակայրում, փորել է տվել և զովալ ըրով լցրել ահա ա՛յս ջրավագանը, որը Արարատյան դաշտի բնակիչները անվանեցին լիճ:

Այդ վիմագրությունները բնանկարչական ստեղծագործություններ են: Նկարիչը կարողացել է փոքր չափերի մեջ համոզիչ վերարտադրել էջմիածնի շրջակայրի բնության, ավելի ճիշտ՝ մարդու ստեղծագործ աշխատանքով վերափոխված բնության տեսարաններ, որոնք, առանձին վերցրած, իրենց ավարտվածությամբ գեղարվեստական ինքնուրուցն արժեք են ներկայացնում: Դրանք, միաժամանակ, հայ նկարչի ձեռքով նկարված հայրենի բնության առաջին բնապատկերներից են հայ նոր կերպարվեստի պատմության մեջ: Ուստի ազգային բնանկարչական ժանրի սկզբնավորման հարցերը քննության առնելիս պետք է նկատի ունենալ այս երեք վիմագրությունները ևս և նկարչի մյուս ստեղծագործություններում տեղ գտած բնանկարչական մոտիվները, որոնք մինչեւ այժմ դուրս են մնացել ուսումնասիրողների ուշադրությունից:

Ինչպես ձվածկ շրջանակով պատկերը, նույնպես և վերոհիշյալ երեք բնանկարները շրջափակված են ոլորապտույտ, իրար մեջ շղթայիմած ժապավենածկ զարդանկարներով, որոնք լրացնում և մի նոր ավելի շքեղ տեսք են տալիս գրաֆիկական այդ կոմպոզիցիային:

Փոխաբերական իմաստ ունեն դիմանկարի վերեկի մասի գծանկարները: Այստեղ նկարված են երկու թևավոր մանուկ-հրեշտակներ, որոնք բռնել են մի բաց գիրք, որի երկու առանձին էջերի վրա գրված են Աստվածաշնչից քաղվածքներ: Դա Սուրբ գիրքն է, որի վրա էլ դրված են կաթողիկոսի խույրը, գավազանը և խաչը:

Կարևոր նշանակություն տալով իր այդ ստեղծագործու-

թյանը, նկարիչը հարկ է համարել այդ ստեղծագործության  
տակ գրել. «Собственность художника» «Копировать  
воспрещается».

Նկարիչ Ստ. Ներսիսյանից բացի, այդ վիմագրության վրա  
աշխատել է նաև պալատական վիմագրող Տ. Ռայֆենշտեյնը,  
որը և թողել է իր ստորագրությունը:

Այս վիմագրությունը պատահական ու եղակի չէ Ստ. Ներ-  
սիսյանի ստեղծագործական կյանքում: Պետք է նկատել, որ  
Ներսիսյանը զբաղվել է նաև գրաֆիկական ստեղծագործու-  
թյամբ, գլխավորապես վիմագրությամբ: Հաստոցային գրա-  
ֆիկայի այդ նոր տեսակը, որը կերպարվեստի աշխարհ է  
մուտք գործել XIX դարի սկզբներին, Ստ. Ներսիսյանը սովո-  
րել էր Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում: Դա այն  
ժամանակ էր, երբ ոռւս նկարիչներից շատերը, այդ թվում  
գունանկարիչներ Կ. Բրյուլովը, Օ. Կիսլենսկին, Ա. Յունգ-  
կին և ուրիշներ, ինչպես նաև գեղարվեստի ակադեմիայի մի  
շարք պրոֆեսորներ հափշտակված գրաֆիկական նկարու-  
թյան այդ նոր տեսակով, արագորեն տիրապետում են գրա-  
ֆիկական քարի վրա կատարվող փորագրության տեխնիկա-  
յին և սիրով ու մեծ հաջողությամբ զբաղվում վիմագրու-  
թյամբ: Նրանց օրինակով ակադեմիայի ուսանողները ևս ծա-  
նոթանում և սովորում են վիմագրության արվեստը: XIX դա-  
րի առաջին կեսում այստեղ ուսանող հայ երիտասարդներից  
վիմագրություն են սովորում Աղ. Հովնաթանյանը, Հովհ.  
Աֆանդյանցը, Հովհ. Պատկանյանը, Հովհ. Քաթանյանը և  
ուրիշներ, որոնք հետագայում աշխատում են գլխավորապես  
Հենց այդ բնագավառում:

Տիրապետելով վիմագրությանը, Ստ. Ներսիսյանը, սա-  
կայն, մշտապես չի աշխատում վիմագրության բնագավա-  
ռում: Մեզ հասած գրաֆիկական ստեղծագործությունները  
ցույց են տալիս, որ Ներսիսյանը վիմագրություն կատարել է  
իր կյանքի գործունեության երկրորդ շրջանում՝ 1860—79-  
ական թվականներին, և կյանքի վերջին տարիներին: Վիմա-  
գրությունը նրա համար եղել է միջոց իր նկարած գունանկար-

շական պատկերները գրաֆիկական միջոցներով բազմացնելու և դրանք ժողովրդի մեջ տարածելու համար:

Մեզ Հայտնի գրաֆիկական ստեղծագործությունները ներկայացնում են նկարչի գունանկարչական պատկերներից կատարված փորագրություններ վիմագրական քարի վրա: Այդպիսին են, օրինակ, Ներսես կաթողիկոսին, Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին պատկերող վիմագրությունները: Հատկանշական է Ներսես կաթողիկոսին ներկայացնող այն վիմագրությունը (նկ. 11), որը ճշգրտարեն վերարտադրում է նկարչի մեծածավալ գունանկար պատկերի կոմպոզիցիան, նրա կերպարը և այն ամեն մանրամասները, որոնք առկա են վերոհիշյալ գունանկարչական ստեղծագործության մեջ:

Այս վիմագրությունից երկու օրինակ՝ «զույգ պատկերուանմահ Ներսեսի», նկարիչը ուղարկում է Էջմիածին՝ մի նամակի հետ, որի մեջ կաթողիկոս Գևորգ Զորբորդին գրում է. «Ես՝ նվաստ նկարիչս, իմ խորին զգացմամբ և երախտապարզ հոգվով արկի զայս գործ իմս մատանց յազգս, որ յուրաքանչյուր ոք ունելով առաջ աշաց՝ անշինչ պահեսցե անմահ հիշատակ երջանկին»: Այդ պատկերները էջմիածնում ստացվել են 1878 թ. ապրիլի 20-ին և որպես նկարչի ընծա գույքամատցանում գրանցվել է ապրիլի 28-ին:

Վիմագրությունը տպագրվել ու բազմացվել է արտասահմանում: Այդ մասին «Մշակ» թերթը դեռևս 1880 թ. գրում է, որ Ստ. Ներսիսյանը «վերջին տարիներս նկարեց իր բարերար երջանկահիշատակ Ներսեսի պատկերը, որից արտասահմանում արտատպել տվեց և վաճառում էր բավական մատշելի գներով»<sup>12</sup>:

Արտասահմանում արտատպած այդ վիմագրությունը լայնորեն տարածվում է ոչ միայն Արևելյան Հայաստանում ու Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում, այլև Արևմտյան Հայաստանի հայաշատ բնակավայրերում: Կոստանդնուպոլսում լույս տեսնող «Մասիս» պարբերականը 1880 թ. մարտ ամսին հաղորդում է. «Աղդ, Ներսես Ե. պատկերն, գործ հայրենասեր նկարիչ պ. Ներսիսյանցի տփիսիսեցվո, կծախվի ի Պոլիս գրավածառ պ. Ս. Ղուկասյանի մոտ: Իսկ ի Զմյուռին

(Զմյուռնիա-Էղմիք) առաջնորդարանի տաճկերենի ղիվանապես 0Հան էֆենդի Մուրադյանի մոտ, գին երկու մեծիթ։ Այս հայտարարությունը տպագրվում է թերթի երկու համարներում<sup>13</sup>, ժամանակակիցները, հատկապես Թուրքիայի բոնակալական գերիշխանության տակ գտնվող արևմտահայերը, այդ վիմագրությանը տվել են կարեսոր հայրենասիրական նշանակություն։ Այդ դիմանկարի մեջ նրանք տեսել են «աղդի պաշտպանին», որի հետ էլ կապում են իրենց ազատագրության հույսերը։ Ուշագրավ է և այն, որ «Ազգ» կոչված այս հայտարարության վերջում «Մասիս» պարբերաթերթը ավելացրել է. «Սույն պատկերը կարող է գեղեցիկ զարդ լինել ամեն հայ տուններու համար»։ Դա նշանակում է, որ վիմագրությունը մտնելով յուրաքանչյուր ընտանիք, ուսումնական կամ հոգեսոր ու առեւտրական հիմնարկ, միաժամանակ պատճառում է գեղարվեստական հրապույր, նպաստելով արևմտահայության գեղագիտական զարգացմանը։

1860—1870-ական թթ. Ստ. Ներսիսյանը նկարում է իր ժամանակի հասարակական և մշակութային գործիշների նոր պատկերներ։ Դրանցից առանձնապես հայտնի են Գր. Իգմիրյանի և նրա կողմանց՝ Սոֆյայի դիմանկարները։

Հայկական ՍՍՀ Զարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանում ցուցադրվող թատերական գործիշ Գրիգոր Իզմիրյանի դիմանկարը (նկ. 13) Ստ. Ներսիսյանը նկարել է 1865 թ. նոյեմբերին։ Այդ մասին հիշատակություն կա նույն այդ պատկերի ձախ կողմում։ Այստեղ կարդում ենք. «Բոպալէ մի կոմիսիայում՝ի 11 նոյեմբերի, 1865 ամի, Գ. Իզմիրյանց»։ Այժմ դժվար է ասել, թե ինչ առիթով է գրված այս երկողը, սակայն պարզ է մի բան՝ դիմանկարը ստեղծվել է այն ժամանակ, երբ նկարիչը Շուշից Թիֆլիս տեղափոխվելուց հետո ընդգրկվել էր հայոց թատրոնական ընկերության խմբում, մասնակցել է նրա հանձնաժողովի (կոմիսիայի) աշխատանքներին և, հավանաբար, հենց այդ նիստերից մեկի ժամանակ նկարել է հայկական նորաստեղծ թատրոնի հովանավոր ու մեկենաս Գրիգոր Իզմիրյանի կերպարը։

Գրիգոր Իղմիրյանի դիմանկարը ներկայացնում է Հայ  
մշակույթի հետ սերտորեն կապված և լուսավորյալ հարուստ  
մարդու ունալիստական կերպար: Նա պատկերված է նստած  
դիրքով, մարմնի երեք քառորդ թերությամբ, աչ ձեռքը սե-  
ղանի ծայրին դրած, ձախը իջեցրած, հանգիստ՝ արտաքուստ  
անվրդով: Նրա հայացքը ուղղված է մի կողմի վրա՝ գեսի  
ջնուները և կենտրոնացված է մի կետի: Հազած ժամանակի  
եվրոպական հագուստ՝ կոստյում, որի տակից առջևի մասում  
երևում է սպիտակ վերնաշապիկը, նույնպիսի սպիտակ վղնո-  
ցով և մուգ կապտագույն բարակ ժապավենով փողկապ՝ ար-  
ված, հագուստաձև, որը նոր էր մուտք գործել Հայ իրակա-  
նության մեջ, իղմիրյանը առաջին իսկ հայացքից կիրթ մար-  
դու տպավորություն է թողնում: Վզից կախված ժամացույցի  
ոսկե շղթան, որը մի փոքրիկ հանգույց է արված կրծքին, մի  
առանձին փառ և աշխույժ ոիթմ է ստեղծում վերնաշապիկի  
սպիտակ հենքի վրա: Նրա սև և առատ մազերը, նույնպես սև  
ու հաստ, բայց կարճ, ոչ սրածայր բեղերը և առնական դի-  
մագծերը, հաստ, աղեղնաձև ունքերի տակից երևացող փոքր,  
նշաձև աշքերը բնութագրում են անձի անհատականությունը  
և աղգային հատկանիշը: Առաջին հայացքից խստաբարո  
թվացող այս մարդու կերպարի մեջ նկարիչը վերարտագրել  
է նրա բարեհոգությունը, հասարակական շահերով ապրող  
անձնավորության հատկությունը, ներկայացնելով ուժեղ  
կամքով, բնավորությամբ հաստատուն ու նպատակալաց  
մի մարդ: Նա հայտնի է նաև նրանով, որ համբարական շար-  
ժումներին եռանդուն մասնակցելու և կառավարության դեմ  
նրանց ոտքի հանկլու համար ոստիկանության կողմից հե-  
տապնդվել ու ենթարկվել է հսկողության:

Այդ է վկայում Գր. Իղմիրյանի խրոխտ ու համարձակ  
հայացքը դիմանկարում: Նրա կեցվածքը այստեղ բավական  
ակտիվ է ու աշխույժ: Նա կեցվածքը չի ընդունել նկարվելու  
համար, չկա կաշկանդվածության և ոչ մի նշույզ: Աղաւան նպաւած  
նա թերվել է դեպի դիտողը և, կարծես, գտնվում է նրա հետ ան-  
միջական շփման կամ զրույցի մեջ: Դա դիմանկարի կոմպոզի-  
ցիային տվել է շարժունություն: Իսկ այդ կոմպոզիցիան, ինչ-

պես և պատկերի հյութեղ կոլորիտը, նպաստել են կերպարի լոխը բացահայտմանը: Դրան նկարիչը հասել է գումանկարչական միջոցներով, կիրառելով ձևերի ուժեղ ծեփվածք և լուսաւուվերի հակադրություններ:

Լույսը կենտրոնացված լինելով շագանակագույն դեմքի, սպիտակ վերնաշապկի և ձեռքի վրա, իսկ մյուս մասերը թողնելով ստվերի տակ, նկարիչը դրանով իսկ կազմակերպել է դիտողի ուշադրությունը, հարթ, միատարր մոխրագույն հենքի վրա ցայտուն դարձնելով մարդու կերպարը: Այսուեղ նս, ինչպես և նախորդ մյուս դիմանկարներում, ֆիգուրը և դեմքը նկարված են ծալվալային և նյութական: Մեղմ անցումներով տրված հագուստի ծալքերը բնավ չեն շեղում դիտողի ուշադրությունը և մարդը, ինչպես որ կա, ամբողջապես ներկայանում է դիտողին, մարմնավորելով ժամանակի հասարակական-մշակութային գործի համոզիչ կերպարը:

Ստեփանոս Ներսիսյանը ստեղծագործական նոր հաջողության է հասնում Սոֆյա Իզմիրյանի (1843—1904) դիմանկարում: Սոֆյան եղել է հայ առաջին կին դերասանուհին արևելահայ իրականության մեջ: Դեռևս օրիորդ ժամանակ, երբ կրում էր Մելիք-Նաղարյան ազգանունը, նա բուռն սեր տածելով գեղարվեստի նկատմամբ, հակառակ նահապետական ընտանիքի նախապաշարումներին, դառնում է դերասանուհի և Թիֆլիսում 1863 թ. հայկական ազգային թատրոն հիմնադրելուց հետո բեմ է բարձրանում: Կանացի գերերի իր ուշագրավ խաղերով նա վայելում է արվեստասեր հասարակության սերն ու հարգանքը: Մի քանի տարի բեմում խաղալուց հետո, նա թողնում է թատրոնը և նվիրվում նկարչությանն ու ձեռագործին: Սոֆյա Իզմիրյանը նկարչություն է սովորում իրենց առանձնատան վերնահարկում ապրող նկարիչ Ստ. Ներսիսյանի մոտ<sup>14</sup>: Նրա օգնությամբ և խորհրդով Սոֆյան այնքան է առաջադիմում նկարչության և ձեռագործության մեջ, որ սկսում է գեղարվեստական հետաքրքրություն ներկայացնող պատկերներ և զարդանկարներ ասեղնագործել: Այդ մասին վկայում է գրող Պ. Պողոսյանը<sup>15</sup>:

1880-ական թթ. Սոֆյա իզմիրյանն արդեն հանգես է գալիս բարձրարվեստ աշխատանքով։ Մետաքսի թելերից ու ոսկեթելով ձեռագործված գեղարվեստական նշանակություն ունեցող բազմազան զարդանկարներն ու պատկերները ժամանակին ցուցագրվում են հասարակությանը։ Նրա աշխատանքներն առանձնապես մեծ հաջողություն են գտնում 1889 թ. Թիֆլիսում բացված Կովկասյան ցուցահանդեսում<sup>16</sup>։ 1860-ական թթ. ձեռնամուխ լինելով այդ կրթված և բազմատաղանդ կնոջ դիմանկարի ստեղծմանը, նկարիչն իր առաջ խընդիր է գնում կերտել իր ժամանակի ազատամիտ կնոջ կերպար (նկ. 14)։

Սոֆյա իզմիրյանի դիմանկարը ներկայացնում է երիտասարդ կնոջը նստած, ձախ կողքով թիկնած փոքրիկ կլոր սեղանին, ձեռքերն իրար վրա դրած, դեմքը թեքած դեպի դիտողը, հանգիստ, բայց մեղմ հայացքով առաջ նայելիս։ Նա զլիսին դրել է կարմիր գույնի շիխտի կապի, առջեխ մասում ոսկե քորոց փակցված, որը ծածկված է մետաքսյա, տեղտեղ ոսկեզօծ թելերով ասեղնադործված եռանկյունաձև շիքիլա զլիաշորով, որի երկար ժայրը իշել է գոտկատեղից ցած։ Նրա դեմքի երկու կողմերից կախվել են շիկահեր հյուսքերը, որոնք, կարծես, շրջանակներ լինեն կնոջ գեղեցիկ դիմագծերով պատկերը ամփոփ ներկայացնելու համար։ Սոփյան հագել է այն ժամանակ հայ իրականության մեջ նոր մուտք գործած տարագ՝ վերեխ մասում կիպ, իսկ ներքեսում լայն ու գոտկատեղում շարով հավաքված։ Մուգ մոխրագույն մետաքսյա կտորից կարված այդ նորաձև հագուստի առջեկի մասում կան զարդակոճակներ, իսկ թեքաբերանին երեսում է մետաքսյա սպիտակ կտորի ծալաբոլորք։ Այդ բոլորը լրացնում են հարստացնում են երիտասարդ կնոջ կերպարը այնպիսի նորություններով, որոնք նրան առաջին իսկ հայացքից ուշադրուավ են դարձնելում։

Սակայն նրա տարբերությունն ավելի շատ զգացվում է դեմքի խորը հոգեբանական բնութագրության մեջ։ Սոփյա իզմիրյանի դիմանկարը ներկայացնում է քաղաքակիրթ կնոջ կերպար։ Բաց շագանակագույնով նկարված, ստվերոտ մա-

սկը, մոխրագույնով թեթև նշված նրա դեմքը թվում է խաղաղ ու Հանգիստ, սակայն նրա դեմքի մտախոհ արտահայտությունը մատնում է նրա ներքուստ խռովահույզ վիճակը: Խսկապես, նրա փոքրիկ աշքերը, որոնք նշմարվում են շիկահեր ունքերի տակից, իրենց մեջ կրում են ինչ-որ թախծոտ տրամադրություն: Նկարիչը դա չի թաքցրել դիտողից: Հավանաբար, նրան այդ թախիծը հասկանալի է եղել: Մեր օրերի մարդու համար ունեսոր և բարեկեցիկ ընտանիքի կնոջ ներքին հուզումնալից վիճակը կարող է անհասկանալի թվակալ, եթե նկատի չառնենք հոգով արտիստ այդ կնոջ անձնական աշխարհը: Թողնելով թատրոնը, նա փորձեց իր ուրախությունը գտնել նկարչության և ասեղնագործության մեջ: Բայց որքան էլ դրանք նոր ու գեղեցիկ լինեին, այնուամենայնիվ, չեին կարող փոխարինել մանկուց երազած ու փայտայած այն թատրոնին, որի բեմում մի քանի տարի փայլուն հաջողություն է ունեցել: Ուրեմն, նկարչի հերոսուհու թախծոտ արտահայտությունը ոչ այնքան նեղ անձնական, որքան հասարակական հնչեղություն ունի:

Նկարիչ Սա. Ներսիսյանի ժամանակ, երբ հայ հասարակությունն ապրում էր զարգացման աննախընթաց մի շրջան, մտածող ու առաջադեմ շատ կանաչք երբեմն բախվում էին չին, նահապետական բարքերի հետ և հուզմում կամ հիասթափվում էին: Սոֆյա Իզմիրյանը հենց այդ կանանցից մեկն էր, մի կերպար, որի մեջ արտացոլում է գտել ժամանակի հասարակական շահերով ապրող առաջադեմ կնոջ մասին նկարչի հումանիստական պատկերացումը: Գունային մեղմ գամման, որը հատկանշական է այս դիմանկարի համար, համապատասխանում է ստեղծագործ կնոջ համեստ կերպարին և ավելի է համոզիլ դարձնում այն:

Սոֆյա Իզմիրյանի դիմանկարը պատկեր-դիմանկար է, որտեղ ձեւերի ազատությունը և կենցաղային որոշ տարրեր կոմպոզիցիայում նոր ու թարմ խոսք են բերում ազգային դիմանկարչության մեջ:

Պետք է նկատել, որ Ստեփանոս Ներսիսյանի դիմանկարների շարքում առանձին հետաքրքրություն են ներկա-

յացնում կանացի կերպարները։ Դժբախտաբար այդ կանացի պատկերներից և ոչ մեկը տարեթիվ կամ նկարչի ստորագրություն չունի։ Ուստի այժմ դժվար է որոշել դրանց ժամանակագրական կարգը, մանավանդ որ իրենց բնույթով այդ ստեղծագործությունները նկատելիորեն տարբերվում են իրարից։ Մենք շգփտենք նաև նրանց ով լինելը և այդ դիմանկարների ստեղծման շարժառիթները։ Սակայն պարզ երեսում է, որ Ստ. Ներսիսյանին վերագրվող վերոհիշյալ 5 դիմանկարները, դատելով նրանց արտաքին տեսքից, մազերի հարդարման ձևերից ու տարազից, ներկայացնում են նկարչի ժամանակակից կանանց՝ թիֆլիսահայերի։ Քննության առնելով այդ ստեղծագործությունները միասին, մենք նկատում ենք, որ դրանք, ինչպես և տղամարդկանց դիմանկարները, պատահական պատվերներով չեն ստեղծվել, այլ նկարվել են, ամենայն հավանականությամբ, նկարչի ընտրությամբ և արտահայտում են ժամանակի առաջադիմական գաղափարները կնոջ աղատագրության, նրա հոգեկան հարստության և ներքին ստեղծագործ ուժերի մասին։ Բնորոշ է տիկին Գ. Ակիմյանի դիմանկարը, որը գտնվում է վրացական ՍՍՀ կերպարվեստի թանգարանում (նկ. 15)։

Տիկին Գ. Ակիմյանի դիմանկարը նկարչի լավագույն ստեղծագործություններից մեկն է։ Դա, միաժամանակ, XIX դարի հայ աղքային հոգեբանական դիմանկարչության առաջնակարգ հուշարձաններից է, որը ներկայացնում է դիմանկարչության արվեստի մի նոր, ավելի բարձր մակարդակ, որին հասնում է նկարիչը անցյալ դարի երկրորդ կեսում։ Դիմանկարը պատկերում է միջին տարիքի գեղեցկադեմ մի կնոջ, նստած դիրքով։ Նա թիկնել է բարձին, գլուխը քիչ թիքել և հենել է ձախ ձեռքին, մտախոհ հայացքով նայում է առաջ։ Գ. Ակիմյանը պատկերված է շքեղ, տոնական զգեստով։ Նկարիը մանրամասնորեն և արտակարգ վարպետությամբ է վերարտադրել նրա հագուստի մետաքսե կտորի նյութականառարկայական հատկությունը, փայլը, բարդ և բազմազան ծալքերը, որոնք բավական ակտիվ ու շարժուն են դարձնում դիմանկարի այդ մասերը։

Շատ կենդանի արտահայտություն ունի նրա դեմքը: Գ. Ակիմյանը ևս ներկայացված է որպես քաղաքակիրթ, ինտելեկտուալ կարողությամբ օժտված մի կին, որը ազատ ընտանիքան առօրյա հոգսերից, ապրում է սեփական կյանքով: Բովանդակալից և ամրակուռ է դիմանկարի կոմպոզիցիան: Սա ևս դիմանկար-պատկեր է, որի ներքին եռանկյունաձև կառուցվածքը հնարավորություն է տվել նկարչին ոչ միայն հաստատուն դիրք տալ նստած կնոջ կեցվածքին, այլև ցայտուն արտահայտել նրա տրամադրությունը: Դիտողին ուղղված նրա խելացի աշքերի արտահայտության մեջ նկարիչը մեծ ուժով բացահայտել է այդ ուշագրավ կնոջ ներաշխարհը՝ նրա խոհականությունը: Գ. Ակիմյանի դիմանկարը մարմնավորում է XIX դարի երկրորդ կեսում զարգացող հայ հաստակության մեջ ծնունդ առած ազատախոհ կնոջ գեղարվեստական կերպարը: Նկարիչը նրան պատկերել է որպես մտածող անձնավորություն, մեկը հասարակության այն անդամներից, որոնք իրենց բանիմացությամբ նպաստում են ազգային կյանքի առաջադիմությանը:

Բոլորովին այլ բնույթ ունի Հայաստանի պետական պատկերասրահի մշտական էքսպոզիցիայում ցուցադրվող «Կանացի դիմանկարը»: Դա պատկերում է տարիքը առած մեղ անձանոթ մի կնոջ, որը ներկայացված է դիմացից, արտաքուստ խաղաղ, հանգիստ վիճակում: Սակայն այդ խաղաղ կեցվածքի մեջ նրա դեմքը երևում է աշխույժ, ակտիվ շրջապատի նկատմամբ և, որ կարևոր է, բովանդակալից է: Դա էլ դիտողին պատկառանք է ներշնչում: Դիմանկարը ամբողջապես կառուցված է գույների ներդաշնակ համադրության վրա, սառը և տաք գույների երանգային մեղմ անցումներով (նկ. 16):

Կանացի մի նոր կերպար է ներկայացնում Մոսկվայի արևելյան ժողովուրդների արվեստի պետական թանգարանում գտնվող «Անհայտ կնոջ դիմանկարը» (նկ. 17): Այստեղ պատկերված է միջին տարիքի մի կին դիմացից, հայացքը առաջ՝ մի կետի հառած, սպիտակ, թափանցիկ գլխաշորը դիմին, մուգ-կապտավուն մահուղե հագուստով և ձեռքերը առջևի ծաղկազարդ գոտկատեղում դրած: Դիմանկարի եռան-

կյունաձեւ կոմպոզիցիան ամուր հիմք է ժառայել նստած կնոջ ծավալուն ֆիգուրը մինչև ծնկները ամբողջական ներկայացնելու համար: Կա ինչ-որ հոգնածության դրոշմ նրա առաջին հայացքից սառը թվացող աշքերում: Դա ապրած կյանքի, ուրախություններ վայելած և դառնություններ ճաշակած կնոջ մասին է վկայում:

Իր կոմպոզիցիայով և գունային լուծումով կանացի մյուս դիմանկարներից մի փոքր առանձնանում է Եղիսաբեթ Աբովյանի դիմանկարը (նկ. 18): Դա Ստ. Ներսիսյանի այն ստեղծագործություններից է, որը չի կրկնում նախորդ կանացի դիմանկարների պատկերաձևերը: Եղ. Աբովյանի դիմանկարը պատկերում է տարիքավոր մի կնոջ, որը նստած է, ձախ ձեռքը աթոռի հենակին դրած, աշը՝ ծնկանը, մարմինը քիչ դեպի ձախ թեքած, իսկ դեմքը դիմացից՝ ճակատային, դիտողին ուղղված հայացքով: Գլխին զցած երկգույն գլխաշորը, վզի մոտ՝ առջևում, լայն հանգույց արված, իսկ գլխաշորի ծայրերը աջ ու ձախ թեքված լինելով համընկնում են գարնանային թավշյա վերարկուի աղվեսի մորթոց կարված եղբաշերտերի հետ: Դրանք բավական շարժուն, սլացիկ ձեռվ ձգվում են վերևից ներքև, ուղղակի կապ ստեղծելով ֆիգուրի ու նրա դեմքի միջև: Դեմքը և ձեռքերը նկարված են բաց մոխրագույնով, որը համընկնում է նրա ամբողջ ֆիգուրի ու պատկերի հենքի հետ: Նկարիշը կարծես խուսափել է շագանակագույնի առատ գործածությունից:

Եղիսաբեթ Աբովյանի դիմանկարը ներկայացնում է գավառական քաղաքի բնակչություն կերպար: Սա արդեն այն քաղաքակիրթ կինը չէ, որոնց մենք հանդիպեցինք նախորդ դիմանկարներում: Դատելով նրա հագուստաձևերից, կարելի է ասել, որ նա երևանցի կին է: Եղ. Աբովյանը երեսում է դիտողին որպես ընտանիքի մեծ մայր՝ մի ամբողջ գերդաստանի ավագը, որի կյանքը անցել է աշխատանքում, ընտանիքի հոգսերի մեջ և նահապետական կյանքի պայմաններում: Նա հեռու է մայրաքաղաքային կյանքի նորաձևություններից և կանացի պահամությունից: Նրան, հավանաբար, չեն հետաքրքրել հասարակական կյանքի հուզող հարցերը: Նա բավարարված

չու գոհ ընտանիքում ունեցած իր իշխանությամբ և դա նրան ուժ է տվել ազատ ու անկաշկանդ նստել դիտողի առաջ և համարձակ նայել նրան։ Ստ. Ներսիսյանի կերտած դիմանկարը ներկայացնում է դրական կերպար, մեկը այն հերոսութիւններից, որոնք ոչ թե հասարակական, մշակութային կյանքում, այլ ընտանիքում, որպես հասարակության ստորին օղակում, օգտակար աշխատանք են կատարում։

Ստ. Ներսիսյանի դիմանկարչական ժառանգության մեջ մեծ տեղ են գրավում մշակութային գործիչների պատկերները։ Այդ ստեղծագործություններում նա ավելի ազատ ու հըստակորեն է արտահայտում իր գաղափարական-գեղարվեստական ըմբռնումները և, որ կազմոր է, ավելի լայն ու խորությամբ է ներկայացնում ժամանակակից և պատմական խոր անձանց կերպարները։

Մեսրոպ Մաշտոցի դիմանկարը Ստ. Ներսիսյանը ստեղծում է իր կյանքի վերջին շրջանում՝ մահվանից երկու տարի առաջ, 1882 թ.։ Նույն ժամանակ նա նկարում է նաև կաթողիկոս Սահակ Պարթևի դիմանկարը։ V դարի հայ մշակութիւնը երկու խոշոր գործիչների դիմանկարներն այժմ գտնվում են Էջմիածնում, Ամենայն Հայոց կաթողիկոսի վեհարանում<sup>17</sup>։

Հայոց գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի և նրա գործակից ու թարգմանիչ Սահակ Պարթևի դիմանկարները ժամանակին շերմ ընդունելություն են գտնում և նկարչին մեծ համբավ են բերում։ Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ նկարիչը պատկերել է ժողովրդի կողմից սիրված ու մեծարված պատմական խոշոր անձանց, այլև այն պատճառով, որ այդ գործիչների կերպարները նկարվել են բարձր արվեստով, գեղարվեստորեն համոզիլ ու ոգեշնչվածությամբ։

Իսկապես, Մեսրոպ Մաշտոցի դիմանկարը բարձրարվեստ ստեղծագործություն է։ Դա դիմանկար-պատկեր է, որն իր մեջ կուսմ է սյուժեաային տարր՝ Հայերեն տառերի ստեղծման պահը 405 թվականին (նկ. 19)։

Մեսրոպ Մաշտոցը (361—440) այստեղ պատկերված է բնության գոկում, լեռան լանջին նստած դիրքով, կիսադեմ, ստեղծագործական ոգևորության պահին։ Նա թեքվել է մի

կողմի վրա, գլուխը բարձրացրել է վեր, հայացքն ուղղել է դեպի երկինք, ձախ ձեռքը կրծքին սեղմած, իսկ աջով ծնկին դրած մատյանի մեջ գրի է առնում հայերեն առաջին տառերը: Նրա դեմքը և մարմնի մի մասը հստակորեն գծված են երկնքի հենքի վրա, անմիջապես ընկալվում են, ցայտուն դարձնելով մեծ հայտնագործողի տիրապետող դիրքը կոմպոզիցիայում: Բնության տեսարանը՝ երկնքի պատկերը, այսուեղ կատարում է լրացոցիշ դեր՝ կերպարի լրիվ բացահայտման համար: Հորիզոնում երեացող վաղորդյան արշալույսի ցոլքերը լուսավորել են Մեսրոպի դեմքը: Պատկերը ներկայացնում է ոգեշնչված, իմաստուն մարդուն նրա ստեղծագործական երկունքի պահին:

Մեսրոպ Մաշտոցի պատկերը ստեղծելիս նկարիչն առաջնորդվել է նրա ժամանակ և մինչև այդ՝ դարերի ընթացքում, ժողովրդի մեջ արմատավորված պատկերացումը այն մասին, թե հայերեն տառերը հորինելիս Մեսրոպը ներշնչվել է վերուստ՝ երկնքից իշած տեսիլքի ձևով: Դրան հիմք է ծառայել պատմահայր Մովսես Խորենացու գրած առասպելը: Իր «Պատմություն հայոց» գրքում Մ. Խորենացին գրել է, որ Մ. Մաշտոցը հայ տառերը հորինել է «երկնային շնորհով»<sup>18</sup>:

Հիմք ընդունելով Մ. Խորենացու նկարագրությունը, նկարիչը պատմականորեն ճիշտ է պատկերել Մեսրոպ Մաշտոցի մարդկային կերպարը: Պատմիչը, օրինակ, գրում է, որ Մաշտոցը «մարմնով փառահեղ» էր: Հենց այդպես էլ Մեսրոպ Մաշտոցը պատկերված է այս դիմանկարում: Ուժեղ ընդգծելով Մեսրոպի «մարմնով փառահեղ» լինելը, նրա ֆիգուրը ներկայացնելով առաջին պլանում, նկարիչը դրանով միաժամանակ ցուցադրում է նրա մեծությունը և ուժը, որը հստակորեն վերարտադրված է նաև ծավալային ու մկանուտ վղի պատկերման մեջ:

Նկատի ունենալով պատմահոր վկայությունն այն մասին, թե Մեսրոպը «մտքով ստեղծող» էր, նկարիչը պատկերել է նրան ստեղծագործական երկունքի պահին, իսկ պատմահոր այն վկայությունը, թե «նա հրեշտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք», հիմք է ծառայել նկարչի համար իր հերո-

սին պատկերելու հայ տղամարդու գեղեցիկ դիմագծերով, ու բեղերով, կարճ մորուքով, երեսը մի փոքր մազակալած, որ ընդգծում է նրա առնականությունը, և խելացի հայացքով:

Մեսրոպ Մաշտոցի դեմքն այստեղ այնքան կենդանի ու համոզիլ է, որ թվում է, թե նկարիչը նկարել է բնորդից: Թերեւ այդ պատճառով, Մեսրոպի դեմքը, ձեռքերը և, ընդհանրապես, ամբողջ ֆիգուրը պատկերված է նյութական-առարկայական և լուծված է ռեալիստական մեթոդով: Արդարացի է արվեստաբան Ե. Մարտիկյանը, երբ գրում է, որ Ստ. Ներսիսյանը «Մեսրոպին պատկերել է մարդկային կոնկրետ ռեալ նկարագրի հատկանիշներով»:

Ստեղծելով պատմական դիմանկար, Ստ. Ներսիսյանը, սակայն, չի սահմանափակվել միայն սեղմ տեղեկությամբ: Նա նկատի է ունեցել նաև իր ժամանակի պահանջները, որոնք արտահայտվել են, ամենից առաջ, դիմանկար-պատկերի սյուժեային լուծման ու գրերի գյուտի բարձր գնահատման մեջ: Դիմանկարը պարզորոշ ցույց է տալիս այն մեծագործությունը, որը կատարել է Մեսրոպ Մաշտոցը Վ դարում: Հայ ժողովրդի պատմության մեջ դարավուխ կազմող հայ գրի ու գրականության ստեղծումը դարձավ հզոր զենք հարազար ժողովրդի ինքնուրույնության պահպանման, նրա փրկության, պայքարի ու քաղաքական ինքնագիտակցության բարձրացման գործում:

Բնական է, որ մեծ գիտնականի, պետական-հասարակական խոշոր գործչի՝ Մեսրոպ Մաշտոցի, լուսապայման կերպարը չէր կարող պատկերվել դիմանկարի սովորական շրջանակներում: Դա պետք է խոսեր, պատմեր, ցույց տար առապելական թվացող այն մեծագործությունը, որը կատարվել է ավելի քան հազար հինգ հարյուր տարի առաջ, մանավանդ, որ ժողովրդի մեջ, դարերի ընթացքում, սրբագործվել է գրերի գյուտը, իսկ Մեսրոպը դասվել է սրբերի շարքը: Այդ պատճառով, նկարիչը մի փոքր հեռացել է դիմանկարի սովորական պատկերաձևից և ստեղծել է միաֆիգուր կոմպոզիցիա, որի մեջ մարմնավորել է Մաշտոցի բանաստեղծական կերպարը: Պատմական անձնավորության կերպարի այդօրինակ

լուծումը որոշ ռոմանտիկական տարր է մտցնում դիմանկարի մեջ, թեև իր հիմքում այն խորապես ռեալիստական ստեղծագործություն է:

Սահակ Պարթեկի դիմանկարը շարունակությունն է այն թեմայի, որը արդեն սկսվել էր Մեսրոպ Մաշտոցի դիմանկարից: Եթե Մ. Մաշտոցի դիմանկարը ներկայացնում է հայոց դրերի գյուտը և այդ մեծ հայտնագործության հեղինակին, ապա Սահակ Պարթեկի դիմանկարը՝ այդ նորագյուտ տառերով գրված (թարգմանված) առաջին մեծ թարգմանչին ու Սուրբ Գրքի ընթերցման պահը: Դիմանկարը պատկերում է Սահակ Պարթեկին գրասեղանի մոտ, բազկաթոռին նստած, երկու ձեռքով Ս. գիրքը (Աստվածաշունչը) բռնած, կարդալիս (նկ. 21): Հայոց կաթողիկոսին այդ ձեռք պատկերելը բխում էր նրա հասարակական-Հանրօգուտ գործունեության բնույթից: Հայտնի է, որ V դարի սկզբներին անմիջականորեն գործակցելով Մ. Մաշտոցի հետ, Սահակը նպաստել է հայերեն տառերի ստեղծմանը: 406 թ. Հայոց տառերը Հայաստանում գործածության մեջ մտցնելուց հետո, ժամանակի շատ մտավորականներ, այդ թվում և ինքը՝ Մ. Մաշտոցը, եղնիկ Կողբացին, Հովսեփ Պաղնացին, Հովհան Եկեղեցացին և, հատկապես, մեծ մտածող ու գիտնական Սահակ Պարթեկը գրադիւմ են թարգմանությամբ: Թարգմանում են գլխավորապես կրոնական գրքեր, Աստվածաշունչը, Հոգևոր Ճառեր և մեկնություններ Հունարենից կամ ասորերենից և միաժամանակ Հոգ են տանում ստեղծելու սեփական, ինքնուրույն գրականություն: Սահակը առաջիններից մեկն է, որ կատարում է Աստվածաշնչի թարգմանությունը և կազմակերպում է ինքնուրույն հայ գրականության ստեղծման գործը Հայաստանում:

Սահակ Պարթեկի դիմանկարը ներկայացնում է հայ ազգային գրականության հիմնագիրներից մեկի կերպարը: Նա դիտողին երևում է երկար ու սպիտակ մորուքով, խոշոր դեմքով, ճակատը լայն ու բաց: Նրա աշքերը փոս են ընկած, որից քիթը երկար ու մեծ է երեսում, իսկ դիմագծերը նկարված են ամրակազմ ու առնական: Զնայած ծերունական սպիտակած

մազերին, նրա հայկական դեմքը բավական թարմ է ու աշխուզմով լցված:

Անձնավորության մեծությունը այստեղ վերարտադրվել է նաև ծավալուն ֆիզուրի պատկերման մեջ: Սահակը ներկայացված է ուժեղ, հաղթամարմին և լայնաթիկունք: Պատմականորեն նա հենց այդպես էլ եղել է, որի համար ժամանակակիցները նրան կոչել են Պարթև: Բազկաթոռին հաստատուն նստած, նա ձախ ձեռքի արմունկով հենվել է սեղանին և մտախոհ կարդում է գիրքը: Գրքի վրա նրա կենտրոնացած ուշադրության և, ընդհանրապես, Սահակի դեմքի խելացի արտահայտության մեջ նկարիչը վերարտադրել է մարդու ինտելեկտուալ հզոր կարողությունը՝ նրա գիտնականությունը: Յերեկային լուսը, որը ներս է թափանցել ձախ կողմի լուսամուտից, լուսավորել է Սահակի դեմքը, ձեռքերը, գիրքը, դրանով իսկ դիտողի ուշադրությունը կենտրոնացնելով պատկերի հենց այդ մասերի վրա: Կոմպոզիցիայի հավասարակության և պատկերվողի ով լինելը ցուցադրելու համար նկարիչը թեթևակի լուսավորել է նաև դիմանկարի աջ կողմը, ուր երեսում են փետուրի գրիչը, թանաքամանը, կաթողիկոսական գավազանը և խուզը: Նկարված լինելով հայկական դիմագծեր ունեցող բնորդից, նկարիչը ստեղծել է համոզի կերպար, պահպանելով պատմականությունը: Պատկերվողի դեմքի և ամբողջ ֆիզուրի ծավալայնության, շրջապատի իրերի նյութական-առարկայական հատկությունների ճշգրիտ վերարտադրումը մարդու հայացքի կենդանի արտահայտության հետ նպաստել են պատմական կերպարի բացահայտմանը:

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի դիմանկարները ժամանակին այն աստիճան արձագանք գտան հայ հասարակության մեջ, որ հարկ զգացվեց բազմացնել ու տարածել դրանք ժողովրդի լայն խավերում: Այդ պատճառով, 67-ամյա նկարիչը դիմում է վիմագրությանը՝ նա վիմագրական քարի վրա է տեղափոխում նախորդ տարում նկարած Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի յուղաներկ պատկերները: Նը-

Կարչի նպատակն էր բազմացնել անցյալի հայ մշակութի այդ խոշոր գործիչների դիմանկարները և տարածել դրանք գըպ-րոցներում ու ժողովրդի մեջ։ Նա կամենում էր, որ բոլորը տեսնեն ու ճանաչեն հայոց գրի ու գրականության հիմնա-դիրների կերպարները, նոր սերնդին լավագույն օրինակներ տալու և հայրենակիցների «սրտի ու մտաց մեջ» նրանց հի-շատակը միշտ վառ պահելու համար։ Իր ստեղծագործու-թյունները ժողովրդի մեջ տարածելու, գեղարվեստական այդ միջոցներով ժողովրդի լայն խավերում հայրենասիրությունը բորբոքելու և դրանով իսկ աղքային ինքնագիտակցությունն ամրապնդելու նկարչի մշտական ձգտումը վկայում են ար-վեստագիտի ու նրա ստեղծագործությունների խորը ժողո-վըրդականության մասին։

«Աղբյուր» մանկապատանեկան ամսագիրը դեռևս 1883 թվականին՝ նկարչի կենդանության օրոք, հաղորդում է. «Ամեն հայ ուսումնարանի և ամեն մի հայ գրասենյակի ան-հրաժեշտ զարդ՝ նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի գեղեցկա-տիպ ս. Սահակ Պարթևի և ս. Մեսրոպի պատկերներն արդեն վաճառվում են։ Երկու նկարը միասին 10 ռ., Դիմել կարելի է և խմբագրությանը»<sup>19</sup>։ Ոչ մեծ տպաքանակով ստեղծված այդ վիմագրությունները ժամանակին վաճառվում են և տա-րածվում ժողովրդի մեջ։

Դրանցից մեզ է հասել միայն Մեսրոպ Մաշտոցի դիմա-նկարը։ Էջմիածնի մայր տաճարի թանգարանում պահպան-ված Մեսրոպ Մաշտոցի պատկերի վիմագրությունը ներկա-յացնում է հեղինակի գունանկարչական ստեղծագործության փոքրացված և որոշ շափով էլ պարզեցված պատկերը։ Պահ-պանելով յուղաներկ պատկերի հիմնական կառուցվածքը՝ նրա կոմպոզիցիան, մանրակրկիտ ու ճշգրտորեն վերարտա-դրելով Մեսրոպի ոգեշնչված դեմքը, նրա ֆիգուրը և հագուս-տի ծալքերը, նկարիչ-վիմագրողը թեթեակի է ընդգծել բնու-թյան տեսարանը՝ երկինքն ու ծովը, որոնք համարյա շեն երեսում վիմագրության մեջ։ Ինչպես երեսում է, կոմպոզիցիայի այդ մասերը նկարիչը կարեոր չի համարել և դիտողի ուշա-դրությունը հիմնականի վրա բնեուելու համար վիմագրության

մեջ ուժեղ ընդգծել է Մեսրոպ Մաշտոցի դեմքը և ֆիգուրը (նկ. 20):

«Մեսրոպ Մաշտոց» և «Սահակ Պարթև» վիմագրությունները, ինչպես ասացինք, տարածվում են ժողովրդի մեջ: Սակայն տպաբանակի քչության և միջոցների պակասի պատճառով դրանք շատ դպրոցներ և ուսումնական հիմնարկներ չկարողացան ձեռք բերել: Ցավ հայտնելով այդ մասին, «Մշակ» թերթը 1884 թ. մահազգում գրում է, որ Ներսիսյանը «հույսով էր, որ հայ ուսումնարանները գոնե ձեռք կբերեն այդ անհրաժեշտ զարդերը, բայց խեղճի հույսը դարձյալ ի դերև եղավ»:

Այդ նկատառումով «Աղբյուր» մանկապատանեկան ամսագիրը դպրոցականների շրջանում և, ընդհանրապես, պատանեկության մեջ հայոց գրի ու գրականության հիմնադիրների պատկերները տարածելու համար դրանք դարձնում է ամսագրի մրցանակաբաշխությունների և նվիրատվությունների (պրեմիաների) առարկա: Հետաքրքրական է իմանալ, որ դա եղել է նաև նկարչի ցանկությունը: Այդ մասին «Աղբյուրի» խմբագիր և հրատարակիչ Տ. Նազարյանը 1886 թ. գրել է. «Նկարիչ Ստեփանոս Ներսիսյանի ցանկությունն է եղել այդ պատկերները «Աղբյուրի» պրեմիա տալ<sup>20</sup>:

«Աղբյուր» ամսագրի պատանի բաժանորդներին ամենամյա մրցանակներ շնորհելու համար, խմբագրության հանձնարարությամբ, նկարիչ Բարսամյանը 1885 թ. վիմագրական քարի վրա է փոխադրում և բազմացնում Ստ. Ներսիսյանի՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի յուղաներկ դիմանկարները, իսկ խմբագրությունը դրանք ուղարկում է մրցանակ ստացած իր բաժանորդներին:

Ահա այդ ժամանակ էլ՝ 1886 թվականին, մեծ աղմուկ է բարձրանում վիմագրությունների որակի շուրջը: «Արձագանք» շաբաթաթերթը (խմբագիր՝ Ա. Արասիսանյան) մեղադրում է այդ վիմագրությունների վատ որակի համար, իսկ «Աղբյուր», ընդհակառակն, փորձում է արդարացնել այն, վկայակոչելով նկարիչ Գ. Բաշինջաղյանի դրական կարծիքը: «Վիմագրությունից հետո,—գրում է Գ. Բաշինջաղյանը,—ես ինք

գնացի Բարսամյանի մոտ, տեսա և հավանեցի: Ահա իմ խոսքերը, իբրև վիմագրություն շատ հաջող է և շատ դժվար թե այդպիսի օրիգինալից ավելի հաջող նկարեր մեկ ուրիշը: Մի քանի մանր պակասություններ էլ գտա և իմ ներկայությամբ պ. Բարսամյանը ուղղեց<sup>21</sup>:

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի վիմագրությունները տարածելով պատանեկության շրջանում, «Աղբյուրի» խմբագրությունը հայտնում է, որ «Մենք կատարել ենք հանգուցյալ նկարչի կամքը»: Իսկապես, դա եղել է նկարչի ցանկությունը, նրա երազանքը՝ տեսնել իր ստեղծագործությունները յուրաքանչյուր հայի ընտանիքում և ամենուր:

Այդ նկատառումով էլ «Աղբյուրի» խմբագրությունը որոշում է 1887 թ. ևս նույն պատկերներն ուղարկել բաժանորդներին: «Աղբյուրի» գրավիլ միջոցներից մեկն էլ նրա պրեմիաներն են՝ մանկական ընտիր, շքեղ հրատարակված գրքեր, ազգային կյանքից պատկերներ, — գրում է ամսագրի խմբագրերը 1886 թ., — Մենք հույս ունենք, որ 1887 թ. պրեմիան պետք է գերազանցե մինչև հիմա տված պրեմիաները թե՛ գրքով և թե՛ նյութով: Եկող տարվա «Աղբյուրի» պրեմիան կլինի երկու պատկեր՝ և. Սահակի և ս. Մեսրովի, աշխատություն հանգուցյալ տաղանդավոր նկարիլ Ներսիսյանի այն մեծությունով և ձեռվ, ինչպես այժմ վաճառվում են նրանք Թիֆլիսում զույգը 6 ուսուցիչ: Այդ պատկերներն արդեն պատրաստ են»<sup>22</sup>: Այսպիսով, «Աղբյուր» ամսագրի մըրցանակաթաշխության ճանապարհով և աղատ վաճառքի ձեռվ Ստ. Ներսիսյանի «Մեսրոպ Մաշտոց» ու «Սահակ Պարթև» վիմագրությունները ժամանակին տարածվում են ժողովրդի մեջ, նպաստելով հասարակության լայն խավերի հայրենասիրությանը և գեղարվեստական-գեղագիտական դաստիարակությանը: Այդ ստեղծագործությունները, միաժամանակ, կարեռ ներդրում են հայկական ազգային հաստոցային գրաֆիկայի մեջ:

Պետք է ենթագրել, որ պատմական այդ երկու նշանավոր անձանց կերպարներից բացի, Ստ. Ներսիսյանը նկարել

է նաև մեր անցյալի մշակութային ու հոգևոր խոշոր գործիւ, կաթողիկոս Հովսեփ Արդության-Երկայնաբազուկի (1743—1801) դիմանկարը (նկ. 22): Այդ ենթադրության համար հիմք է ծառայում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առնելիք Արխիվային վարչության պետական պատմական արխիվում վերջին տարիներս հայտնաբերված նկարիլ Ստ. Ներսիսյանի մի նամակը<sup>23</sup>: 1880 թ. Հունվարի 29-ին գրված այդ նամակում Ստ. Ներսիսյանը հայտնում է, որ ինքը «Մեղու Հայաստանի» թերթում կարդալով նոր Նախիջևան քաղաքի հիմնադրման 100-ամյակի հոբելյանը կատարելու և այդ քաղաքի հիմնադիրների, մասնավորապես, Հովսեփ Արդության-Երկայնաբազուկի հիշատակը հավերժ պահելու մասին, տեղեկացնում է, որ ինքը ունի «ոսկրի վրա նկարած Յովսեփի կաթողիկոս Երկայնաբազուկն Արդությանցի պատկերն՝ գործ յուրեն ժամանակակից երեւլի նկարչի՝ իւր իսկական կենդանի բնությունից նկարուած, ուրեմն և շատ նման»: Տեղյակ պահելով այդ մասին, նա գրում է. «Եթե դեռ ևս չէ հանձնուած ումեք նկարելու՝ ես յանձն եմ առնելու զայն նկարել, եթե դուք կբարեհաճեք, իհարկե»: Դրա համար նկարիչը խնդրում է հայտնել դիմանկարի մեծության շափը, տեսակը և նկարելու համար հատկացրած գումարի որքանությունը, ավելացնելով, որ «նկարի ճշտությունը և շքեղությունը կմնայ իմ պատասխանատվութեան ներքոյ»<sup>24</sup>:

Դժբախտաբար, չեն պահպանվել նկարչի դիմումին տրված գրավոր պատասխանը և այդ հարցի վերաբերյալ այլ փաստաթղթեր: Սակայն այն փաստը, որ Ստ. Ներսիսյանը 1880 թ. Հունվարին բարձրացրել է Հովսեփ Արդությանի դիմանկարը ստեղծելու հարցը, ինքնին վկայում է նկարչի շերմ հետաքրքրության և այդ խնդրում նրա ցուցաբերած նախաձեռնության մասին: Պետք է նկատել, որ Արդության-Երկայնաբազուկների թեման նորություն չէր նկարչի ստեղծագործական կյանքում: Պեսս 1849 թ., ինչպես արդեն նշել ենք, Ստ. Ներսիսյանը նկարել է այդ մեծատոհմի վերջին ներկայացուցիչներից մեկի՝ գեներալ Մովսես Արդության-Երկայնաբազուկի դիմանկարը: Կյանքի վերջին շրջանում կրկին

անդրադառնալով այդ տոհմին, նկարիչը, այս անգամ առիթի բերումով, բարձրացնում է Հովսեփ Արղությանի դիմանկարը ստեղծելու հարցը, հավանաբար, նկատի ունենալով նաև նրա մեծ ծառայությունները և արժանապատվությունը: Իսկապես, Հովսեփ Արղության-Երկայնաբազովը եղել է XVIII դարի հայ ազատագրական շարժման ոգեջնջող ու կազմակերպիչ, ոռւսահայ թեմի և դրիմահայերի հոգևոր առաջնորդ: Նա ձգտել է Ռուսաստանի օգնությամբ հայկական ինքնուրույն պետականություն ստեղծել, այդ նպատակով կազմել է հայ-ռուսական դաշնադրության նախագիծ: Նրա եռանդուն միջամտությամբ ռուսական կայսրությունը 1789 թ. հրապարակել է հրովարտակ՝ հայերի պաշտպանության մասին: Նշանակալից է եղել Հովսեփ Արղությանի գործունեությունը մշակութային բնագավառում ևս: Նրա նախաձեռնությամբ XVIII դարում Պետերբուրգում, այնուհետև Նոր Նախիջևանում և Աստրախանում հիմնադրվում են տապարաններ, ուր տպագրվում են հայերեն առաջին գրքերը Ռուսաստանում: 1800 թ. հայոց կաթողիկոս ընտրվելուց շատ շանցած՝ էջմիածին մեկնելու ճանապարհին, Թիֆլիսում, 58 տարեկան հասակում, նա կնքում է իր մահկանացուն<sup>25</sup>: Ահա այսպիսի խոշոր գործը և հարազատ հայ ժողովրդին մատուցած ծառայությունների բարձր արժեքավորումն է եղել այն հիմքը, որը մնել է հայրենասեր նկարչին բարձրացնելու Հովսեփ Արղությանի դիմանկարը ստեղծելու խնդիրը և ինքն էլ, ամենայն հավանականությամբ, նկարել է նրա դիմանկարը: Հայաստանի պետական պատկերասրահի ֆոնդում պահվող Հովսեփ Արղության-Երկայնաբազովի մի քանի դիմանկարներից մեկը, կարծում ենք, պետք է որ նկարած լինի Ստ. Ներսիսյանը: Մենք նկատի ունենք ձվածե (էլիպսաձե) շրջանակով պատկերը, որը ստորագրություն կամ տարիթիվ չունի: Սակայն դա մի նոր հարց է, որը կարիք ունի լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրության և առանձին հրապարակման: Այստեղ ցանկանում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել միայն այն բանի վրա, որ անցյալի պատմական գործիշների երևակայությամբ

ստեղծված դիմանկարները ոչ բոլոր գեպքերում են լրիվ դրսերում նկարչի ոճական առանձնահատկությունները ու գեղարվեստական հնարավորությունները։ Ոչ անմիջական բնորդից, այլ օտար նկարչի «բնագրից», այն էլ ոսկրի վրա ստեղծված մանրանկարից դիմանկար ստեղծելիս, նոր ժամանակի նկարիչը, բնականաբար, կաշկանդված է մնում ոչ միայն անցյալի արվեստագետի ոճին ու նկարման նրա եղանակին, այլև պատկերվող անձի ներաշխարհի՝ նրա կենսալից կյանքի, խորապես ճշմարտացի պատկերման խնդրում։ Նա ավելի ճշգրտությամբ կարող է վերարտադրել «բնագրի» ժամանակի հագուստը, շրջապատի առարկաները և, ինչպես արդեն նկատված է ուստական արվեստագիտության մեջ, այդ կարգի ստեղծագործություններում արվեստագետների վարպետությունն արտահայտվում է, ամենից ավելի, տպավորի կոմպոզիցիաներ ստեղծելու մեջ։ Այդ երևույթը մենք նկատում ենք և այս դիմանկարում։

Հայաստանի պետական պատկերասրահի ֆոնդում պահպում են Ստ. Ներսիսյանին վերագրվող անհայտ տղամարդկանց երկու դիմանկար ևս (նկ. 23, 24)։ Դրանք նույնպես տարեթիվ կամ նկարչի ստորագրություն չունեն։ Նրանցից մեկը աջ ձեռքը դրել է բազկաթոռի հենակին և ուշադիր նայում է դիտողին, մյուսը մի ձեռքով նախշազարդ գոտու հանգույցը բռնած ժպտագեմ նայում է գեպի ձախ։ Իրար մոտ դրած, նրանք կարծես խոսում են միմյանց հետ։ Դատելով հագուստաձեից՝ նրանք թիֆլիսահայ առևտրական դասի մարդիկ են։ Ուշագրավ է և այն, որ երկուսն էլ վզներից կախված ունեն միենույն ոսկե մեղալը ուսւ թագավոր-կայսեր դիմաքանդակով։ Այդպիսի մեղալներ («Յա յըրծու», «փութեռանդության համար»), ինչպես հայտնեց մեզ մեղալագետ Հ. Սարգսյանը, տվել են Ալեքսանդր Երկրորդի թագավորության շրջանում (1855—1881) այն անձանց, որոնք իրենց մասնավոր նախաձեռնությամբ ձեռնարկած գործում կամ պետական ծառայության մեջ աշքի են ընկել մեծ եռանդով, շանասիրությամբ, օգտակար փութեռանդությամբ։ Նկարիվ այդ մեղալները նկարել է ընդհանուր գծերով, սակայն որոշակի ընդգծել է

դրանց առարկայական հատկությունը և ոսկեգույնը, որը ցայտում երկում է հագուստի մոխրագույն հենքի վրա:

Արդ, ո՞վքեր են նրանք: Այժմ դժվար է որոշակի ասել նրանց անունները, սակայն եթե նկատի ունենանք, որ Ներսիսյանը հակում ուներ նկարելու հանրօգուտ գործի մարդկանց, մասնավորապես մշակութային բնագավառում աշրի ընկած գործիչներին, ապա կարելի է ենթադրել, որ ոսկե մեղալներ կրող այս անձինք ևս եղել են հենց այդ ասպարեզում իրենց փութեռանդությամբ հանրահայտ աշխատավորներ: Նկարչի մասին անցյալում հրապարակված հաղորդագրություններում նշվել է, որ Ներսիսյանը նկարել է հրատարակիչ Հ. Էնֆիաճյանին: Շատ հավանական է, որ մեզ հասած այդ երկու դիմանկարներից մեկը՝ աջ ձեռքը բաղկաթողի հենակին դրած մեղալակիր մարդու պատկերը, ներկայացնում է հենց նրան (նկ. 26): Համբարձում էնֆիաճյանը (1824—1896) իր ավագ եղբոր՝ Ավետիքի հետ 1850-ական թվականների կեսերին թիֆլիսում հիմնադրում է առաջին գրավաճառանոցը, ապա տպարան է բացում և գրքեր տպագրում: Այնուհետև նա զբաղվում է գերազանցապես գրահրատարակչական գործով և այդ բնագավառում լայն ճանաչում է գտնում, վայելելով հասարակության համակրանքը: Ստ. Ներսիսյանը կարող էր այդ հանրօգուտ գործին նկարել միայն 1865 թ. հետո, եթե Շուշի քաղաքից վերադարձավ թիֆլիս՝ 1860—70-ական թվականներին, եթե էնֆիաճյանը ծավալել էր իր գրահրատարակչական լայն գործունեությունը:

Ստ. Ներսիսյանը սիրով ու մանրակրկիտ է պատկերել նրան: Առանձնապես ուժեղ է նկարել դեմքը: Ինչպես նախորդ մյուս դիմանկարներում, նույնպես և այսուղեղ լուսը կենտրոնացնելով դեմքի մի մասի վրա, նկարիչը ճշգրտորեն վերարտադրել է մարդու դիմագծերի մանրամասները՝ նիհար, մկանուտ դեմքը, լայն ու լուսավոր ճակատը, նրան բնորոշ փոքրիկ, ներս ընկած, բայց աշխույժով լցված աշքերը, սրածայրքիթը և հաստ, արևելյան տիպի բեղերը: Նրա դեմքի ու աշքերի սուր արտահայտության մեջ որոշակի զգացվում է ուժեղ, իր գործին վստահ և գործունյա, կամային անձնավորությունը:

Մի փոքր ժապտագեմ և կենսուրախ բնավորությամբ մարդու կերպար է ներկայացնում երկրորդ դիմանկարը։ Այս երկու ստեղծագործությունները ևս, միաժամանակ, մարմնավորում են նկարչի պատկերացումը ժամանակի օգտակար և հասարակությանը պիտանի գործիչների մասին։

Սակայն այդ պատկերներով, իհարկե, չի սահմանափակվում Ստ. Ներսիսյանի դիմանկարչական ստեղծագործությունների շարքը։ Հայ անվանի պատկերացանը XIX դարի կեսերին նկարել է բազմաթիվ անձանց դիմանկարներ ևս, որոնց մի զգալի մասը մեզ չի հասել կամ ստորագրություն չունենալու պատճառով մնացել է տարբեր թանգարանների ֆոնդերում՝ «Անհայտ նկարիչ» անվան տակ։ Այդպիսի դիմանկարներից է «Տեր Մկրտչի» պատկերը, որից մեզ է հասել միայն նրա մասին ժամանակին ստեղծված մի զավեշտական պատճություն։

Ոմն Տեր-Մկրտիչ կամ Տեր-Մկրտչան նկարչին պատվիրում է իր դիմանկարը։ Ստ. Ներսիսյանը, թեև պատվերով դիմանկարներ չէր նկարում, կատարում է նրա խնդիրը։ Դիմանկարը ավարտելուց հետո պատվիրատուն չի վճարում պայմանավորված վարձը, պատճառաբանելով, թե իրը այդ դիմանկարը իրեն նման չէ։ Այդ մասին նկարիչ Գ. Բաշինջաղյանը Գր. Շարբարչյանին գրած նամակում պատմում է. «Լսել եմ նույնպես, որ նրան ինչ որ Տեր-Մկրտ. պատվիրել էր իր պատկերը, սակայն մերժել էր խոստացած վարձը վճարել, իբրև թե նման չինելու պատճառով։ Ներսիսյանը այդ պատկերը շալակել էր [տպել] մի մշակի այսպիսի մակագրությամբ՝ «Հախոր շվճարողի պատկերը»։ Մշակը ման էր եկել փողոցե փողոց ու ամբոխն էլ հետեւից գոռում-գոռումով։ «Տեր-Մկրտ., Տեր-Մկրտ.»։ Պատվեր տվողը ստիպված է եղել վերցնել իր կենդանագիրը ու վարձը լիովին վճարել»<sup>26</sup>։

Որքան էլ ծիծաղաշարժ է թվում այս պատմությունը, այնուամենայնիվ, հաստատում է երկու կարեռ փաստ։ Նախայն, որ Ստ. Ներսիսյանը իրոք նկարել է այդպիսի մի դիմանկար՝ Տեր-Մկրտչի կամ Տեր-Մկրտչանի դիմանկարը։ Այնուհետև այդ դիմանկարը, ինչպես և նկարչի մյուս բոլոր դիմա-

նկարները, բնորդին կատարյալ նման է եղել և դա ոչ միայն արտաքուստ, այլև ներքուստ՝ բնավորությամբ, խառնվածքով, հոգեբանորեն համոզիլ և այնքան նման, որ ժամանակակիցներն անմիջապես ճանաչել են պատկերվածին։ Այդ մասին վկայում են նաև ժամանակակիցները։ Նկարիչ Ստ. Ներսիսյանի մասին «Արձագանք» շաբաթաթերթում 1894 թ. հրապարակված մի հոդվածում այդ դիմանկարը բնութագըրվել է որպես «Հաջող նկար»։ Պարզվում է, որ Տեր-Մկրտ [իւր] Թիֆլիսում կոչվել է նաև Օզի Գելդի մականունով և հայանի է եղել իու տարօրինակ վարք ու բարքով, որը երրեմն տեղիք է տվել կատակների և, նույնիսկ, ծաղր ու ծանակի։ Շաբաթաթերթի թղթակիցը տեղյակ պահելով այդ մասին, միաժամանակ գրում է, որ այդ հանրահայտ Օզի Գելդու (նախքը՝ Տեր-Մկրտ.) կերպարը «Մի հետաքրքրական նյութ էր նկարչի համար, որից օգուտ քաղեց հանգուցյալ Ներսիսյան նկարիչը, բայց որի հաջող նկարի ուր լինելը մեզ հայտնի չէ»<sup>27</sup>։

Այդպես, շատ պատկերներ անհետացել են և մեզ չեն հասել Սակայն այն, ինչ մեզ է հասել կամ գիտենք գրավոր աղբյուրներից, վկայում են, որ Ստ. Ներսիսյանը իրոք եղել է իր ժամանակի խոշոր, դիմոկրատ դիմանկարիչ, իսկ նրա բարձրարվեստ ստեղծագործությունները նշանակալից ներդրում են XIX դարի հայ ազգային դիմանկարչության մեջ։ Դիմանկարչությունը եղել է հիմնական, առաջատար ժանրը Ստ. Ներսիսյանի գեղարվեստական ժառանգության մեջ։ Իր լավագույն դիմանկարներում նկարիչը ստեղծել է դրական հերոսների կերպարներ, որոնք պետք է հավերժ հիշվեն «աշճմոյս և ապագա սերնդոց սրտի ու մտաց մեջ»։

#### ԳԼՈՒԽ ԵՐԵՌՈՐԴ

**ԱՏ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԹԵՐԱՏԻԿ-ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ  
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ստեփանոս Ներսիսյանը նկարել է նաև ժամանակակիցների կենցաղային և պատերազմական թեմաներով բազմա-

ֆիգուր սյուժենտային պատկերներ և բնանկարներ: Դրանցից  
մեզ է հասել միայն «Խնջույք գետափին» մեծակտավ պատ-  
կերը, որը դառնվում է Հայաստանի պետական պատկերասրա-  
հում:

«Խնջույք գետափին» պատկերը նշանակալից ստեղծա-  
գործություն է: Դա ազգային թեմայով կենցաղային նկարչու-  
թյան առաջին պատկերներից մեկն է XIX դարի հայ նոր կեր-  
պարզեստի պատմության մեջ: «Խնջույք գետափին» պատկե-  
րում է ուրախ ժամանցի տեսարան: Քաղաքամերձ կանաչա-  
վետ բնության գրկում մի խումբ տղամարդիկ և կանայք քեֆ  
են անում: Գետափին՝ խոտելի վրա, սփռոց բացած, տղամար-  
դիկ գինի են խմում, իսկ կանայք ուրախ նվազում, պարում  
են: Այս պատկերը (նկ. 25) ստորագրություն և տարեթիվ չու-  
նի: Կարելի է միայն ենթադրել, որ դա ստեղծվել է 1860-ական  
թվականներին, ամենայն հավանականությամբ՝ 1865 թ. հե-  
տո, այսինքն այն ժամանակ, երբ նկարիչը Շուշի քաղաքից  
տեղափոխվել էր Թիֆլիս և այստեղ մշտական բնակություն  
հաստատել:

Այդ բազմագիգուր սյուժենտային պատկերի մեջ նկարի-  
չը մարդկանց գործողությունները ներկայացրել է շորս առան-  
ձին խմբերով, որոնք, սակայն, տրամաբանորեն կապ-  
ված են իրար հետ և լրացնում են միմյանց: Այսպես, պատ-  
կերի աջ կողմում մի խումբ կանայք և աղջիկներ կանգնած  
ծափ են տալիս, նրանցից մեկը նվազում է՝ դափ է խփում,  
մյուսը ձեռքը վեր պարզած նազանքով և հեղաճկուն պարում  
է: Պարզ երևում է, որ պարում է հայկական ազգային մի պար:

Նրանք տարբեր տարիքի, բարձրահասակ, բարակիրան  
գեղուհիներ են, հազար երկար՝ մինչև գետին իջնող, սպիտակ  
և կապտագույն մետաքսե փայլուն զգեստներ, գլխներին  
գցած թափանցիկ շղարշներ: Կանանց ֆիգուրները հստակո-  
րեն երևում են գետափինյա տեսարանի բաց-կանաչավուն հեն-  
քի վրա (նկ. 26):

Պատկերի կենտրոնական մասում տղամարդիկ՝ բոլորն  
էլ զինովցած, իրար գինի են հյուրասիրում: Նրանց մեջ է և մի  
բարձրաստիճան, կարմիր երիզով գլխարկ կրող հաստամար-

մին մի պաշտոնյա, նույնպես հարբած և գլխարկը ծուռ դրած։  
Նրա գեմքը չի երևում՝ ծածկվել է գլխարկի տակ։ Չնայած նրա  
հարբած վիճակին, մի տղամարդ՝ այդ հավաքույթի ավագը,  
գինով լիքը բաժակը մեկնել է դեպի նա, շողոքորթաբար սի-  
րաշահելու և հավանորեն հարբեցնելու համար։ Այդ է վկա-  
յում նաև հարբած շինովնիկի կողքին նստած երիտասարդի  
զարմացական, մի փոքր էլ խորամանկ ժպիտով հայացքը։ Մի  
ուրիշը տկնորը ծնկներին դրած սափորի մեջ գինի է լցնում,  
իսկ մեկ ուրիշը, որի ֆիգուրը ամփոփում է այս խմբանկարի  
եռանկյունաձև կոմպոզիցիայի վերևի մասը, գինով լիքը բա-  
ժակը ձեռքին կանգնած, թեքվել է դեպի պարող կանանց կող-  
մը՝ նրանց կենացը խմելու համար (նկ. 27)։

Այս ուրախ խնջույքի տեսարանում նկարիչը պատկերել է  
նաև մի քանի այլ անցքեր, որոնք շատ բնորոշ են ազգային  
կենցաղի համար։ Այդպիսին է, օրինակ, երեխային կրծքով  
կերակրող կնոջ պատկերը, որը առանձին վերցրած, մի փոքրիկ  
կենցաղային տեսարան է այս բաղմաֆիգուր սյուժետային  
ստեղծագործության մեջ։ Նա պատկերված է առաջին պլանում՝  
կոմպոզիցիայի աջ կողմում, խոտերի վրա փուլած գորգին  
նստած, երեխան գրկին։ Տոնական հագուստով, կուրծքը բա-  
վական բաց, նա իր գեղեցիկ դիմագծերով գլուխը խոնարհել  
է ցած՝ դեպի երեխան։ Մայրը թափանցիկ գլխաշղորով թեթե  
ծածկել է իր փարթամ կրծքի բաց մասերը, որը, սակայն,  
բնավ չի արտահայտում կնոջ արևելյան ավանդական ամոթ-  
խածությունը։ Այստեղ որոշակի դրսեորվել են քաղաքային  
կյանքի նոր բարքերը, մարդկանց նոր հարաբերությունը և,  
որ կարեոր է, հայ կնոջ ազատ վարվելածեր տղամարդկանց  
միջավայրում։

Մի առանձին խումբ են կազմում երեխայով մոր շուրջը  
պատկերված երկու կանանց և մի ծերունու ֆիգուրները, Եռան-  
կյունաձև այս կոմպոզիցիայում կենտրոնական մասը զբա-  
ղեցնում է տարիքավոր մի կին՝ տանտիկինը, որը սրբիշը ձեռ-  
քին ինչ-որ բան է մաքրում։ Նրա մոտ խոնարհ կանգնել է  
երիտասարդ սպասուհին, իսկ քիչ հեռվում, ծառին հենված,

ծերունի ծառան լուր և անտարբեր դիտում է զվարճացողներին:

Այստեղ նկարիչը սուր դիտողականությամբ պատկերել է այն ամենը, ինչ տեսել է իր աշքի առաջ: Ներկայացնելով մտերմիկ միջավայրը Ստ. Ներսիսյանը, սակայն, որոշ սահմանագատում է դրել պատկերված անձանց միջև: Դա երևում է նաև ծառաների պատկերներում: Նրանցից մեկը՝ նշված ծերունին, պատկերված կոմպոզիցիայի աջ կողմում, երկու ձեռքերն իրար վրա դրած և հնամենի կոտրված ծառի հաստ բնին հենված, լուր ու մունջ դիտում է: Երկրորդը՝ ջահել սպասուհին, խոնարհ կանգնած տիրուհու մոտ, սպասում է կարգադրության:

Է՛լ ավելի խոսուն են երկու ձկնորսների պատկերները: Այդ ընդհանուր ուրախությունից հեռու նրանք ծանր աշխատանք են կատարում՝ ձուկ են որսում գետից, օրվա ապրուստի համար: Հավանաբար այդ է արտահայտում նրանցից մեկի սուր հայացքը և դեպի զվարճացողներն ուղղած նրա դիրքը: Նկարի ձախ կողմի ներքեի անկյունում, գետի ափին պատկերված երկֆիգուր այդ կոմպոզիցիան սյուժետային է իր առանձին, ինքնուրուցն բովանդակությամբ և միաժամանակ տրամաբանորեն կապվում է խնջույքի թեմայի հետ, սրելով նրա գաղափարական ուղղվածությունը: Այսպիսով, «Խնջույք գետափին» թեմատիկ ստեղծագործության մեջ գործող բոլոր մարդիկ պատկերված են ուսալ կենցաղային վիճակում, նրանք իրենց գործողությամբ կապված են իրար հետ և ներկայանում են միմյանց նկատմամբ ունեցած այնպիսի հարաբերությամբ, որոնք ծագում են ժամանակի սոցիալական պայմաններից: Կենցաղի լավ իմացությունը և պատկերված անձանց կերպարների բնորոշ լինելը նպաստել են մտահղացման լրիվ բացահայտմանը:

Ստեղծելով բավական բարդ սյուժետային կոմպոզիցիա, Ստ. Ներսիսյանը աննշան թվացող առօրյա կյանքի տեսարանում դրել է նաև որոշ երգիծանք: Դա առանձնապես արտահայտվել է հարբած շինովնիկին շողոքորթությամբ գինի հյուրասիրելու էպիզոդում, որը նույնպես առանձին վերցրած ինք-

Նուրուցն սյուժեալային պատկեր է: Այստեղ չինովնիկին շողոքորթելը քողարկվում է թեթև ժամանցի և երգու պարի ուրախ տեսարանով: Այդ ամենից հեռու են կանգնած ծառաները: Հարբած չինովնիկին գինի հյուրասիրողների շողորթությունը «հնջուցք գետափին» պատկերին տալիս է գաղափարական նպատակասլացություն, որը քննադատական ուսալիզմի արտահայտություն էր այս շրջանի հայկական կենցաղային նկարչության մեջ: Դա կապված է նույն շրջանի գեղարվեստական մշակույթի հետ, մասնավորապես, գեղարվեստական գրականության, նորաստեղծ հայկական պրոֆեսիոնալ թատրոնի և թատերագրության մեջ հետզհետեւ ուժիղացող ուսալիզմի զարգացման, նրա խորացման և քաղաքական սրության ուժեղացման հետ: Ստ. Ներսիսյանի «հնջուցք գետափին» պատկերի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նկարիչը ուրախ ժամանցի՝ քաղաքամերձ վայրում տեղի ունեցող խնջույքի թեման գրել է ազգային հողի վրա, ունի հայկական հիմք և ազգային տիպարներ:

Այս պատկերի մեջ միաժամանակ մեծ տեղ է հատկացվել բնությանը և նատյուրմորտին (նկ. 28): Տոպոգրաֆիկ ճշգրտությամբ և մանրամասնորեն պատկերված են ժամանակի հայ մշակույթի խոշոր կենտրոն Թիֆլիսի քաղաքամերձ բնության հոյակալ համայնապատկերը, կապուտակ երկինքը, արեամուտի վերջին ճառագայթներով ողողված քաղաքի շրջակա լեռները, Քուռ գետը քաղաքային տների և եկեղեցիների սիլուետներով, ծայրամասերի հյուղակները և, վերջապես, գետափնյա կանաչավետ տարածությունները: Առանձնապես ուժեղ է նկարված պատկերի աջ կողմում երեսացող կոտրված և շոր ճյուղերով հաստարուն ծառի և շրջակա բուսականությունը: Բնանկարի այդ հատվածը, «թեև նկարված է այդ ժամանակվա դասական վարպետների հնաբույրը ոճով,—գրում է հայկական բնանկարչությունն ուսումնասիրած նկարիչ-արվեստաբան Ռ. Շիշմանյանը,—բայց զերծ է պայմանական ձևերից և զարդարվեստական մակերեսային նկարագրից: Նրա բնական զգացումով ձևավորված լինելը ենթադրել է առաջի մեջ, որ Ներսիսյանը կարող էր և գուցե կարողացել է բնա-

նկարչական գնահատելի ուրիշ երկեր ևս ստեղծել, որոնք, դժբախտաբար, մեզ չեն հասել»<sup>2</sup>:

Բնանկարի աջ կողմի վերկի մասում նկարված լուսավորության որոշ պայմանականությունը, որը, հավանաբար, վերանորոգման հետևանք է, ինչպես և գունային գամմայում իշխող շագանակագույնը բնավ չեն իշեցնում սյուժետային այս մեծակտավ պատկերի գեղարվեստական արժանիքը: Սյուժետային պատկերի մեջ բնանկարչական այս լայնածավալ մոտիվը շի հեռացնում դիտողի ուշադրությունը հիմնական թեմայից: Բնանկարը բավական նպաստում է գործողության տեղի և միջավայրի բնութագրությանը, իր գունագեղությամբ ավելի համոզիչ դարձնելով ամբողջ օրը՝ մինչև իրիկնամուտ, բնության գրկում զվարճացող մարդկանց կենսուրախ տրամադրությունը:

Հյութեղ գունանկարչությամբ հագեցված կոլորիտային պատկերը բավական շահում է նաև այստեղ նկարված ծաղկեփնջի և կենցաղային առարկաների ուսալիստական կերպավորման շնորհիվ: Կոմպոզիցիայի կենտրոնական մասի առաջին պլանում դրված մեծ ծաղկեփնջը և աջ անկյունում երեվացող ինքնաեռը, թեյնիկը, ափսեները նկարված են այնպիսի ճշգրտությամբ, որ անմիջապես աշքի են ընկնում: Դրանք առանձին վերցրած ինքնուրույն ժանրի՝ նատյուրմորտի, նշանակություն են ստանում և միաժամանակ կապվում են պատկերի հիմնական բովանդակության կենսուրախ տրամադրության հետ: XIX դարի հայ նոր հաստոցային նկարչության մեջ սա ամենավաղ նատյուրմորտներից մեկն է, թերես երկրորդը ։ Հովնաթանյանի նկարած տիկին նադիրյանի դիմանկարից հետո՝ կոմպոզիցիոն մի դիմանկար, որտեղ պատկերված են ծաղիկներ պատուհանում: «Խնջույք գետափին» պատկերի մեջ նատյուրմորտը՝ ծաղկեփնջը և ինքնաեռը, թեյնիկով ու ափսեներով, լրացնում և հարստացնում են կենցաղային տեսարանը, ուժեղացնելով դրա աղքային բնույթը:

Պետք է նկատել, որ կենցաղային նկարչությունը նորություն չէր հայ կերպարվեստում: Ստ. Ներսիսյանի ժամանակ և նրանից ել շատ առաջ՝ XVII—XVIII դարերում, հայ նկա-

րիշները ստեղծել են կենցաղային թեմաներով սյուժետային նկարներ։ Դրանք հիմք են տալիս ասելու, որ կենցաղային ժամրի պատկերներ հայ կերպարվեստի մեջ ստեղծվել են շատ ավելի վաղ, քան Ստ. Ներսիսյանի «Խնջուլք գետափին» պատկերը։ Մենք նկատի ունենք, ամենից առաջ, կլովի հայկական գաղթօջախում ապրած և գործած, ծագումով հայ նկարիչ Սիմոն (Շիմոն) Բոգուշի նկարած «Մարինա Մնիշեկի նշանադրությունը 1605 թ. Կրակովում» կենցաղային բովանդակությամբ պատկերը (1605), ուույն նկարչի «Մարինա Մնիշեկի թագաղորությունը» բազմաֆիգուր կոմպոզիցիան և ուրիշներ։

XIX դարի սկզբներին, երբ Հայաստանը գեռևս գտնվում էր Հետամնաց Թուրքիայի և ֆեոդալական Պարսկաստանի դաժան բռնակալական գերիշխանության տակ, հայ արվեստագետները հեռացել էին Հայրենիքից և ստեղծագործում էին օտար երկինքների տակ, երևանում մնացած նկարիչները «չգտնելով մեկենասներ իրենց համեստ տաղանդի համար», միայն «խիզախության պահերին նրանք ամենամատչելի գներով նկարում էին... որսի տեսարաններ»<sup>3</sup>։ Թե ովքե՞ր են եղել այդ նկարիչները և ինչպիսի՝ որսի տեսարաններ են նկարել նրանք, հայտնի չէ։ Սակայն այն փաստը, որ Երևանում եղած նկարիչները նկարել են որսի տեսարաններ, ասում է այն մասին, որ XIX դարի առաջին քառորդում, համենայն գեպս, 1820—1830-ական թվականներին, Երևանում եղել են նկարիչներ, որոնք նկարել են թեմատիկ պատկերներ։ Սակայն նրանց ստեղծագործությունները, ինչպես վկայում է Արևելյան Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքն ուսումնասիրած ի. Շոպենը, լինելով հրապուրիչ «իրենց կողրիտի թարմությամբ և հստակությամբ», այնուամենայնիվ զուրկ են եղել հեռանկարչական և լուսաստվերային ինդիրների լուծումներից, Շոպենի խոսքերով ասած, «...միանգամայն անծանոթ են հեռանկարների կանոններին և նրանց նկարներն առանց ստվերների են»<sup>4</sup>։

Դրավոր աղբյուրներից հայտնի է նաև, որ XIX դարի կեսերին թիֆլիսահայերի շոջանում ստեղծվել են կենցաղային

թեմաներով սյուժետային բազմաֆիգուր այլ պատկերներ ևս, որոնցից մեկի՝ ուրախ ժամանցի տեսարան պատկերող նկարի մասին արվեստագետ Դ. Լոռնյանը դեռևս 1911 թ. գրել է հետևյալը. «Անմոռանալի հնագետ-կովկասագետ Ալ. Երիցյանը մի անգամ մեզ մի նկար ցուց տվեց, որը ներկայացնում էր այդ կյանքից մի հետաքրքրական պատկեր: Վրաց պալատի արևելյան ճաշակով զարդարված մի սենյակում բարձերի վրա ծալապատիկ նստած հայ աշուղներ՝ Նաղաշ Հովնաթանը և մի խումբ (որ միասին կոչվելիս են եղել նաղաշներ) նվազում էին ամբարա, քամանշա և դահրա, պատկերի մոտ, փափուկ բարձերի վրա նստութել էին կամ թիկն տվել պալատական գեղուհիներ՝ լսելու վարպետների երգն ու նվագը<sup>5</sup>: Այդ պատկերը Դ. Լոռնյանը ցանկացել է արտանկարել, սակայն Ալ. Երիցյանը թույլ չի տվել և այժմ հայտնի չէ, թե որտեղ է գտնվում<sup>6</sup>:

Նույն ժամանակաշրջանում և, հատկապես, XIX դարի կեսերին հայ իրականության մեջ՝ տարբեր քաղաքներում, ապրած և գործած հայ նկարիչներից մի քանիսը նույնպես նկարել են կենցաղային թեմաներով պատկերներ: Հատկանշական են Հովհաննես Այվազովսկու թեմատիկ-սյուժետային պատկերները, որոնք կրում են կենցաղային նկարչության որոշակի կնիք: Գրանցից մեզ են հասել «Շշխարների հոտը» (1858), «Ոշխարները» (1861), «Վարը» (1865), «Գումակը պանդոկի առաջ ձմռանը» (1868), «Ընդհարում Գունիբի լեռներում» (1868) և ուրիշներ: Նկարիչը մարդկանց բազմազան գործողություններ և կենցաղային տեսարաններ է պատկերել նաև ծովանկարներում, ինչպես, օրինակ, «Լուսնակական գիշեր» Ամալֆիում բանդիտների խմբով, որոնց մեջ նկարիչը Սալվադոր Ռուգան նկարում է շրջապատի բնություննը» (1845), «Պետրոս Առաջինը խարուցկ է վառում ոռւսական նավերին ազդանշան տալու համար» (1846), «Սրճարան Ղրիմում» (1847), «Երեկո Ղրիմում» (1848) և ուրիշներ:

Հովհաննես Այվազովսկու թեմատիկ ստեղծագործությունների շարքում, սակայն, ամենից ավելի հստակ արտահայտված կենցաղային ժանրի պատկերներ են «Վանականները իրիկ-

նամուտին Վենետիկում» (1843) և «Թիֆլիսի տեսարանը» (1868—1869), որոնք ունեն հայկական բովանդակություն: Վերջինս պատկերում է մի խումբ հայերի՝ տղամարդկանց և կանանց ժամանցը մերձքաղաքային բնության մեջ: Միծ ծովանկարիչը այդ պատկերը նկարել էր Թիֆլիսում, ուր ապրում էր Թամամշյանների առանձնատանը: Այդ ստեղծագործությունը կովկասյան բնության բազմաթիվ պատկերների, այդ թվում «Արարատ» և «Սևանա լիճը» բնանկարների հետ, թվով 12 պատկեր, նա ցուցադրում է 1868 թ. Թիֆլիսում բացած իր ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսում:

«Թիֆլիսի տեսարանի» թեման համարյա նույնն է, ինչ Ստ. Ներսիսյանի «Խնջույք գետափին» պատկերինը: Երկուսն էլ պատկերում են մերձքաղաքային կանաչավետ բնության գրկում կերպուտմի տեսարան քաղաքի համայնապատկերի հենքի վրա: Երկու պատկերներն էլ ստեղծվել են 1860-ական թվականների երկրորդ կեսում: Այժմ դժվար է ասել, թե ով է ումից առաջ նկարել, քանի որ մեզ հալունի չէ Ստ. Ներսիսյանի «Խնջույք գետափին» պատկերի ճիշտ թվականը: Սակայն այդ հարցն էլ, կարծես, ավելորդ է թվում, եթե նկատի ունենանք, որ միենույն թեմատիկայով այդ երկու պատկերներն էլ նույն ժամանակի և միենույն միջավայրի արդյունք են: Այն փաստը, որ դիմանկարիչ Ստ. Ներսիսյանը և ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին միենույն ժամանակ (1865—1869) նկարել են հայաբնակ քաղաքի մերձակայքում խնջույքի՝ ուրախ ժամանցի, կենցաղային բովանդակությամբ մեծակտավ երկու առանձին պատկերներ, ասում է ոչ միայն այն մասին, որ մերձքաղաքային բնության գրկում այդպիսի ուրախ խնջույքներ կազմակերպելը թիֆլիսահայերի կենցաղի համար սովորական են եղել, այլև այն, որ երկու նկարիչներն էլ իրենց ստեղծագործության համար ընտրել են հենց այնպիսի թեմա, որը շատ բնորոշ ու հատկանշական էր նույն շրջանի հայկական կենցաղին: Այդ պատճենով XIX դարի հայկական կենցաղային նկարչության մասին խոսելիս այսուհետև պետք է նշել ոչ

միայն Ստ. Ներսիսյանի «Խնջույք գետափին» պատկերը, աղև Հովհաննեսը կու «Թիֆլիսի տեսարանը» և այն ամենը, որոնք մենք նշեցինք նախորդ շրջանի նկարչության պատմության մեջ:

Հայ նոր կերպարվեստում կենցաղային նկարչության կազմավորման գործում շի կարելի անտեսել հայ իրականության մեջ ապրած և գործած մի քանի ոռու նկարիչների ևս, որոնք նկարել են հայկական թեմաներով պատկերներ: Հայտնի Վ. Ի. Մոշկովի «40.000 հայերի ներգաղթը Պարսկաստանից Հայաստան 1828 թ.» ջրանկար պատկերը և վիմագրությունը, ոռուսական բանակի կողմից և հայկական կամավորական ջոկատների մասնակցությամբ Երևանի, Կարսի, Էրզրումի և հայկական մյուս քաղաքների գրավման թեմաներով նույն նկարչի գրաֆիկական նկարչագարը, Գ. Գ. Գագարինի «Թիֆլիսի շրջակայքի պարտեզում», «Արծվի որսը Երևանի շրջակայքում», «Շուկայի հրապարակը Երևանում» պատկերները և ուրիշներ:

Այդ թեմատիկ ստեղծագործությունները, կարծում ենք, չեն կարող չհետաքրքրել հայ հասարակությանը, հատկապես նկարիչներին, և դա ոչ միայն այն պատճառով, որ այդ պատկերները շոշափում էին հարազատ հայ ժողովրդի կյանքը, կենցաղը, բնության տեսարանները և ժողովրդի աղատագրական ձգտումները, այլև այն պատճառով, որ նույն շրջանում՝ 1840—1860-ական թվականներին, ոռուսական նկարչության մեջ լայնորեն զարգանում էր կենցաղային նկարչությունը, որի բարերար ազդեցությունը դուրս էր զալիս Ռուսաստանի սահմաններից:

Այսպիսով, Ստ. Ներսիսյանի «Խնջույք գետափին» պատկերը միակ կենցաղային ստեղծագործությունը չէ, ինչպես կարծում են ոմանք, աղքատացնելով XIX դարի կեսերի հայ կերպարվեստի պատմությունը:

Բացի «Խնջույք գետափին» պատկերից, Ստ. Ներսիսյանը նկարել է բազմափիգուր այլ նկարներ ևս, որոնցից սակայն մեղ առաջման հայտնի է մի պատկեր Կովկասի ապստամբ

լեռնցիների ատաման Շամիլի դեմ ոռուական զորքերի մղած պատերազմական անցքերի թեմայով:

Այդ պատկերը մեզ չի հասել: Դրա մասին մենք տեղեկանում ենք գրավոր աղբյուրներից: Նկարիչներ Գ. Բաշին-ջաղյանը և Հովհաննես 1883 թ. այցելել են Ստ. Ներսիսյանին և նրա տուն-արվեստանոցում տեսել մի մեծ նկար, որը պատկերել է պատերազմական տեսարան: Այդ մասին հետագայում նկարիչ Գր. Շարբաբչյանին գրած նամակում Գ. Բաշինջաղյանը հայտնում է. «Տեսա մի մեծ նկար Շամիլի ժամանակվա պատերազմական արկածներից մեկը»<sup>8</sup>: Այդ նույն փաստը նշում է նաև Գր. Շարբաբչյանը նկարիչ Ստ. Ներսիսյանի մասին գրած հոդվածում<sup>9</sup>:

Դժբախտաբար Ստ. Ներսիսյանի այդ պատկերի մասին մեզ հասել է ականատեսների միայն վերոհիշյալ Ժլատ խոսքը՝ մի նախադասություն, և ուրիշ ոչինչ: Սակայն կարեոր համարելով այդ պատկերի գոյության փաստը XIX դարի հայկական թեմատիկ նկարչության և նկարչի գեղարվեստական ժառանգության պատմության համար, մենք ստիպված ենք այդ Ժլատ խոսքի վերլուծման միջոցով մտովին «վերականգնել» մեզ շնչառած մեծակտավ ստեղծագործության մոտավոր բովանդակությունը՝ վկայակոչելով նաև նկարչի անձնական կյանքի ու նրա ժամանակի ռազմական անցքերը:

Դիմելով «Շամիլի ժամանակվա» պատմությանը, մենք նկատում ենք, որ Կովկասի ապստամբ լեռնցիների դեմ մղած երկարատև պատերազմի նշանակալից անցքերից մեկը եղել է 1859 թ. ամռանը Շամիլի անառիկ Գունիբ ամրոցի (առվի) գրավումը: Այդ ամրոցը շրջապատված 14 գումարտակներից հայ զորավար՝ այն ժամանակ Ապշերոնյան գնդի հրամանատար, նկարչի վաղեմի ընկեր ու բարեկամ Արշակ Տեր-Ղուկասյանը (Տեր-Ղուկասովը) «իր մի խումբ քաջերի հետ առաջինն է լինում, որ անանցանելի կածաններով ու ժայռերով բարձրանում է Գունիբ»<sup>10</sup>, գրավելով 2350 մետր բարձրության վրա գտնվող ապստամբների ամրոցը: Դա ռազմական մեծ սխրագործություն էր, որը ժամանակին հիացմունք է առաջացրել հասարակության մեջ և զինվորական շրջաններում: Ռու-

սական բանակի գլխավոր շտաբի կողմից Ա. Տեր-Ղուկասյանը, որպես «Հուսալի և պայծառ անձնավորություն» պարզեաւորվում է Գեորգիկյան շորրորդ աստիճանի շքանշանով և նշանակվում Երևանյան զորամասի հրամանատար: Կարծում ենք, որ Գ. Բաշինջաղյանի տեսած «Շամիլի ժամանակվա պատերազմական արկածներից մեկը» վերաբերում է հենց այդ սիրազործության պատկերմանը: Զի բացառվում և այն, որ Ստ. Ներսիսյանը կարող է նկարած լինել Շամիլի և նրա երեք հարյուր լեռնցի զինակիցների կողմից գնդապետ Հովհաննես (Իվան) Դավիթովիշ Լազարյանին (Լազարե) անձնատուր լինելու պահը կամ նրանց բանակցությունները Գունիբի լեռան գագաթին:

«Շամիլի ժամանակվա պատերազմական արկածներից մեկը» պատկերելով, Ստ. Ներսիսյանը, անշուշտ, առաջնորդվել է իր այն համոզմունքով, ինչ որ մի անգամ արդեն վկայակուշել ենք. «Մենք, ինչպես հայ ազգի գավակներ, պետք է որ ամենքս լավածանոթ լինենք այս տասնիններորդ դարի մեջ տված անհատների, եթե ոչ իսկ անձանց հետ, գեթ նոցակրելի գործերուն»:

Գ. Բաշինջաղյանի տեսած «մեծ նկարը», անկասկած, եղել է բազմաֆիգուր սյուժետային ստեղծագործություն՝ մարտանկարչական ժանրի մեծակտավ թեմատիկ պատկեր, որով Ստ. Ներսիսյանը, ծովանկարիշ Հովհ. Այվազովսկուց հետո, 1860-ական թթ. երկրորդ կեսում հարստացնում է մարտանկարչության ժանրը XIX դարի հայ կերպարվեստի պատմության մեջ: Իսկ մարտանկարչությունը, ինչպես հայտնի է, պատահական ժանր չէ Ներսիսյանի համար: Մարտանկարչության արվեստը նա սովորել էր Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում, ոուսական մարտանկարչության հայտնի վարպետ, ակադեմիկոս Ա. Ի. Զառերվեյդի մոտ և այդ ժամանակներից սկսած նկարել է զինված մարդկանց կերպարներ:

Պետք է նկատել, որ Ստ. Ներսիսյանը հայ նկարիչներից միակը չէ, որ անդրադառն է կովկասյան պատերազմների

թեմային: Լեզենդար Շամիլի և նրա հետ կապված մարտական անցքերի ու բնակավայրի թեմաներով մի քանի պատկերներ է նկարել նաև Հովհ. Այվազովսկին: 1868—1869 թթ. գտնվելով Կովկասում, մեծ ծովանկարիչը նկարում է Շամիլի ամրոցի՝ Գունիբ լեռան, և նրա շրջակայրի լեռնային բնության երեք պատկեր, որոնցից մեկը գտնվում է Լենինգրադում, մյուսը՝ վրացական ՍՍՀ երկրաբանական ինստիտուտում, իսկ երրորդը՝ Դաղստանի գավառագիտական թանգարանում:

Լենինգրադի Ռուսական թանգարանում գտնվող «Գունիբ լեռը Դաղստանում» մեծակտավ պատկերը ( $133 \times 169$ ) Այվազովսկին ցուցադրել է 1869 թ. Թիֆլիսում բացած իր ստեղծագործությունների ցուցահանդեսում: Ստ. Ներսիսյանն, անկասկած, տեսել է այդ պատկերը: Կովկասյան լեռների շրջապատում խոր ձորերից դեպի երկինք խոյացած Գունիբ լեռը Այվազովսկին պատկերել է բարձր դիտակետից, այն հաշվով, որ հնարավոր լինի տեսնել այդ լեռան գագաթի գոգավոր մակերեսին ծվարած Գունիբ առվլը՝ Շամիլի ամրոցը, իր միահարկ, հարթ տանիք ունեցող տներով և կանաչաղարդ լայն տարածությամբ: Այդ պատկերի առաջին պլանում պատկերված հեծյալ և հետիւն լեռնցիների մանր ֆիգուրներն ավելի հն ընդգծում վաղորդյան արկի շղթերով լուսավորված բարձր և իշխող Գունիբ լեռան վեհությունն ու մոնումենտալ բնույթը: Բացի բնանկարներից, Հովհ. Այվազովսկին նույն ժամանակ նկարում է նաև Շամիլի հավատարիմ մյուրիդների և լեռնցի մյուս ցեղերի միջև հաճախ կըրկը լընդհարումների թեմաներով պատկերներ, այդ թվում «Շիրվանցիների և մյուրիդների ընդհարումը Գունիբում» թեմատիկ պատկերը (1869), որը հայտնի է նաև «Կովկասյան լեռներում» անվամբ:

Ինչպես տեսնում ենք, Ստ. Ներսիսյանի նկարած «Շամիլի ժամանակվա պատերազմական արկածներից մեկը» մեծակտավ պատկերը եղակի չէ հայ նկարչության մեջ և համընկնում է Հովհ. Այվազովսկու վերոհիշյալ պատկերների ժամանակաշրջանին: Ուստի պետք է ընդունել, որ այդ թեմայով

Նկարչական ստեղծագործությունների երևան գալը բխում էր ժամանակի պահանջից:

Ստ. Ներսիսյանի գումանկարչական ստեղծագործությունների ցանկը մեր նշած պատկերներով, իհարկե, չի ավարտվում: Նա, անկասկած, նկարել է այլ պատկերներ ևս, որոնք մեզ չեն հասել: «Մշակ» թերթը 1884 թ. մարտի 31-ին հրապարակված մահախոսականում հայտնում է, որ Ստ. Ներսիսյանի մահից «հնառ մնացնէ նրա մի քանի յուղաներկ պատկերները»: Այդ «մի քանի յուղաներկ պատկերներից» մեկը, կարծում ենք, հենց այն «մեծ նկարն» էր, որը 1883 թ. նկարիչներ Գ. Բաշինջաղյանը և Հովհ. Քաթանյանը տեսել էին նրա տուն-արվեստանոցում, և որի մասին խոսք եղավ վերեւում: Միաժամանակ չի կադելի անտեսել ժամանակակիցների այն վկայությունը, թե Ստ. Ներսիսյանը նկարել է «զանազան պեյզաժներ» և «եկեղեցական» պատկերներ, որոնց «մեծ մասը ձրի նվիրել է շատ վանքերի ու եկեղեցիների»:

Ժամանակակից մամուլի այդ հաղորդագրությունները, անկասկած, ունեցել են իրենց իրական հիմքերը: Ուսումնասիրելով այդ հարցը, մենք հանգել ենք այն եղբակացության, որ իրոք նկարիչը կրոնական պատկերներ է նկարել և նվիրել եկեղեցիներին: Փաստն այն է, որ 1850-ական թթ. Շուշի քաղաքում եղած ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, Ստ. Ներսիսյանը նկարում է Հիսուս Քրիստոսի («Փրկչի») պատկերը և նվիրում Դաստան գյուղի հայոց եկեղեցուն: Գրող Պ. Պողոցյանի այն վկայությունը, թե «Ղարաբաղու մի քանի եկեղեցիներում եղած Քրիստոսի դաստանակը Աբգար թագավորին ուղարկած և ուրիշները» նկարիշ Ստ. Ներսիսյանի աշխատանքներն են, հիմք է տալիս ասելու, որ նկարիչը, իրոք, նկարազարդել է նաև եկեղեցական սփոռցներ, սրբիշներանձոռցիկներ, որոնք օգտագործվել են եկեղեցիներում արարողությունների ժամանակ:

Ինչ վերաբերում է բնանկարչությանը, ապա «Մշակ» թերթի 1884 թ. հաղորդագրությունն այն մասին, թե Ստ. Ներ-

սիսյանը նկարել է «զանազան պեղպամներ», պետք է ճիշտ համարել: «Խնջուցք գետափին» կենցաղային թեմայով սյուժետային մեծակտավ պատկերը, որի կեսից ավելին պատկերում է բնության տեսարան, ինչպես նաև մի քանի դիմանը՝ կարներում տեղ գտած բնանկարչական մոտիվները, պարզությունը վկայում են Ստ. Ներսիսյանի բնանկարչական ընդունակությունների մասին և միաժամանակ ենթադրել են տալիս, որ նկարիչը կարող էր ստեղծել և իրոք ստեղծել է բնանկարներ, ինչպիսին են, օրինակ, այն երեք գրաֆիկական բնանը՝ կարները, որոնք վիմագրված են Ներսես Աշտարակեցու դիմանկարի շուրջը և որոնց մասին խոսք եղավ նախորդ գլխում:

\* \* \*

Ինչպես տեսնում ենք, Հանդես գալով անցյալ դարի 30—40-ական թթ. Պետերբուրգում և այնուհետև՝ Հայոցնի միջավայրում, նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը ստեղծում է ժամանակակից ու պատմական անձանց բազմաթիվ դիմանկարներ, սյուժետային-թեմատիկ պատկերներ, բնանկարներ, եկեղեցական-ավետարանական թեմաներով նկարներ, աշխատում է գրաֆիկական նկարչության, մասնավորապես վիմագրության բնագավառում, զբաղվում է մանկավարժական ու հասարակական եռանդուն գործունեությամբ: Իր բարձրարվեստ ստեղծագործություններով նա դարձավ XIX դարի հայ կերպարվեստի սյուներից մեկը: Լինելով խորապես ժողովրդական արվեստագետ և համակված հարազատ ժողովրդին ծառայելու և հայունասիրական ջերմ ոգով, Ստ. Ներսիսյանը իր ստեղծագործություններով հարստացրեց ու մի նոր, ավելի բարձր մակարդակի հասցրեց ազգային նկարչությունը 1850—1870 թվականներին:

Ստ. Ներսիսյանի գեղարվեստական ժառանգության մեջ առաջնակարգ տեղ է գրավում դիմանկարչությունը: Մեզ հայտնի է ավելի քան 20 դիմանկար, որոնք բոլորն ել ներկայացնում են ժամանակակից հայ անձանց կամ պատմական գործիչներ: Նրա լավագույն դիմանկարները, միաժամանակ,

Ներկայացնում են դրական հերոսի կերպարներ: 'Դա կապված էր, ամենից առաջ, դարձողանի ազգային մշակույթի ընդհանուր զարգացման, ունալիզմի խորացման և նկարչի հայրենասիրական ձգտումների հետ:

Պետք է նկատել, որ XIX դարի երկրորդ կեսում հայ կերպարվեստի մեջ տեղի է ունենում դեմոկրատական ունակույթի նշանակալից առաջընթաց: Դա որոշակի արտահայտություն է գտնում դիմանկարչության մեջ: Այդ ժամանակ նկատելի փոփոխություն է կատարվում դիմանկարչության թեմատիկայում: Եթե առաջ՝ XVII—XVIII դարերում և XIX դարի առաջին կեսում, հաստոցային նկարչության մեջ պատկերվում էին գերազանցապես թագավորների, թագուհիների, պալատական վերնախավի, օտարազգի անձանց՝ գեներալների, բարձրաստիճան շինովնիկների և ունեոր պատվիրատունների դիմանկարներ (Սիմոն Բոգուշ, Աստվածատուր Սալթանյանը, Սալթանով, Մկրտչում, Հակոբ և Աղաթոն Հովնաթանյաններ, Մանասե եղբայրներ և ուրիշներ), ապա Ստ. Ներսիսյանի դիմանկարներում մուտք են գործում գլխավորապես հայ մարդիկ՝ ազգային մշակույթի, հասարակական Հոգեոր ու պետական-զինվորական առաջավոր գործիչներ: Ստ. Ներսիսյանը դառնում է այդ նոր, զարգացող դեմոկրատական ունակույթի կարկառուն ներկայացուցիչը XIX դարի հայ կերպարվեստում:

Ստ. Ներսիսյանը նկարել է գերազանցապես հայ մարդկանց: Նրա դիմանկարների մեծ մասը ներկայացնում են հայ ժողովրդին օգտակար ծառայություն մատուցած հասարակական, մշակութային, Հոգեոր ու զինվորական-պետական գործիչներ, ժամանակակից ու պատմական այնպիսի անձինք, որոնք, ինչպես նկարիչն է գրել, պետք է հավերժ Հիշվեն «այժմյան և ապագա սերնդոց սրտի ու մտաց մեջ»:

Այդ առումով Ստ. Ներսիսյանի դիմանկարչության ժանրում որոշակի դրսերվել է նկարչի միտումնավորությունը, նրա դիտավորությունը: Դա արդեն դրական, առաջադիմական քայլ էր նախորդ և նույնիսկ ժամանակակից մյուս նկարիչները:

րի համեմատությամբ։ Տալով մարդկանց սոցիալական բնութագիրը, նկարիչը, սակայն, չի անտեսել նրանց անհատականության բացահայտումը։ Այդ նպատակով նա կիրառել է դիմանկարչության տարրեր ձեւեր և տարրեր կոմպոզիցիաներ։ Ամենից ավելի նա ստեղծել է մարդկանց՝ կրծքից կամ գոտկատեղից ներկայացնող և միմյանց երեք շկրկնող կոմպոզիցիաներ, որոնց մեջ պատկերվողը երկում է ազատ, նրան բնորոշ կեցվածքով, ճակատային կամ երեք քառորդ թեքվածքով, դիտողին ուղղված հայացքով, հանգիստ, բայց ներքին ուժով լցված կենդանի արտահայտությամբ։

Ելնելով պատկերվողի առանձնահատկությունից և հաշվի առնելով նրա կատարած դերն ու նշանակությունը ժողովրդի կյանքում, նկարիչը օգտագործել է անցյալի դասական արվեստի հարուստ ժառանգությունից այնպիսի պատկերաձեւեր, որոնք ավելի հստակ ու արտահայտիչ կարող են ներկայացնել տվյալ անձնավորությանը։

Բոլոր այդ կոմպոզիցիաներում մարդիկ պատկերված լինելով բնականից, դիտողին ներկայանում են իրենց կատարյալ նմանությամբ, բնավորության առանձնահատկությամբ, ազգային տարազով և, որ կարևոր է, մարդասիրական գաղափարախոսությամբ։ Այդ պատճառով Ստ. Ներսիսյանի դիմանկարները որոշակի պատկերացում են տալիս դարաշրջանի մարդկանց և հայ ժողովրդին մատուցած նրանց օրինակելի ծառայության մասին։

Ստ. Ներսիսյանը, միաժամանակ, կարևոր ներդրում է կատարում թևմատիկ-սյուժեիտային նկարչության ժանրում։ Նրա ստեղծած ժամանակակից մարդկանց կենցաղը արտացոլող «Խնջույք գետափին» մեծակտավ պատկերը XIX դարի երկրորդ կեսի ազգային գեղարվեստական մշակույթի նշանակալից երևույթներից մեկն է։ Դա բերում է նոր բովանդակություն նկարչության մեջ, ժամանակակից կյանքը ճշմարտութեն, ոհալիստական մեթոդով վերարտադրելու արտահայտչական նոր միջոցներ։ Զգտելով կենսական ճշմարտության, նկարիչը ոչ միայն հեռանում է ակադեմիական նկարչության

սկզբունքից, այլև սուր դիտողականությամբ տիպական երե-  
վույթի պատկերման մեջ գեղարվեստորեն բացահայտում էր  
իր ժամանակի հասարակության՝ բուրժուական վերնախավի  
բարքերը, որոշ երգիծական-մերկացնող տարր դնելով առօր-  
յա ու կենցաղային պատկերում։ Հենց դա էլ հանդիսանում  
է դեմոկրատ նկարչի նորարարությունը։

Պետք է նկատնել, որ դիմանկարչի ստեղծագործություն-  
ներում կենցաղային պատկերի երևան գալը պատահական չէր։  
Դա կապված էր, ամենից առաջ, նկարչի նախասիրության՝  
ժողովրդի կյանքը և կենցաղը արտահայտելու նրա ձգտում-  
ների հետ, ինչպես նաև հայ կերպարվեստի այդ ժանրում  
եղած անցյալի որոշ փորձերի և, հատկապես, նույն շրջանում  
լայնորեն զարգացող ոռուական կենցաղային նկարչության  
հետ։

Ստ. Ներսիսյանի մյուս ստեղծագործությունները, որոնց  
մասին մենք որոշ գաղափար ենք կազմում միայն գրավոր  
աղբյուրներից, իրենց հերթին լրացնում և հարստացնում են  
XIX դարի կեսերի ազգային նկարչության պատմությունը։



ՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կ յ ա ն ք ը

Գլուխ առաջին

1 Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՊԿՊԱ), ֆ. 2, գործ. 8, թ. 3, ցուց. 1:

2 Ա. Երիցյան, «Պատմություն 75-ամյա գրյության ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի», թիֆլիս, 1898, էջ 18:

3 Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թուղթ 79, վավ. 222: Այս փաստաթուղթը, ինչպես և մի շարք արխիվային այլ նյութեր, որոնք օգտագործվել են սույն աշխատության մեջ, առաջին անգամ հրապարակել է Պ. Հակոբյանը «Երեք նորահայտ փաստաթուղթ» Ստեփանոս ներսիսյանի մասին», «Սովետական գրականություն և արվեստ», 1953, № 11, էջ 145—147, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 1, էջ 172—187 և «Գրական թերթ», 1959, № 14 հոդվածներում:

4 Խաչատոր Աբովյան, Երկեր, հատ 10, Երևան, 1955, էջ 169—170: Տե՛ս նաև Ե. Շահազիկ, Դիվան Խաչատոր Աբովյանի, հ. 2, Երևան, 1948, էջ 33—34:

5 Ե. Շահազիկ, Դիվան Խաչատոր Աբովյանի, հ. 2, էջ 33—34: Տե՛ս նաև Պ. Հակոբյան, Խաչատոր Աբովյան, Երևան, 1967, էջ 612—616:

6 ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ԿՊՊԱ), ֆ. 789, ց. 20, գ. 27, թ. 1:

7 Նույն տեղում, թ. 4:

8. Լենինգրադի մարզի պետական պատմական արխիվ, ֆ. 448, ց. 118, ց. 1, թ. 19:

9 Մ. Սարգսյան, Հայկական և ռուսական կերպարվեստի կապերը XIX—XX դարերում: (Այսուհետև՝ «Կերպարվեստի կապերը»), Երևան, 1953, էջ 44: Տե՛ս նաև Հայկական ՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (համ. դիտ. բաժ.), 1962, № 1, էջ 36:

10 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 789, ց. 20, գ. 13, թ. 1: Տե՛ս նաև Մ. Սարգսյան, Պետերովորդի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, Երևան, 1979, էջ 43:

11 Նույն տեղում:

12 «Տեղեկացա նրանից,—գրում է նկարիչ Գ. Բաշխնջաղյանը Ստ-ներսիսյանի մասին,—որ նա (Ներսիսյանը—Մ. Ս.) Այլազովսկու հետ միաժամանակ ուսանել է գեղարվեստի ակադեմիայում»: ՀՊՊ, նկարիչ Գ. Շարբարչյանի արխիվը: Նույնական տեղեկություն հայտնում են նաև գրող Պ. Պոռշյանը («Տարած», 1902 թ., № 12) և ուրիշներ, որը ճիշտ չէ:

13 Լենինգրադի մարզի պետական պատմական արխիվ, ֆ. 510, գ. 1, գ. 15, թ. 327: Տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 1, էջ 173 և 183—184: Սույն նամակը աշխարհաբար թարգմանությամբ որոշ անձություններով հրապարակել է Մ. Ղազարյանը «Սովետական ար-վեստ» ամսագրում, 1959, № 1, էջ 67—68:

14 Մ. Սարգսյան, Կերպարվեստի կապերը, Երևան, 1953, էջ 46: Տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 1, էջ 176:

15 „Художественная газета“, 1837, № 21, էջ 337.

16 „Художественная газета“, 1838, № 8, էջ 247: Տե՛ս նաև Հայ կական ՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, հաս. գիտ. բաժ., 1962, № 1, էջ 38:

17 ՍՍՀՄ ԿՊՊՍ, ֆ. 789, գ. 1, գ. 67, թ. 2—3: Տե՛ս նաև Մ. Սարգսյան, Կերպարվեստի կապերը, էջ 46:

18 ՍՍՀՄ ԿՊՊՍ, ֆ. 789, գ. 20, գ. 13, թ. 1: Տե՛ս նաև Ե. Մարտիկյան, Հայ կերպարվեստի պատմություն, Հ. 1, Երևան, 1975:

19 ՍՍՀՄ ԿՊՊՍ, ֆ. 789, գ. 1, գ. 67, թ. 1: Տե՛ս նաև Մ. Սարգսյան, Կերպարվեստի կապերը, Երևան, 1953, էջ 46:

20 ՍՍՀՄ ԿՊՊՍ, ֆ. 789, գ. 19, գ. 103, թ. 81:

21 Նույն ժամանակ՝ 1840 թ., Պետերովում լույս տեսնող գեղարվեստական պարբերականը հրապարակում է քաղվածք կայսերական գեղարվեստի ակադեմիայի ընդհանուր ժողովի մատյանից, որտեղ 1840 թ. սեպտեմբերի 29-ին գրանցվել է: «Ազատ նկարչի կոչումով հաստատվել են Ալ-Ռիյմերը, Ալ. Զարեկան, Վ. Մակուշերը, Իվ. Վելտները, Ն. Տրիֆոնովը, Կ. Բուշինը, Յա. Կապեկինը, Ի. Օրլովը, Իվ. Զինովերը, Ստեփան Ներսեսովը, Պ. Լիմանը, Մ. Կուրտը, Ալ. Ժոմակովը, Վ. Մակը, Ֆ. Գալուտին, Գ. Շիֆերեց-նը, Իվ. Կլուպկինը, Մ. Սաժանը, Կ. Կրուգովիսինը, Պ. Դրուժինինը, Գ. Գարտմանը»: „Художественная газета“, 1840, № 21, էջ 3:

22 ՍՍՀՄ ԿՊՊՍ, ֆ. 789, գ. 20, 1835—1840, գ. 27, թ. 5:

23 Նույն տեղում, թ. 6:

24 Ե. Զարհնցի անվան գրականության և արվեստի թանգարան, Խ. Աբովյանի ֆոնդ, № 303: Այս նամակը հրապարակվել է «Դիվան Խաչատրու Աբովյանի», Հ. 2, 1948, էջ 171—172:

25 ՍՍՀՄ ԿՊՊՍ, ֆ. 789, գ. 4, թ. 99: Տե՛ս նաև «Սովետական գրականություն», 1953, № 11, էջ 14, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 1, էջ 176:

26 «Սովետական գրականություն», 1953, № 11, էջ 14:

## Գլուխ Երկրորդ

- 1 Կ. Մարկս, Փ. Թհրելեց, Ըօպկա, 1933, հ. 10, էջ 555:
- 2 Ե. Զարենցի անվ. գրակ. և արվ. թանգարան, Մ. Էմիլինի ֆոնդ:
- 3 Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա դուռը և անդամական հայոց հոգուոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 479:
- 4 Պ. Պոռշյան, Նկարիչ Ստ. Ներսիսյան: «Տարած» ամսագիր (Թիֆլիս), 1902, հ. 12, էջ 20:
- 5 Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Երիցյանի ֆոնդ, թղթ. 148, վավ. 246: Այս նամակը առաջին անգամ հրապարակվել է նկարչի մահից 4 տարի հետո՝ 1888 թ. «Արձագանք» շաբաթաթերթում, հ. 2, էջ 26—27:
- Տե՛ս նաև՝ Ստ. Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 109—110:
- 6 Ա. Երիցյան, նշվ. աշխ., էջ 479:
- 7 Մաշտոցի անվան Մատենադարան, Զեռագիր ժողովածու, ձեռ. 3751, էջ 1040—1043: Տե՛ս նաև նույն տեղում, էջ 1041:
- 8 Լեռ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 14, 23:
- 9 Լեռ, նշվ. աշխ., էջ 242:
- 10 Նույն տեղում, էջ 238:
- 11 Նույն տեղում, էջ 247:
- 12 Նույն տեղում:
- 13 Նկարիչ Ստ. Ներսիսյանի նամակը Շուշիից: Տե՛ս «Կոռոնկ հայոց աշխարհի», ամսագիր, Թիֆլիս, 1861, էջ 298:
- 14 «Մասեաց Աղավնի», Փարիզ, 1855, էջ 28:
- 15 Լեռ, նշվ. աշխ., էջ 253:
- 16 Պ. Պոռշյան, Մոռացված գերեզման, «Տարած», 1902, հ. 12, էջ 20—21:
- 17 Ե. Զարենցի անվան գրակ. և արվեստի թանգարան, փ. 7, հ. 183—184: Տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, էջ 178—180:
- 18 «Կոռոնկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1861, էջ 298—301:
- 19 Նույն տեղում, էջ 298:
- 20 Նույն տեղում, էջ 301:
- 21 Ե. Զարենցի անվ. գրակ. և արվ. թանգ., Պ. Ախվերդյանի արխիվ, հ. 184: Տե՛ս նաև «Բանբեր...», էջ 181:
- 22 Մ. Մուրադյան, Պետրոս Շանշեան, Թիֆլիս, 1898, էջ 76—77, 85:
- 23 Մաշտոցի անվան մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թուղթ 191, վավ. 96: Տե՛ս նաև «Բանբեր...», էջ 182:
- 24 Պ. Պոռշյան, նշվ. հոդվածը, էջ 21:
- 25 Լեռ, նշվ. աշխ., էջ 101:
- 26 Մ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 85:
- 27 Պ. Պոռշյան, նշվ. հոդվածը, էջ 21:

- 28 *Ш. Цхетия*, Армения в Тифлисе в шестидесятых годах, *Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես»*, 1956, № 3, էջ 161—167:
- 29 *Մաշտոցի անվան մատենագրաւուն*, Կաթողիկոսական դիվան, թղթ. 231, վավ. 109: *Տե՛ս նաև «Բանքեր...»*, էջ 182:
- 30 *ՀՊՊ*, Ստ. Ներսիսյանի արխիվ: *Տե՛ս նաև ՀՍԸՀ ԳԱ. Տեղականի գողացը*, 1962, № 1, էջ 40:
- 31 «*Տարածական*», 1892, № 12, էջ 177:
- 32 *ՀՊՊ*, նկարիչ Գր. Շարբարչյանի արխիվ: *Տե՛ս նաև Գր. Շարբարչյանի գողացը*, «*Արվեստ*», 1927 թ., № 7—8, էջ 9:
- 33 նույն տեղում:
- 34 «*Մշակում*», 1884, № 41, մարտի 31:
- 35 նույն տեղում:
- 36 «*Արվեստ*», Երևան, 1927, № 7—8, էջ 9:
- 37 „*Կավազ*” թերթ, Թիֆլիս, 1884, № 257:

### Ս Ա Ե Ղ Ճ Ա Գ Ո Ր Ճ Ո Ւ Ր Յ Ո Ւ Բ Ր

- 1 С. Л. Степанян, Дореволюционное искусство Армении. См. «Очерки по истории искусства Армении», М., 1939, էջ 67:
- 2 Ռ. Շիշմանյան, Բնանկարը և հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 84:
- 3 Т. Иzzайлова, М. Айвазян. Искусство Армении, М., 1962, էջ 144—145:
- 4 Искусство стран и народов мира, Մ., հ. 1, 1862, էջ 121:
- 5 Всеобщая история искусств, հ. 5, 1964, էջ 255:
- 6 Հայկ. ՍՍՀ ԳԱ. «*Տեղեկագիր»* (հաս. գիտ. բաժ.), նշան. ցուցակը, էջ 49—50:
- 7 Հայաստանի պետական պատկերասրահի կատալոգ, Երևան, 1965, էջ 138:
- 8 Ե. Մարտիկյան, նշան. աշխա., էջ 175—187:
- 9 «Очерки по истории армянского изобразительного искусства», 1979, էջ 119: Այսուհետեւ՝ «Очерки».
- 10 Մ. Սարգսյան, Կերպարվեստի կապերը, Երևան, 1953, էջ 36—37, 57—58:
- 11 Մ. Սարգսյան, Պետերոսրդի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, Երևան, 1979, էջ 47—54:
- 12 «Очерки», էջ 119:

### Դ Լ Ո Ւ Խ Ա Պ Ա Ջ Ի Ւ

- 1 Թանգարանում պահպում են այդ դիմանկարների երկու օրինակ, որոնք դուրսամատյանում գրանցված են 386 և 387 համարների տակ:

## Գլուխ Երկրորդ

1 ՀՊՊ, Նկարիչ Գր. Շարբարչյանի արխիվ:

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1232, թ. 91: Այս փաստաթուղթը մեզ սիրով տրամադրել է պատմական արխիվի դիրեկտոր ընկ. Գ. Հարությունյան նը: Տե՛ս նաև Մ. Սարգսյան, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, էջ 48—49:

3 ՀՍՍՀ ՊԱ տեղեկագիր (հաս. գիտ. բաժ.), 1962, № 1, էջ 50:

4 Պ. Հակոբյան, Խաչատրու Արովյան, Երևան, 1967, էջ 681:

5 Վ. Պարսամյան, Վ. Բեհրութով, Երևան, 1943, էջ 34:

6. Խ. Արովյան, Վերը Հայաստանի, 1940, էջ 144:

7 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1232, թ. 91—92: Տե՛ս նաև Մ. Սարգսյան, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան և հայ նկարիչները, էջ 49:

8 Ա. Հովհաննեսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Գիրք Ա, Երևան, 1955, էջ 42—43:

9 Երկար ժամանակ այդ պատկերը կախված է եղել իշխան Ս. Վորոնցովի պալատի գրադարանի պատից: 1976 թ. Հարատարակված Ղրիմի Ալուակայի պալատ-թանգարանի կատալոգում տպված է այդ գրադարանի լուսանկարը ներսեսի պատկերով:

10 «Արվեստ», 1927, Երևան, № 7—8, էջ 3:

11 «Նկարեց և փորագրեց քարի վրա ներսեսովը»:

12 «Մշակ», Թիֆլիս, 1880:

13 «Մասիս», Կ. Պոլիս, 1880, № 2555 և 2556:

14 Գ. Զմշլյան, Իմ Հիշատակարանը, Երևան, 1953, ծան., էջ 218:

15 Պ. Պոռշյան, Հուշեր, Երևան, 1940, էջ 171:

16 Словарь кавказских деятелей, Թիֆլիս, 1890, էջ 40:

17 XIX դարում (և այնուհետեւ) այդ դիմանկարներից նկարվել են պատճեններ, վիմագրությամբ բազմացվել ու տարածվել են պարոցներում, կուլտուր-լուսավորական հիմնարկներում և ընտանիքներում: Պ. Պոռշյանի վկայությամբ, գրանց պատճենները «զարդարում են Թիֆլիսի վանքի մայր եկեղեցու ավագ սեղանի աջ և ձախիան սանդուխտների պատերը»: «Տարավ», 1902, № 3, էջ 20:

18 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 292:

19 «Աղբյուր», Թիֆլիս, 1883, № 12, էջ 46:

20 «Աղբյուր», Թիֆլիս, 1886, № 12, էջ 10—11 (Հավելված):

21 Նույն տեղում, № 11, էջ 2, № 12, էջ 11 (Հավելված):

22 Նույն տեղում, № 11, էջ 2 (Հավելված):

23 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 139, գ. 1232, թ. 91—92:

24 Նույն տեղում:

25 Ան, Հովսեփ Արդության, Թիֆլիս, 1902:

26 ՀՊՊ, Նկարիչ Գ. Շարբարչյանի արխիվ:

27 «Արձագանք», Թիֆլիս, 1894, էջ 77:

## Պալմ Երբարդ

1 «Խնջույք պետափին» պատկերը ժամանակին գնել է մեծատուն Համբարձում Սանասարյանը և տեղափոխել Կարին քաղաքում (Արևմտյան Հայաստան) իր հիմնադրած Սանասարյան դպրոցը: Պատկերը երկար ժամանակ կախված է եղել այդ դպրոցի ուսուցչանոցի պատին: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նկարիչներ Ս. Խաչատրյանի և Գր. Շարբարչյանի ջանքերով մեծ դժվարությամբ տեղափոխվել է Երևան և 1921 թ. ցուցադրվել «Հայ արվեստագետների լնկերության» երրորդ ցուցահանդեսում, որտեղից էլ անցել է նորաստեղծ պետական թանգարանի գեղարվեստական բաժինը:

2 Ռ. Շիշմանյան, նշվ. աշխ., էջ 91:

3 И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения к Российской империи, СПб., 1852, стр. 895—896.

4 Նույն տեղում:

5 «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1911, № 21, էջ 234:

6 Մաշտոցի անվան մատենադարանում պահպան է 1765 թ. արտագըրված ձեռագիր երգերի ժողովածու, որի մեջ նաղաշ Հովհաննի (1662—1722) «Վրաստանի գողալները» բանաստեղծության դիմաց՝ հանդիպակաց էջում նկարված է նույնական բովանդակությամբ մանրանկար-իլլուստրացիա: Նույն ժողովածուի մի այլ էջում պատկերված է կանաչավիտ բնության գրկում մի խումբ տղամարդկանց կերպարում և նվազակցության տեսարան: Այդ մանրանկար պատկերներում արտացոլում է գուել ժամանակակիցների կենցաղը:

7 Վ. Պարսամյան, Մ. Սարգսյան, Ռուս նկարիչների աշրերով, Երևան, 1978:


8 ՀՊՊ, Նկարիչ Գր. Շարբարչյանի արխիվ:


9 «Խորհրդային արվեստ», Երևան, 1927, № 7—8, էջ 3—4:

10 Վ. Պարսամյան, Գեղեցիկ Ա. Հ. Տեր-Ղուկասով, Երևան, 1942, էջ 5:

## ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Երիտասարդի դիմանկար: 1845, ( $67 \times 80$ ), ՀՊՊ, Երևան:
2. Մելիք-Աղամյանի դիմանկարը ( $43 \times 34$ ), ՀՊՊ, Երևան:
3. Տղամարդը ծխամունով: 1848, ( $115 \times 160$ ), Վրաց կերպ. քանգարան, Թբիլիսի:
4. Մովսես-Արդուրյան-Երկայնաբազուկի դիմանկարը: 1849, ( $49 \times 37$ ), ՀՊՊ, Երևան:
5. Թարսեղ Թեհրուրյանի դիմանկարը: 1857, ( $125 \times 95$ ), ՀՊՊ, Երևան:
6. Ներսէս կարողիկոսի դիմանկարը: 1850-ական թ., ( $177 \times 114$ ), ՀՊՊ:
7. Ներսէս կարողիկոսի դիմանկարը: 1870-ական թ., ՀՊՊ, Երևան:
8. «Ի յիշատակ յիսուն տարուայ զոյուրեան Ներսիսեան հայոց ազգային դպրոցին Տիֆլուստայ»: Վիմագրուրյուն, 1870-ական թ., ՀՊՊ, Երևան:
9. Ներսէս կարողիկոս: Վիմագրուրյուն, ՀՊՊ, Երևան:
10. «Լիճ և անտառ»: Հատված վիմագրուրյունից, 1870-ական թ., ՀՊՊ, Երևան:
11. «Լիճ սրբյ էջմիածնի»: Հատված վիմագրուրյունից, 1870-ական թ., ՀՊՊ, Երևան:
12. «Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոց»: Հատված վիմագրուրյունից, 1870-ական թ., ՀՊՊ, Երևան:
13. Գրիգոր Եղմիարյանի դիմանկարը: 1865, ( $65 \times 47$ ), Վրակ. և արվեստի քանգարան, Երևան:
14. Սոֆյա Մելիք-Նազարյան-Եղմիարյանի դիմանկարը: 1860-ական թ., Վրակ. և արվեստի քանգարան, Երևան:
15. Գ. Ալիմյանի դիմանկարը: ( $42 \times 38$ ), Վրաց. կերպարվեստի քանգարան, Թբիլիսի:
16. Կանացի դիմանկար: ( $47.5 \times 39$ ), ՀՊՊ, Երևան:
17. Անհայտ կնոջ դիմանկար: ( $78.5 \times 62$ ), Արեւելքի ժողովուրդների արվեստի պետական քանգարան, Մոսկվա:
18. Եղիսաբէթ Արուլյանի դիմանկարը: 1860-ական թ., ( $89 \times 71$ ), ՀՊՊ, Երևան:
19. Մերսուալ Մաշտոց: 1882, ( $106 \times 88$ ), Ամենայն հայոց կարողիկոսի վեհաւան, Էջմիածին:







1. Երիտասարդի դիմանկար: 1845



2. Մելիք-Աղամյանի դիմանկարը




3. Տղամարդը ծխամուրնով: 1848:




4. Մոլսես Արդուրյան-Երկայնաբազուկի դիմանկարը: 1849




5. Բարսեղ Բեհբուրյանի դիմանկարը: 1857



6. Ներսես կարողիկոսի դիմանկարը: 1850-ական թթ.




7. Ներսես կարողիկոսի դիմանկարը: 1870-ական թթ.



8. «Ի յիշատակ յիսուն տարուայ գոյութեան ներսիսեան հայոց ազգային դպրոցին Տփխիսուայ»: 1870-ական թ.




9. Ներսես կարողիկոս: Վիմագրություն, 1870-ական թթ.





10. «ՀՅԱՆԻ ՎՐԱ» ՀՅԱՆԻ ՎՐԱ

Էկիսանսահորդի զոխուց : «Վշտը վրձկ նման ցի» 11



12. «Երբուրաց պլտական սահմարդիկ շատութեան»:






13. Գրիգոր Խղմիրյանի դիմանկարը: 1865




14. Սովորական Մելիք-Նազարյան-Եղմիշյանի դիմանկարը: 1860-ական թթ.



15. Գ. Ակիմյանի դիմանկարը




16. Կանացի դիմանկար




17. Անհայտ կնոջ դիմանկար.




18. Եղիսաբեր Աբովյանի դիմանկարը




19. Սեւոսյ Մաշտոց: 1882




20. Մեսոն Մաշտոց: Վիմագրություն



21. Սահմակ Պարբե: 1882




22. Հովհաննի Արդության-Երկայնաբազուկի դիմանկարը




23. Տղամարդու դիմանկար




24. Անհայտ տղամարդու դիմանկար




25. Խճռվի գլուխիկ: 1865—1869



26. Նատյուրմորտ ինքնաեռով: Հատված պատկերից



27. Նատյուրմորտ, ծաղկեփունչ: Հատված պատկերից



28. Բնության Համակառնությունը

Բ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Ի Թ Յ Յ Ո Ւ Ի Ն

Ներածություն	.	.	.	.	.	5
Կյանքը	.	.	.	.	.	7
Գլուխացին. Մանկության և տաման տարիներ (1815—1845)	.	.	.	.	.	7
Գլուխ Եվլուրդ. Ստ. Ներսիսյանի մանկութաբժական և հասարակական գործունեությունը (1846—1884)	.	.	.	.	.	36
Ստեղծագործություններ	.	.	.	.	.	69
Գլուխացին. Ստ. Ներսիսյանի վաղ շրջանի ստեղծագործությունները (1835—1845)	.	.	.	.	.	72
Գլուխ Եվլուրդ. Դիմանկարները (1848—1884)	.	.	.	.	.	79
Գլուխ Եվլուրդ. Ստ. Ներսիսյանի թևմատիկ-սցուժետային ստեղծագործությունները	.	.	.	.	.	122
Մանուքագրություններ	.	.	.	.	.	140
Լուսանկարների զանկ	.	.	.	.	.	146

ՄԻԱՅՍ ԱԱՐԴԱՐ ԱԱՐԴԱՅԱՆ

## ԱՏԵՓԱՆՈՍ ՆԵՐՍԻՄՅԱՆ

Հարատ. խմբագիր Ս. Ե. Գուլասարյան  
Նկարչական ձևավորումը Օ. Ա. Սահարյանի  
Գեղ. խմբագիր Հ. Ե. Գործակալյան  
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարույրյանյան  
Մրցագրիչ Ա. Լ. Սահակյան

Հանձնված է շարլաքի 4.09.1984 թ.: Ստորագրած է տպագրության  
20.02.1985 թ.: ՎՃ 06644; Զափը  $84 \times 108^{1/32}$  թուղթ № 1: Տառափակակ  
գրի սովորական, բարձր տպագրություն, Պայմ. 9,45 մամ., տպագր. 9,25-  
16 ներդիր մամուլ ներկ. մամուլ 9,45: Հրատ-հաշվարկ. 7,59 մամուլ:  
Տպարանակ 2500: Հրատ. № 6217: Պատվեր № 691: Գինը 1 լ. 50 կ.ր  
ՀԱՅ ԳԱ Հրատարակություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան

Издательство АН АрмССР, 375019, Ереван,  
пр. М.

пр. Маршала Баграмяна, 24г.  
ՀԱՅՀ ԳՐԱՄԱՐՁԱԿԱՆ ՊՐԵՍԻ տպարան, 378310, ք. Էջմիածին:  
Типография Издательства АН АрмССР, 378310, г. Эчмиадзин.

